452

Upravlenie tsentrobanka

p 4-14

1911

2(075)
U-15

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ – ՈՒԽՏ

ԱՇԽ. ՍԱՀԱԿ Ա. ԲՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ս99/257

ԱՐՄ.
Հ-8432
2(075)
Ս-15

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա.ՇԽ. ՍԱՀԱԿ Ա. ԲՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵԱՆ ԹԻՓԼԻՍ 1911

44928-աև.

29457-63

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.

Ի Տէր Հանգուցեալ Սրբազնագոյն Կաթողիկոսէ Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։

Ընթերցեալ զայս գրքոյկ «Սրբազան պատմութիւն Հին-Ուխտի», չգտի ինչ ընդդէմ ուղղոյ վարդապետութեան եկեղեցւոյ, ուստի թոյլատրէ տպագրութեամբ ի լոյս ընծայել։ Ի 27 ապրիլէ 1890 ամի ի Ս. Էջմիածին։

Նախագահ տպարանական ժողովոյ՝

Արիստակէս եպիսկոպոս։

Տ. Կ.

Ա Զ Դ

«Սրբազան պատմութիւն Հին Ուխտի» նիւթի մշակութիւնը տպագրուած է առանձին—Դասագիրք կրօնի Հին-Ուխտի անուանով։

Մեր կարծիքով աշակերտաց ձեռք սրբազան պատմութեան մի առանձին դասագիր տալն աւելորդ է, ամենաընտիր և նպատակայարմար դասագիրը հէնց Սուրբ գիրքը՝ քնագիրն է։ Բայց որովհետև մեր մէջ այդ քանը մի քանի դժուարութիւններ ունի, չասեմ անկարելիութիւններ, մանաւանդ ստորին դասատանց համար —զորօրինակ լեզուն, գրքի ստուարութիւնը, գինը, հազուագիւտ լինելը, ուստի, ի հարկէ ստիպեալ՝ մեր նպատակին հասնելու համար՝ այսինքն մեր ցանկացած կրօնական-բարոյական իմաստները սաներին հաղորդելու համար, քաղուածօրէն ընտրեցինք այս նիւթերը՝ ըստ կարելւոյն պահպանելով քնագրի ոճը։

Տայ Աստուած, որ հասակով և սրտով մանուկները նոյնչափ սիրեն այս գրքոյկը՝ որչափ և սրա քնագիրը։

Ս. ք. Ս.

Տփխիս 1887։

Հին Ուխտի առաջին տպագրութիւնը տեղի ունեցաւ տասն և ինն տարի առաջ։ Մի տարուց ետոյ սրբազան Օրմանեանի առաջարկութեամբ փոխադրուեց տաճկահայ բարբառի, որ ներկայումս հօթերորդ տպագրութեան է արժանացել։

Իմ վաղեմի ցանկութիւնն էր պատկերազարդ հրատարակել սոյն դասագիրը, բայց այդ ցանկութիւնը այսօր միայն հնարաւոր եղաւ իրագործել։ Սա մի փորձ է, կաչխատենք հետեւեալ դասագրերը ևս հետզհետէ պատկերազարդ հրատարակել՝ աւելի կատարելագործուած թէ քանակի և թէ որակի կողմից։

Մանկավարժական տեսակէտով աւելի նպատակայարմար կլինէր, եթէ պատկերները դասագրի մէջ զետեղուած չլինէին, այլ առանձին տպագրուած—մեծ ոլորքով և գունաւոր, որպէսզի ամեն մի աւանդուած նիւթ հետզհետէ պատկերով աւելի լուսաբանուէր։ Բայց որովհետև մի այդպիսի գործ նիւթական խոշոր ծախսի հետ կապուած է, հետևաբար գպրոցների և մանաւանդ աշակերտների համար ծանր, եթէ չասենք անկարելի մի հանդամանք կլինէր, ուստի ընտրուց չարեցաք փոքրագոյնն ընտրելով, դասագրի մէջ զետեղեցինք։

Պատկերազարդ դասագրեր քիչ ունենք, եղածներն էլ մեծաւ մասամբ առանց ընտրութեան են՝ թէ նիւթի և թէ մանաւանդ դպրարուեստի կողմից։ Այդ դասագրերի մէջ յաճախ կարելի է այնպիսի պատկերների պատահել, որոնց դոյութիւնը ցանկալի չէր երևան հանել, որոնք ոչինչ չբացատրելուց զատ՝ ոչ ցանկալի զգացմունքներ են յառաջ բերում։ Հին-Ուխտի նիւթն այնքան առատ է, որ մենք սովորական պատկերներից զատ՝ կարող ենք այսպիսի կարևոր դաղափարների վրայ ևս մատնանիշ լինել, զոր. ֆիզիքական քաջութեան գաղափար (Սամփսոն), ճշմարտութիւնը ճակատին ասել (Նաթան), արդարադատութիւն (Սողոմոն)... Ինչպէս նիւթը մեր ձեռքում միջոց է դէպի նպատակ դիմելու—նիւթից բարոյական-կրօնական գաղափարներ ձեռք բերելու, այսպէս և պատկերները պէտք է նիւթի աղօտ, դժուար տեղերը բացատրեն, լուսաբանեն։ Օրինակի հա-

մար Լուսաւորչի տեսիլը թէև պատմուածն սահները, բայց ես հաստատ համոզուած եմ, որ նրանք այն չեն ներկայացնում իրանց, ինչ որ իրողութիւնն է։ Ես կասկածում եմ նոյն իսկ, որ չատ կրօնուսոյցների համար նիւթն ամբողջովին պարզ չէ, այն ինչ պատկերը միանգամայն պարզ և իրական հասկացողութիւն կտար (տես իմ դասատետր կրօնի Բ. տարի)։ Եւ կամ լաճախակի լիշում է վկայութեան խորան, Սողոմոնի տաճար, տապանակ ուխտի, խնկոց, առաջաւորաց սեղան, եօթն ջահեան ոսկէ աշտանակ, զաւիթ, սրբութիւն, սրբութիւն սրբոց... այս բոլորը պատկերով միայն հնարաւոր է պարզել։

Պատկերները նիւթը պարզելուց զատ՝ պէտք է սանների մէջ նաև գեղարուեստական ճաշակ զարթեցնեն, ուստի և պիտի աշխատել, որ դրանք նշանաւոր հեղինակների ընտիր գործեր լինեն։ Իբրև փորձ, ըստ չափու կարողութեան, աշխատել եմ իմ դրաւոր բացատրած ակզբունքները և գործնականապէս իրագործել։

Յուսով եմ որ Հին-Ուխտի պատկերազարդ հրատարակութիւնը ևս ունենայ իւր բարեկամները, որպիսին ունեցել է նրա նախկին տպագրութիւնները։

Ս. ա. քհ. Ս.

Տփխիս
28 Մարտի 1908 թ.
24 Ապրիլի 1911 թ.

Ա. ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐ

1. ա. ԱՇԽԱՐՀԻՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ։

Ա. Աստուած սկզբում յաստեղծեց երկինքն ու երկիրը։ Երկիրը խաւարով էր ծածկուած։ Աստուած ասաց. «Թող լոյս լինի» և իսկոյն լոյս եղաւ։ Աստուած բաժանեց լոյսը խաւարից. լուսոյ անունը դրաւ ցերեկ, իսկ խաւարինը՝ գիշեր։ Այսպէս ցերեկից ու գիշերից կազմեց առաջին օրը։

Բ. Աստուած ասաց. «Թող հաստատութիւն լինի, որպէսզի բաժանէ վերևի ու ներքևի ջրերը միմեանցից»։ Հաստատութեան անունը դրաւ երկինք։ Այսպէս անցաւ էլի մի ցերեկ և մի գիշեր ու դարձաւ մի օր՝ երկրորդ օր։

Գ. Աստուած ասաց. «Թող ցամաքը բաժանուի ջրերից»։ Այսպէս էլ եղաւ։ Աստուած ցամաքի անունը դրաւ երկիր, իսկ ջրերինը՝ ծով։

Աստուած ասաց. «Թող երկրիս վրայ կանաչեն ծաղկները և ամենքն էլ պտուղ տան։ Այսպէս էլ եղաւ։ Անցաւ էլի մի գիշեր և մի ցերեկ ու դարձաւ մի օր՝ երրորդ օր։

Դ. Աստուած ասաց. «Թող երկնքի վրայ լուսաւորներ երևան ու երկիրը լուսաւորեն»։ Աստուած պատրաստեց մի մեծ լուսաւոր ցերեկը և մի փոքր լուսաւոր գիշերը կառավարելու համար։ Բացի դրանցից ստեղծեց նաև շատ աստղեր։ Այսպէս անցաւ էլի մի ցերեկ և մի գիշեր ու դարձաւ մի օր՝ չորրորդ օր։

Ե. Աստուած ասաց. «Թող ջրերը լցուեն ձկներով, իսկ օդը՝ թռչուններով»։ Այն ժամանակ ջրերը լցուեցան բազմաթիւ կենդանիներով, իսկ օդի մէջ թռչում էին ամեն տեսակ թռչուններ։ Այսպէս անցաւ էլի մի գիշեր և մի ցերեկ ու դարձաւ մի օր՝ հինգերորդ օր։

Զ. Աստուած ասաց. «Թող երկրիս վրայ լինեն չորքոտանի կենդանիներ—գազաններ և գոռոններ»։ Այսպէս էլ եղաւ։

1. բ. ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ա. Աստուած ասաց. «Եկէք մարդ էլ ստեղծենք, որ տէր լինի բոլոր ստեղծուածներին։

Բ. Աստուած ստեղծեց մարդուն իւր պատկերի նման—վեր առաւ երկրից հող ու շունչ փչելով՝ հոգի տուաւ և անունը դրաւ Ադամ։

Գ. Աստուած ասաց. «Լաւ չէ մարդու համար մենակ լինելը, ստեղծենք Ադամի նման մէ-

կը, որ նրան օգնական լինի»։ Այն ժամանակ Աստուած Ադամին քնացրեց. հանեց կողերից մինն ու նրա համար մի օգնական՝ կին ստեղծեց և անունը դրաւ Եւա։ Աստուած օրհնեց նրանց և ասաց. «Աճեցէք բազմացէք և լցրէք երկիրն ու

տէր եղէք բոլոր ստեղծուածներին»։

Դ. Այսպէս Աստուած երկինքն ու երկիրը վեց օրում ստեղծեց, իսկ եօթներորդ օրը հանգստացաւ և պատուիրեց սուրբ պահել այդ օրը։

2. ԴՐԱԽՏ

Աստուած եդեմ երկրի մէջ մի պարտէզ տընկեց՝ անունը Դրախտ դրաւ։ Պարտէզը զարդարեց ամեն տեսակ ծառերով։ Ադամին ու Եւային այդ տեղ բնակեցրեց, որ մշակեն և պահպանեն։

Պարտիզի մէջ տեղում երկու ծառ կար՝ մինի անունն էր «ծառ կենաց», իսկ միւսինը՝ «ծառ գիտութեան բարւոյ և չարի»։

Աստուած պատուիրեց նրանց և ասաց. «Պարտիզի բոլոր ծառերի պտուղներից կարող էք ուտել, բացի «ծառ գիտութեան բարւոյ և չարի» ծառի պտղից — եթէ նրանցից ուտէք, իսկոյն կմեռնէք»։

3. ՊԱՏՈՒԻՐԱՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ

Ա. Օձը բոլոր կենդանիներից իմաստունն էր. նա եկաւ Եւայի մօտ և ասաց. «Ուղիղ է, որ Աստուած ասել է ձեզ, թէ պարտիզի բոլոր ծառերի պտուղներից չուտէք»։ Կինը պատասխանեց օձին. «Ո՛չ, մի ծառի պտղից միայն պէտք է չուտենք, եթէ ուտենք, կմեռնենք»։ Օձը նորից

խօսեց կնոջ հետ և ասաց. «Դուք չէք մեռնի, ընդհակառակն՝ եթէ ուտէք, Աստուած կդառնաք»։

բ. Կինը հաւատաց օձին և կերաւ պտուղը։ Նա մարդուն ևս տուաւ. նա էլ առաւ և կերաւ։

գ. Այս բանից ետոյ լսեցին Աստծու ոտի ձայնը պարտիզի մէջ, վախեցան, ամաչում էին, դրա համար էլ թաք կացան։ Աստուած ձայն տուաւ Ադամին. «Ո՞րտեղ ես»։ Ադամը պատասխանեց. «Վախենում եմ, դրա համար էլ թաք կացայ»։ Աստուած ասաց. «Չլինի՞ թէ այն ծառի պտղից կերար»։ Ադամը պատասխանեց. «Քո ստեղծած կինը տուաւ ինձ, ես էլ կերայ»։ Աստուած ասաց կնոջը. «Այդ ի՞նչ ես արել»։ Կինը պատասխանեց. «Օձը խաբեց ինձ»։

դ. Այն ժամանակ Աստուած պատժեց մեղաւորներին—նա ասաց օձին. «Անիծեալ լինիս բոլոր կենդանիների մէջ. *փորիդ վրայ սողաս և հող ուտես քո ամբողջ կեանքում*»։ Ետոյ կնոջն ասաց. «*Ցաւով որդի ծնես*»։ Վերջն Ադամին ասաց. «*Կերած հացդ քրտինքով ծնդբ գնաս՝ մինչև որ նորից հող դառնաս*»։

Սրանից ետոյ Աստուած Ադամին ու Եւային դրախտից դուրս արաւ։ Նրանք սկսեցին հողագործութիւնով պարապել։ Դրախտի դրանը սուրը ձեռին մի պահապան հրեշտակ նշանակեց։

4. ԿԱՅԷՆ ԵՒ ԱԲԷԼ

ա. Ադամ և Եւան երկու որդի ունեցան—առաջինի անունն էր Կայէն, իսկ երկրորդինը՝ Աբէլ։ Աբէլը խաշնարած էր, իսկ Կայէնը երկրագործ։ Մի անգամ երկու եղբայրներն Աստծուն զոհ բերին—Կայէնը իւր դաշտի պտուղներից, իսկ Աբէլը՝ գեղեցիկ, պարարտ գառներից։ Աստուած Աբէլի զոհն ընդունեց, իսկ Կայէնինը՝ ոչ։ Այս բանի վրայ Կայէնը խիստ բարկացաւ։ Աստուած ասաց. «Կայէն, ի՞նչու ես բարկացել, եթէ բարի բան գործես, Աստուած կսիրէ քեզ, իսկ եթէ չար՝ կպատժուես»։

բ. Ջնայելով որ Աստուած նրան զգուշացրեց, բայց նա ոխը սրտից չհանեց և մի անգամ դաշտումը *խփեց Աբէլին ու սպանեց*։

Այն ժամանակ Աստուած հարցրեց Կայէնին. «Ո՞ւր է Աբէլ եղբայրդ»։ Կայէնը կոպիտ կերպով պատասխանեց. «Չգիտեմ, մի՞թէ ես նրա պահապանն եմ»։ Աստուած ասաց. «Քո եղբօր արիւնը գանգատւում է ինձ. անիծեալ լինիս. թափառական շրջես երկրի վրայ, այսուհետև քո մշակած երկիրը պտուղ չտայ քեզ։

Կայէնը փախաւ, ուրիշ երկիր գնաց և իւր ամբողջ կեանքում խիղճը տանջում էր նրան։

Աստուած նրանց մխիթարելու համար՝ մի նոր որդի պարգևեց, որին անուանեցին Սէթ։ Սրա որդիները բարեպաշտ մարդիկ էին։

5. ՋՐՀԵՂԵՂ

ա. Կայէնի և Սէթի որդիները երկրիս վրայ կամաց կամաց բազմանում էին։ Նրանք հեռըզհեռէ վատանում էին—մի մարդ միայն Սէթի ցեղից՝ անունը Նոյ, արդար էր, իսկ մնացածը բոլորն էլ ժռռացել էին Աստծուն։ Աստուած 120 տարի համբերեց այս բաներին, բայց երբ նրանց չարութիւնը չափից անցաւ,

բ. Աստուած ասաց Նոյին. «Ես կամենում եմ ջրով պատժել չար մարդկանց. դու քեզ համար մի մեծ տապան շինիր՝ կպրով ծեփիր թէ դրսից և թէ ներսից։ Տապանի մէջ կմտնես դու և քո որդիները. հետդ կվերցնես ամեն տեսակ կենդանիներից մի-մի զոյգ. նոյնպէս ամեն տեսակ կերակուր՝ թէ քեզ և թէ կենդանիների համար»։ Նոյը էլ այնպէս արեց։

գ. Երբ նաւը պատրաստ էր, Աստուած ասաց Նոյին. «Տապան մտիր դու և քո ընտանիքը»։ Նոյը էլ մտաւ տապան իւր երեք որդիներով, կնոջով, հարսներով և ամեն տեսակ կենդանիներով։

Սրանից եօթ օր ու գիշեր սաստիկ անձրև գալ։ Ջուրը մեծացաւ. տապանն սկսեց լողալ։ Ջուրն այնքան մեծացաւ՝ որ ամենաբարձր լեռների գագաթներն անգամ ծածկուեցան—ամենքն էլ խեղդուեցան։

դ. Հարիւր յիսուն օրից եօթ անձրևները դադարեցին. ջուրն իջաւ՝ ցածրացաւ։ Տապանը լողալով՝ եկաւ Արարատ լերան վրայ հանգստացաւ։ Նոյը բաց արաւ տապանի պատուհանը և մի ագռաւ բաց թողեց։ Սա եա չեկաւ։ Եօթ օր մի աղաւնի արձակեց, բայց որովհետև նա ոչ մի հանգստանալու տեղ չգտաւ, եա դարձաւ։ Նոյը մեկնեց ձեռը և ներս առաւ։

Եօթն օրից եօթ Նոյըն էլի մի աղաւնի բաց թողեց։ Աղաւնին երեկոյեան դէմ վերադարձաւ՝ բերանին ձիթենու շիւղ բռնած։ Նոյըն էլի եօթն օր սպասեց և նորից աղաւնուն արձակեց։ Այս

անգամ աղաւնին ետ չեկաւ։ Նոյընն իմացաւ, որ երկրիս երեսից ջուրը ցամաքել է։



ե. Այն ժամանակ Նոյը դուրս եկաւ տապանից իւր ընտանիքով, Արարատի ներքևում սեղան շինեց ու զոհ արաւ։

Այս բանն Աստծուն դուր եկաւ, ուստի Նո-

յին օրհնեց, նրա հետ դաշն կապեց և ասաց. «Քանի որ այս աղեղը երկնքի վրայ տեսնես, իմացիր որ այլ ևս ջրհեղեղ չի լինի»։

Նոյընն սկսաւ երկրագործութիւնով պարապել և այգի տնկել։ Նա երեք որդի ունէր Սեմ, Քամ և Յաբէթ։ Դրանց որդիները բազմացան և լցրին երկիրը։

6. ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

29452-63

ա. Նոյի թոռները բազմացան Արարատի ներքևում և տեղափոխուեցին դէպի արևելք— Եփրատ ու Տիգրիս գետերի միջում պատահեցան մի ընդարձակ դաշտավայրի, որի անունն էր Սենաար։ Այդ մարդիկն ամենքն էլ մի լեզուով էին խօսում. սրանք ասացին միմեանց. «Եկէք մի այնպիսի աշտարակ շինենք, որի ծայրը երկինք հասնի, որ ջրհեղեղ լինելիս, բարձրանանք այնտեղ և ազատուենք»։ Շինութիւնն սկսեցին։ Աստուած տեսաւ, որ իրանց ոյժից վեր բան են կատարում, խառնեց նրանց լեզուները, այնպէս որ մէկ մէկու այլ ևս չկարողացան հասկանալ։ Այդ տեղի անունը Բաբելոն դրին, որ նշանակում է խառնակութիւն։

բ. Շինութիւնը դադարեց. մարդիկ սկսեցին

ZSUR—Asm SSR

Բաբելոնից հեռանալ ու նորից ցրուել երկրիս զանազան կողմերը։

Բ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՐ

Ա. ԵՐԲԱՀԱՄ

7. ԱՍՏՈՒԱԾ ԿԱՆՉՈՒՄ Է ԱԲՐԱՀԱՄԻՆ

Ա. Մի քանի ժամանակ Խառան քաղաքում Սեթի ցեղից մի մարդ էր ապրում՝ անունն Աբրահամ։ Նրա հայրը կուռք էր պաշտում, իսկ ինքը՝ ճշմարիտ Աստծուն։ Աստուած ասաց Աբրահամին. «Թող քո հայրենիքը, բարեկամներդ, հօրդ տունը և գնա այն երկիրը, որ ես քեզ ցոյց կտամ. ես քեզ մեծ ազգ կդարձնեմ և կօրհնեմ։ Քո ձեռով պէտք է օրհնուեն երկրիս բոլոր ազգերը։ Քո ցեղից միայն կծնի, որ բոլոր մարդոց մեղքից կազատէ»։

Բ. Աբրահամն իսկոյն դուրս եկաւ Խառանից. հետն առաւ իւր կին Սառային, եղբօրորդի Ղովտին, իւր հարստութիւնը ու հեռացաւ դէպի Աստծու ցոյց տուած Քանան երկիրը։ Երբ տեղ հասաւ ու Սիւքէմ հովիտը եկաւ, Աստուած նորից ասաց Աբրահամին. «Այս երկիրը տալիս եմ քեզ և քո որդուց»։ Աբրահամն այնտեղ սեղան շինեց և Աստծուն շնորհակալութիւն արաւ։



8. ԱԲՐԱՀԱՄԸ ԵՒ ՂՈՎՏԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՐԻՑ

Աբրահամը մի հարուստ մարդ էր—ունէր շատ խաշներ, ոսկի և արծաթ։ Ղովտը ևս հարուստ էր—նա էլ ունէր բազմաթիւ խաշներ։ Նրանց բնակութեան երկիրը շատ փոքր էր, այնպէս որ խաշներին բաւականութիւն չէր տալիս, դրա համար ևս շարունակ կռիւ էր պատահում Ղովտի և Աբրահամի հովիւների մէջ։

Մի անգամ Աբրահամն ասաց Ղովտին. «Ինչու պէտք է մեր հովիւների մէջ կռիւ պատահի.

չէ՞ որ ազգականներ ենք. արի բաժանուենք,—եթէ դու ձախ գնաս, ես աջ կերթամ, իսկ եթէ աջ գնաս, ես ձախ կերթամ»։

Ղովտն ընտրեց ամենալաւ մասը՝ ջրերով հարուստ Յորդանանի պաղաւէտ հովիտը։ Աբրահամը բնակուեց Քեբրոնի մօտ գտնուող Մամբրէի անտառում, իսկ Ղովտը՝ Յորդանանի հովտում։ Սրա վրանները հասնում էին մինչև Սոդոմ և Գոմոր քաղաքները, որոնց բնակիչները շատ վատ մարդիկ էին, Աստծու ճանապարհով չէին գնում։

9. ԱԲՐԱՀԱՄՆ ԱԶԱՏՈՒՄ Է ՂՈՎՏԻՆ

Մի անգամ չորս թագաւորներ պատերազմ ունեցան Սոդոմ և Գոմոր քաղաքների թագաւորների հետ։ Սրանք յաղթուեցան և ժողովուրդը փախաւ լեռները։ Թշնամին խլեց Սոդոմ և Գոմոր քաղաքացիների հարստութիւնը։ Ղովտն ևս գերի ընկաւ իւր խաշներով։

Այդ պատերազմից մի մարդ ազատուեցաւ և եկաւ Աբրահամին յայտնեց, որ Ղովտը գերի է ընկել։ Աբրահամը՝ երբ իմացաւ, հաւաքեց իւր երեք հարիւր տասն և ութը ծառաներին. ընկաւ թշնամու ետևից. գիշերով յարձակուեց նրանց վրայ. չարդեց թշնամուն. ետ առաւ բոլոր աւարը և ազատեց Ղովտին։

Երբ Աբրահամը պատերազմից վերադառնում

էր, Սոդոմի թագաւորը նրա առաջ դուրս եկաւ և ասաց. «Թերի առած մարդիկն լինէ, իսկ աւարը քեզ լինի»։ Աբրահամը պատասխանեց. «Ոչ, ես մի արեխի թել անգամ չեմ վերցնի—բոլորն էլ քեզ կտամ։ Աբրահամը դարձաւ Քեբրոն։

10. ԱՍՏՑՈՒ ԽՈՍՏՈՒՄՆ ԱԲՐԱՀԱՄԻՆ

Աստուած Տառանում խոստացաւ Աբրահամին մեծ ազգ դարձնել. այդ օրից անցել էր 24 տարի. նա արդէն 99, իսկ Սառան 90 տարեկան էր, բայց դեռ ոչ մի որդի չունէր։ Աստուած Աբրահամին վերջին անգամ փորձելու համար, մի անգամ կէս օրուայ խիստ շոգի ժամանակ եկաւ նրա մօտ։ Աբրահամը նստած էր վրանի դրանը՝ Մամբրէի անտառում։ Յանկարծ տեսաւ, որ երեք ճանապարհորդ հեռուից դէպի ինքն են գալիս, իսկոյն վազեց նրանց առաջ, երկրպագութիւն տուաւ և ասաց. «Տէր, եթէ քո ծառային սիրում ես, ել նրա վրանը. հանգստացիր այս ծառի տակ. ես ջուր կբերեմ. ձեր ոտները կլուանամ. նախաճաշիկ կանէք՝ ետոյ ճանապարհը կշարունակէք»։ Նրանք պատասխանեցին։ «Թող այդպէս լինի»։

Աբրահամը գնաց վրանը Սառայի մօտ և ասաց. «Շուտ արա, նկանները թխիր շարմաղ ալիւրից»։ Իսկ ինքը գնաց հանդը. մի երինջ բերաւ. տուաւ ծառաներին, որ մորթեն և հիւ-

րերի համար կերակուր պատրաստեն։ Աբրահամը՝ չնայելով որ 318 ծառայ ունէր, բայց ինքն էր սեղանին ծառայում—բերաւ կարագ, կաթն և հորթի մսից պատրաստած կերակուր. դրաւ հիւրերի առաջ և նրանք էլ կերան։

Այն ժամանակ հիւրերն ասացին Աբրահամին. «Ո՞ւր է քո կին Սառան»։ Նա պատասխանեց. «Վրանումն է»։ Հիւրերից մինն ասաց. «Եկող տարի այս ժամանակ Սառան մի որդի կունենայ»։ Սառան մտքում ծիծաղեց այս խօսքերի վրայ։ Աստուած հարցրեց Աբրահամին. «Սառան ինչու է ծիծաղում, մի՞թէ Աստծու համար անկարելի բան կայ»։ Օտարականները վեր կացան և գնացին դէպի Սոդոմ։

11. ԱԲՐԱՀԱՄԸ ԲԱՐԵԽՕՍՈՒՄ Է ԱՍՏՑՈՒ ԱՌԱՋ, ՍՈԴՈՄ ԳՈՄՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՐՏԱՆՈՒՄԸ

Օտարականները գնացին դէպի Սոդոմ։ Աբրահամն էլ ճանապարհ ձգելու համար հետները գնաց։ Աստուած ասաց. «Սոդոմի և Գոմորի մարդկանց անկարգութիւնը չափից անցել է, գնում եմ տեսնելու, արդեօք ուղիղ է թէ ոչ»։

Աբրահամն իսկոյն հասկացաւ, որ նրանք պէտք է պատժուեն, ուստի մտածում էր, թէ ինչպէս օգնէ նրանց։

Երկու ճանապարհորդները գնացին դէպի Սոդոմ, իսկ Աբրահամն Աստծու առաջ կանգնեց

և ասաց. «Եթէ քաղաքի մէջ յիսուն արդար լինի, մի՞թէ չես ների միւսներին էլ»։ Աստուած ասաց. «Եթէ յիսուն արդար գտնեմ, միւսներին էլ կներեմ»։

Աբրահամը նորից ասաց. «Թերևս քառասուն արդար լինի»։ Աստուած պատասխանեց. «Քառասունի համար էլ կներեմ»։ Իսկ եթէ երեսուն հոգի գտնուե՞ն»։ «Եթէ երեսուն հոգի գտնուեն, դարձեալ կներեմ»։ Աբրահամը նորից ասաց. «Եթէ՞ քսան հոգի լինեն»։ Աստուած պատասխանեց. «Քսանի համար էլ չեմ պատժի»։

Աբրահամը կրկնեց. «Մի բարկանար, Տէր, եթէ մի անգամ էլ խօսեմ, իսկ եթէ տասն հոգի լինի»։ Աստուած պատասխանեց. «Տասնի համար ևս չեմ պատժի»։

Երբ այս խօսակցութիւնը վերջացաւ, Աստուած անհետացաւ։ Հրեշտակները գնացին դէպի Սոդոմ, իսկ Աբրահամը դարձաւ տուն։

Հրեշտակները Սոդոմ և Գոմոր քաղաքները մտան մեծ ղովտին արդար գտան, իսկ մեղաւորները մեղաւոր էին։ Հրեշտակները արդարին իւր ընտանիքով ազատեցին, իսկ մեղաւորներին պատժեցին— երկնքից կրակ թափուեց և այրեց բոլորին։

Միւս օրն առաւօտեան վաղ՝ Աբրահամն եկաւ այնտեղ, որտեղից բաժանուել էր Աստծուց

և ինչ տեսաւ—Սոդոմ և Գոմորից ծուխ էր բարձրանում։

Այս քաղաքների տեղը ջրով լցուեց, որ մինչև այսօր էլ կոչւում է Մեռեալ ծով։

12. ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԶՈՀՈՒԻԼԸ

Ա. Տարին անցնելուց ետոյ, ինչպէս Աստուած խոստացել էր, Սառան մի որդի ունեցաւ, որի անունը Իսահակ դրին։ Աբրահամն արդէն հարիւր տարեկան էր։ Նա շատ էր ուրախանում։

Բ. Մի քանի տարուց ետոյ Աստուած Աբրահամին էլի մի անգամ փորձելու համար՝ ասաց. «Աբրահա՛մ, վեր առ քո միակ որդի Իսահակին և գնա Մորէայի երկիրն ու այնտեղ իմ ցոյց տուած լերան վրայ զոհիր նրան»։ Աբրահամն առաւօտը վաղ վեր կացաւ. համեհեց էշը. փայտ պատրաստեց զոհի համար. հետն առաւ Իսահակին և երկու ծառայ ու գնաց Աստծու ցոյց տուած երկիրը։ Երեք օրից ետոյ տեղ հասան։ Աբրահամն ասաց իւր ծառաներին. «Մնացէ՛ք այստեղ, իսկ ես Իսահակի հետ պէտք է գնամ վերև աղօթելու»։

Իսահակը ողջակիզի փայտը շալակեց, իսկ Աբրահամը ձեռին բռնած ունէր կրակն ու դա-

նակը։ Ճանապարհին Իսահակը հարցրեց հօրը. «Հայր, կրակն ու փայտն այստեղ են, բայց ո՞ւր է ողջակիզի ոչխարը»։ Աբրահամը պատասխանեց. «Աստուած տեսնում է ողջակիզի ոչխարը»։

Երբ նրանք լերան գագաթը հասան, Աբրահամը սեղան շինեց. փայտը դարսեց վրան. որդուն կապեց փայտերի վրայ. վեր առաւ դանակը, որ գոհէ։

Այն ժամանակ Աստծու հրեշտակը ձայն

տուաւ երկնքից ու ասաց. «Աբրահամ, Աբրահամ, ձեռդ եա՛ր քաշի՛ր, ես իմացայ, որ դու Աստծուն

ախրում ես։ Ահա այն թուփը, որի մէջ մի ոչխար կայ, վեր առ և գոհիր Իսահակի փոխարէն»։ Աբրահամն էլ այնպէս արաւ։

Աստծու հրեշտակը նորից ձայն տուաւ Աբրահամին ու ասաց. «Որովհետեւ քո միակ որդին չխնայեցիր, ուստի ես քեզ օրհնում եմ. քո զաւակները թող երկնքի աստղերի և ծովի ափի աւազի չափ բազմանան քեզնով պէտք է օրհնուեն երկրիս բոլոր ազգերը»։

Աբրահամն եկաւ ծառաների մօտ և միասին դարձան տուն։

13. ՍԱՌԱՅԻ ՄԱՀԸ

Սառան հարիւր քսան և եօթը տարեկան հասակում մեռաւ Քեբրոնում։ Աբրահամն սկսաւ լալ և սուգ անել։ Երբ սգի օրերն անցան, վեր կացաւ ու ասաց այն երկրի բնակիչներին. «Խընդրեցէք Եփրոնին, որ իմ ագարակի ծայրումը գտնուող Կրկին-Այրն ինձ վաճառէ, որպէսզի իմ մեռելն այնտեղ թաղեմ»։ Եփրոնն ինքն եկաւ և ասաց. «Ագարակն արժէ չորս հարիւր սատեր (սատերն 80 կպ.), թաղիր քո մեռելն այնտեղ»։ Մարդկանց առաջ Աբրահամը կշռեց արծաթը և տուաւ նրան։ Աբրահամը Սառային թաղեց Կրկին-Այրի մէջ։



14. ԻՍԱՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻ ՄԱՀԸ

Աբրահամը շատ էր ծերացել։ Նա կանչեց իւր աւագ ծառայ Նղիազարին ու ասաց. «Կգնաս

Աստան և այնտեղից Իսահակի համար մի կին կբերես»։ Եղիազարն առաւ իւր հետ մի քանի ծառաներ, տասն ուղտ և շատ ընծաներ ու ճանապարհ ընկաւ դէպի Աստան քաղաքը։ Երբ տեղ հասաւ, ուղտերին հանգիստ տուաւ քաղաքից դուրս մի ջրհորի մօտ։

Արևը մտնելու ժամանակն էր։ Կանայք այդ ժամին գալիս էին ջուր տանելու։ Եղիազարն աղօթեց և ասաց. «Աբրահամի Աստուածդ, յաջողիր իմ գործը. այս քաղաքի աղջիկներն ահա կգան

ջուր հանելու։ Եթէ մի կոյս աղջիկ գայ և ես նրան ասեմ, կուացրու սափորդ ու ինձ ջուր խմացրու և նա էլ խմացնէ, նա կլինի Իսահակի կինը»։

Հազիւ թէ այս խօսքերը վերջացրել էր, եկաւ Բաթուէլի դուստր Ռեբեկան՝ սափորն ուսին։ Նա մի դեղեցիկ աղջիկ էր։ Իջաւ ջրհորը, լցրեց սափորը և բարձրացաւ։ Եղիազարը դիմեց նրան և ասաց. «Թոյլ տուր ինձ փոքր ինչ ջուր խմեմ քո սափորից»։ Նա էլ պատասխանեց. «Խմիր»։ Այս ասաց, շտապով սափորը կռան վրայ



իջեցրեց և օտարականին ջուր տուաւ։ Նա ուղտերին էլ խմացրեց։ Խմելուց յետոյ՝ Եղիազարը Ռեբեկային մի ոսկեայ գինտ և երկու ապարանջան ընծայեց։

Ռեբեկան վազեց և պատմեց մօրն այս ա-մենը։ Նա մի եղբայր ունէր՝ Լաբան անունով։ Երբ սա տեսաւ քրոջ գնաերը և ապարանջան-ները, վազեց դէպի Ջրհորն ու ասաց այն օտա-րականին. «Ո՛վ Աստծու օրհնեալ մարդ, եկ մեր տունն»։ Նա եղիազարին տունն առաջնորդեց. Ջուր բերեց ոտները լուանալու, որիցետոյ կերակուր ևս բերաւ։ Եղիազարը պատասխանեց. «Ես հաց չեմ ուտի՝ մինչև իմ միտքը չյայտնեմ»։ Եղիա-զարը յայտնեց իւր ով լինելը, թէ ինչու է եկել և թէ ինչ է ազօթել Ջրհորի մօտ։

Բաթուէլը և Լաբանը պատասխանեցին. «Ու-րեմն այդ Աստծու կամքն է, մենք դրա դէմ ինչ կարող ենք ասել, վեր առ Ռեբեկային և տար»։ Մի քանի օրից հետոյ Ռեբեկան իւր նաժիշտների հետ ուղտերի վրայ նստեց ու ճանապարհ ընկաւ դէպի Քնդրոն։

Իսահակը երեկոյեան ժամանակ դաշտ էր դուրս եկել զբօսնելու. Նա տեսաւ հեռուից, որ տան ուղտ է գալիս։ Ռեբեկան նկատեց Իսա-հակին և հարցրեց ծառային. «Ո՛վ է այն մար-դը, որ՝ դաշտի մէջ զբօսնում է»։ Ծառան պա-տասխանեց. «Նա իմ տէրն է»։ Եղիազարը պատ-մեց Իսահակին ամեն բան։ Այնուհետև Իսահակը և Ռեբեկան միասին էին ապրում։

Աբրահամը իւր բոլոր հարստութիւնը Իսա-

հակին տուաւ և մեռաւ հարիւր եօթանասուն հինգ տարեկան հասակում։

Իսահակը թաղեց նրան Կրկին Այրում—Սա-ռայի մօտ։

Բ. ԻՍՀԱԿ

15. ԵՍԱՒ ԵՒ ՅԱԿՈՎԲ

Իսահակը երկու որդի ունեցաւ - մեծի ա-նունը Նսաւ էր, իսկ փոքրինը՝ Յակովբ։ Նսաւը մազոտ էր, պարապում էր որսորդութիւնով ու հողագործութիւնով, իսկ Յակովբը միւսի տա-նը և մօրն օգնում տան գործերում։ Իսահակը Նսաւին էր սիրում և նրա բերած որսի միսը ա-խորժակով ուտում էր, իսկ Ռեբեկան՝ Յակովբին։

Մի անգամ Յակովբը ոսպէ թան էր եփել։ Նսաւը դաշտից դադրած տուն դարձաւ և ասաց եղբօրը. «Քո ոսպէ թանից մի քիչ էլ ինձ տուր»։ Յակովբը պատասխանեց. «Ծախիր ինձ վրայ քո անդրանկութիւնը, ետոյ կստանաս ոսպէ թան»։ Նսաւն ասաց ինքն իրան. «Ես սովից մեռնում-եմ, ինչիս է պէտք անդրանկութիւնը»։ Յակովբն ասաց. «Ուրեմն երդուիր, որ խօսքդ ետ չես առ-նի»։ Նսաւը երդուեց։ Այն ժամանակ միայն Յա-կովբը տուաւ նրան ոսպէ թանից։ Նսաւը կե-րաւ, խմեց, վերկացաւ և գնաց։ Այսպէս Նսաւը

մի բաժին ոսպէ թանով ծախեց իւր անդրանկութիւնը։

16. ՅԱԿՈՎԲԻ ԽԱԲԵԲԱՅՈՒԹԻՒՆԸ

Իսահակը հարիւր երեսուն եօթը տարեկան էր—նրա աչքերը լաւ չէին տեսնում։ Կանչեց Եսաւին և ասաց. «Ես այսօր կամ վաղը գուցէ մեռնեմ. գնա դաշտ. որսի միս բեր ինձ համար. խորտիկ պատրաստիր, որ ուտեմ և օրհնեմ քեզ»։

Ռեբեկան լսեց այս խօսքերը. կանչեց Յակովբին և ասաց. «Լսեցի որ հայրդ Եսաւին ասաց—գնա դաշտ. որսի միս բեր. ուտեմ և օրհնեմ քեզ։ Ուրեմն լսիր ինձ—գնա, երկու ուլ բեր, հօրդ համար խորտիկ պատրաստեմ, տար որ ուտէ և օրհնէ քեզ մեռնելուց առաջ»։ Յակովբը պատասխանեց.

«Իմ եղբայր Եսաւը մազոտ է, իսկ ես լերկ, գուցէ շօշափէ ինձ և ես խաբեբայ դուրս գամ». Մայրը պատասխանեց. «Գնա և այնպէս արա, ինչպէս քեզ ասացի»։

Յակովբը գնաց, ուլերը բերաւ և մօրը տուեց։ Նա էլ կերակուր պատրաստեց։ Եսաւի թանկագին շորերը հագցրեց Յակովբին. ուլի մորթին թևերին ու պարանոցին փաթաթեց, որ հայրը չճանաչէ և կերակուրն էլ ձեռը տուաւ։ Յակովբը գնաց հօր մօտ և ասաց. «Հայր, վեր կաց իմ բերած խորտիկը կեր ու օրհնիր ինձ»։ Իսահակը

հարցրեց. «Այդ ինչ շուտ գտար որսը»։ Նա պատասխանեց. «Աստուած ինքն էր պատրաստել այդ»։

Իսահակն ասաց. «Մօտ արի, որդեակ, որ քեզ շօշափեմ, տեսնեմ իմ որդի Եսաւն ես՝ թէ ոչ»։ Յակոբը մօտեցաւ, հայրը շօշափեց և ասաց. «Ձայնը Յակոբի ձայնն է, իսկ ձեռներդ՝ Եսաւինը»։ Հայրը չճանաչեց, բայց կասկածեց, ուստի մի անգամ էլ հարցրեց. «Դու իմ որդի Եսաւն ես»։ Նա պատասխանեց. «Այո, ես եմ»։ Իսահակն ասաց. «Ուրեմն մօտ բեր խորտիկը»։ Յակոբը մօտեցրեց նրան կերակուրը, գինի ևս տուաւ։ Հայրը կերաւ, խմեց, օրհնեց և ասաց. «Թող երկնքի ցօղը անպակաս լինի դաշտերիդ համար, քո արտերը և այգինները ցորենով և գինիով լցուեն. ազգերը ծառայեն քեզ, եղբօրդ վրայ տէր եղիր»։

Յակովբը դեռ նոր էր հեռացել, որ Եսաւը որսից վերադարձաւ։ Նա նոյնպէս խորտիկ պատրաստեց և հօրը բերաւ։ Իսահակը հարցրեց նրան. «Ո՞վ ես դու»։ Նա պատասխանեց. «Քո անդրանիկ որդի Եսաւն եմ»։ Իսահակը շատ զարմացաւ այս բանի վրայ և ասաց. «Հապա այն ով էր, որ մի փոքր առաջ ինձ համար խորտիկ բերաւ, ես էլ կերայ ու օրհնեցի նրան»։

Եսաւը հասկացաւ, թէ ինչ է պատահել, բարձր ձայնով լաց եղաւ ու ասաց. «Հայր, ինձ ևս օրհնիր»։ Իսահակը պատասխանեց. «Քո եղ-

բայրը խորամանկ կերպով ինձ մօտ եկաւ և քո օրհնութիւնն ստացաւ»։ Եսաւը նեղացած սրտով ասաց. «Մէթէ դու մի օրհնութիւն ունիս, հայր,

ինձ էլ օրհնիր»։ Իսահակը պատասխանեց և ասաց. «Թող քո բնակած երկիրը էլ պտղաբեր լինի, միայն Յակովբին պիտի լսես»։

Գ. ՅԱԿՈՎԲ

17. ՅԱԿՈՎԲԻ ՓԱԽՈՒՍՏԸ

Այս բանից յետոյ Եսաւը խիստ ատում էր Յակովբին։ Նա ասում էր. «Հայրս ծերացել է, երբ մեռնի, ես կսպանեմ նրան»։

Այս բանը Ռեբեկան իմացաւ, ուստի Յակովբին իւր մօտ կանչեց և ասաց. «Եսաւը մտածում է քեզ սպանել, գնա Խառան իմ եղբայր Յակովբի մօտ՝ մինչև եղբօրդ բարկութիւնն անցնի»։ Ռեբեկան Իսահակի հետ ևս խօսեց այդ մասին։ Նա էլ կանչեց Յակովբին, որ արդէն եօթանասուն եօթը տարեկան էր և դեռ չէր ամուսնացել ու ասաց. «Գնա Միջագետք՝ Բաթուէլի մօտ և ամուսնացիր Լաբանի աղջիկներից մէկի հետ»։ Յակովբը լսեց ծնողներին և գնաց դէպի Միջագետք։

Յակովբը դուրս եկաւ Բերսաբէից ու գնաց դէպի Խառան։ Արևը մտնելու ժամանակ մի քար վեր առաւ, դրեց գլխի տակն ու քնեց։

Այստեղ տեսիլքում մի սանդուխտ տեսաւ, որի ծայրը երկնքումն էր և վրայով Աստծու հրեշտակները բարձրանում, իջնում էին։ Աստուած սանդուխտի վերևից ասում է. «Ես եմ Աբրահամի և Իսահակի Աստուածը. այս երկիրը քեզ և քո ժառանգներին եմ տալիս. քո զաւակները եր-

կընքի աստղերի և ծովի աւազի չափ կբազմանան. ես քեզ կպաշտպանեմ և նորից կվերադարձնեմ»։

Երբ Յակովբը քնից զարթեց, ասաց. «Աստուած այստեղ է եղել, իսկ ես չեմ իմացել— այս տեղը սուրբ է, Աստծու տունն է»։ Յակովբը վեր առաւ այն քարը, որի վրայ քնել էր. արձան կանգնեցրեց. իւղ ածեց վրան և այն տեղն անուանեց տուն Աստուծոյ, այսինքն Բեթէլ։

18. ՅԱԿՈՎԲԸ ԼԱԲԱՆԻ ՄՕՏ

Ա. Յակովբը վեր կացաւ տեղից և ուրախ-

ութեամբ գնաց իւր մօրեղբայր Լաբանի մօտ։ Ճանապարհի մօտ մի ջրհոր տեսաւ, որի շուրջը երեք ոչխարի հօտ կար։ Ջրհորի բերանին ձգած էր մի մեծ քար։ Յակովբը հարցրեց հովիւներին. «Ո՞ր տեղացի էք, եղբայրնե՛ր»։ Նրանք պատասխանեցին. «Ճառանիցն ենք»։ Յակովբը շարունակեց. «Ճանաչո՞ւմ էք Բաթուէլի որդի Լաբանին»։ Նրանք պատասխանեցին. «Այո՛, ահա նրա աղջիկ Հռաքէլն էլ գալիս է իւր ոչխարների հետ»։ Յակովբը Հռաքէլին տեսնելուն պէս՝ մօտեցաւ, համբուրեց նրան. լաց եղաւ և յայտնեց, որ ինքը Ռեբեկայի որդին է։ Հռաքէլը տուն վազեց հօրն իմաց տալու։ Երբ Լաբանն իմացաւ, շտապեց նրա մօտ. համբուրեց ու տարաւ իւր տուն։ Յակովբը պատմեց Լաբանին իւր պէսպէս անցածը։

Բ. Մի ամիս անցնելուց հետոյ՝ Լաբանն ասաց Յակովբին. «Թէև դու իմ ազգականն ես, բայց և այնպէս չէի կամենայ, որ ինձ ձրի ծառայես. ասա՛, ի՞նչ է քո աշխատանքի վարձը»։ Լաբանը երկու աղջիկ ունէր—մեծի անունը Լիա էր, փոքրինը՝ Հռաքէլ։ Լիան ագէտ էր, իսկ Հռաքէլը՝ գեղեցիկ։ Յակովբը Հռաքէլին հաւանում էր, դրա համար էլ ասաց Լաբանին. «Ես քեզ եօթը տարի կծառայեմ, եթէ Հռաքէլին ինձ կտաս»։ Լաբանը պատասխանեց. «Շատ բարի, աւելի լաւ է քեզ տամ՝ քան թէ ուրիշին»։ Յակովբը եօթը տարի ծառայեց Լաբանին։

Երբ եօթը տարին անցաւ, Լաբանը հարսա-

նիք արաւ, բայց փոխանակ Հռաքէլին՝ Լիային տուաւ։ Այն ժամանակ Յակովբն ասաց Լաբանին. «Ի՞նչու խաբեցիր ինձ, ես քեզ Հռաքէլի համար եօթը տարի ծառայեցի և ոչ թէ Լիայի»։ Լաբանը պատասխանեց. «Մեր երկրում սովորութիւն չէ, որ փոքր քոյրը մեծից վաղ մարդու գնայ, եթէ դու ինձ նորից եօթը տարի կծառայես, Հռաքէլին էլ կտամ»։ Յակովբը համաձայնեց—եօթը տարի ևս ծառայեց ու Հռաքէլին էլ առաւ։

Յակովբը շատ որդիներ ունեցաւ։ Նա Լաբանին վեց տարի ևս ծառայեց և փոխարէնն ստացաւ շատ ոչխարներ։ Բացի դրանից ունէր բազմաթիւ ծառաներ, աղախիններ, ուղտեր և էշեր։

19. ՅԱԿՈՎԲԻ ԴԱՐՁԸ ԼԱԲԱՆԻՑ

Լաբանի որդիները նախանձում էին Յակովբին—նրանք ասում էին. «Յակովբը մեր հօր կայքով հարստացաւ»։

Յակովբն ինքն ևս նկատում էր այդ նախանձը, դրա համար Աստուած ասաց նրան. «Դարձիր Քանան, ես քեզ կպաշտպանեմ»։ Յակովբն այս բանը յայտնեց Լիային ու Հռաքէլին։ Նրանք էլ ասացին. «Արդ, ինչպէս որ Աստուած հրամայել է»։ Այսպէս Յակովբը վեր առաւ իւր որդիներին, կանանցը, խաշներն ու բոլոր հարստութիւնը և փախաւ Քանան։

Այդ ժամանակ Լաբանը տանը չէր, դաշտը էր դնացել ոչխարները խուզելու։

Երրորդ օրը Լաբանն իմացաւ, որ Յակովբը փախել է, ուստի ընկաւ նրա ետևից։ Եօթն օրից ետոյ հասաւ նրան Գաղաատի լերան մօտ։ Աստուած ճանապարհին տեսիլքում զգուշացրեց Լաբանին ու ասաց. «Զգոյշ կաց, Յակովբի հետ սիրով վարուիր»։ Լաբանը Յակովբին հարցրեց. «Ի՞նչու ծածուկ հեռացար, ես քեզ երգով, թմբուկով ճանապարհ կձգէի. ինչու իմ աղջիկներն ու թոռներն առանց համբոյրի հեռացրիր. քո արածը լաւ բան չէ».

Յակովբը բարկացած պատասխանեց և ասաց. «Ի՞նչ եմ արել քեզ, որ ետևիցս ես ընկել. այդքան այծ ու ոչխար որ ունիս, բոլորն էլ իմ քրտնքի պտուղն է— ինչ որ գազանները պատառում էին, այն էլ ինձնից էիր պահանջում. ցերեկները արևակէզ էի լինում, իսկ գիշերները ցրտից չորանում։ Այս ձևով ես քսան տարի ծառայել եմ քեզ»։

Լաբանը պատասխանեց. «Ես ինչ կարող եմ անել աղջիկներիս ու թոռներիս, լաւն այն է, որ դաշը կապենք»։ Յակովբն ու Լաբանը հաշտուեցան, Աստծու առաջ երդուեցին և դաշը կապեցին։ Պայմաններից մէկն էլ այն էր, որ Յակովբը Լաբանի աղջիկներին չպէտք է ծեծէր։ Յակովբը զոհ արաւ և հացի հրաւիրեց բոլորին։ Առաւօտը Լաբանը համբուրեց աղջիկներին ու թոռներին,

օրհնեց նրանց և ետ դարձաւ տուն, իսկ Յակովբը շարունակեց իւր ճանապարհը։

20. ԵՍԱԻ ԵՒ ՅԱԿՈՎԲԻ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Յակովբը մարդիկ ուղարկեց Նովմ (Սէիր) երկիրը՝ Եսաւի մօտ։ Նա պատուիրեց նրանց այսպէս ասելու. «Ձեր ծառայ Յակովբն այսքան ժամանակ Լաբանի մօտ էր. մեզ ուղարկել է քեզ մօտ և ներողութիւն է խնդրում»։ Գնացողները դարձան և ասացին. «Ձեր եղբայր Եսաւը չորս հարիւր մարդով գալիս է քեզ դիմաւորելու»։ Յակովբը շատ վախեցաւ այս բանից. իսկոյն ծառաներն ու խաշները երկու մասի բաժանեց այն մտքով, որ եթէ եղբայրը մի մասը խլի, միւսը կարողանայ ազատել։

Յակովբն առաւօտը վաղ՝ առաւ իւր կանանցն ու որդիներին և գնաց Եսաւի առաջ։ Յակովբը երբ տեսաւ, որ եղբայրը չորս հարիւր մարդով է գալիս, իսկոյն որդիները մայրերին յանձնեց. ինքն առաջ գնաց և եօթն անգամ ծընկաչոք գլուխ տուաւ։ Եսաւն այս տեսնելուն պէս՝ առաջ վազեց. գրկեց Յակովբին. վզովն ընկաւ ու համբուրեց նրան—երկուսն էլ լալիս էին։

Եսաւն ասաց. «Շտապենք, միասին գնանք»։ Յակովբը պատասխանեց. «Ծծկեր մանուկները ուշիմ, ոչխարները ևս նոր են ծնել, եթէ սոխակեմ շուտ-շուտ գնալու, բոլորն էլ կկոտորուեն. դու առաջ գնա, իսկ ես կամաց-կամաց կգամ»։ Եսաւը նորից դարձաւ, իսկ Յակովբը գնաց դէպի Սիքէմ։ Այնտեղից անցաւ Բեթէլ և Տիրոջ համար տեղան պատրաստեց։ Նրանք փոքր ևս առաջ գնացին։ Բեթղեհէմ քաղաքում Հռաքէլը մեռաւ։ Յակովբը թաղեց նրան և վրան մի արձան կանգնեցրեց։

Յակովբն եկաւ Իսահակի մօտ, որ բնակւում էր Մամբրէում՝ ոչ հեռի Քեբրոնից։ Իսահակը ծերացել էր—նա մեռաւ հարիւր և ութսուն տարեկան հասակում։ Եսաւն ու Յակովբը թաղեցին Իսահակին Աբրահամի գնած կրկին-Այրի մէջ։

Գ. ՅՈՎՍԷՓ

21. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԵՒ ՆՐԱ ՎԱՃԱՌՈՒԻՄՆ

Ա. Յակովբը տասն և երկու որդի ունէր։ Նրանց անուններն են—1. Ռուբէն, 2. Շմաւոն, 3. Ղեւի, 4. Յուդա, 5. Իսաքար, 6. Զաբուղոն, 7. Դան, 8. Նեփթաղիմ, 9. Գաթ, 10. Ասեր, 11. Յովսէփ և 12. Բենիամին։ Յովսէփը և Բենիամինը Հռաքէլից էին ծնած։ Յովսէփը տասն եօթը տարեկան էր, երբ եղբայրների հետ ոչխարներ էր արածացնում։ Նա պատմում էր հօրն այն վատ բանները, որ եղբայրները գործում էին։

Յակովբը Յովսէփին բոլոր որդկերանցից աւելի էր սիրում—նրա համար ծաղկոյ պատմուճան կարել տուաւ։ Այս բանի վրայ եղբայրները ըսկսեցին նախանձել։

Յովսէփը մի անգամ երազ տեսաւ ու պատմեց եղբայրներին։ Նա ասաց. «Մենք դաշտում խուրձ էինք կապում, իմ կապածները ուղիղ կանգ-

նեցին, իսկ ձերը՝ երկրպագութիւն էին տալիս իմ խուրձերին»։ Եղբայրները պատասխանեցին. «Մի՞թէ կամենում ես թագաւոր լինել մեզ վրայ»։ Եղբայրներն աւելի սկսեցին ատել Յովսէփին։ Նա մի երկրորդ երազ ևս պատմեց եղբայրներին։ «Նա տեսայ երազում, որ արևը, լուսինը և

տասն ու մի աստղ ինձ երկրպագութիւն էին տալիս»։ Այս բանի վրայ հայրը բարկացաւ և ասաց. «Այդ ի՞նչ երազ է, մի՞թէ ես, մայրդ, եղբայրներդ պէտք է քեզ երկրպագութիւն տանք»։ Եղբայրների տեսլութիւնը աւելի զօրացաւ։

Ք. Յովսէփի եղբայրները Սիւքէմ հովտում արածացնում էին իրանց հօր խաշները։ Մի օր Յակովբն ասաց Յովսէփին. «Գնա եղբայրներիդ մօտ և իմացիր, թէ ինչպէս է նրանց առողջութիւնը և ինձ մի հաւաբեր»։ Յովսէփը գնաց։

Եղբայրները հեռուից տեսան նրան, սկսեցին ծաղրել ու ասել. «Ահա երազատեսը գալիս է, եկէք սպանենք նրան և ասենք մեր հօրը, թէ չար գազանները պատառել են, տեսնենք ինչ կլինի նրա երազները»։ Մեծ եղբայր Ռուբէնն ասաց. «Մի

սպանէք, այլ ձգեցէք այս անապատի անջուր փոսերից մինի մէջ»: Նրա միտքն այն էր, որ Յովսէփին ծածուկ ազատէ և հօրը տանէ: Երբ երազատեսը եղբայրների մօտ եկաւ, հանեցին նրա ծաղկեայ պատմուճանը՝ ձգեցին անջուր փոսի մէջ և հացի նստեցին:

Այդ միջոցին մի խումբ իսմայէլացի վաճառականներ էին գալիս իրանց ուղտերով, Գրանք գնում էին Եգիպտոս: Յուդան խօսեց եղբայրների հետ ու ասաց. «Մեզ ինչ շահ սրա սպանելուց. եկէք ծախենք այս վաճառականներին»: Այս մտքին ամենքն էլ հաւանեցին: Յովսէփին դուրս հանեցին փոսից և քսան դահեկանով ծախեցին: Ռուբէնն այդտեղ չէը, եղբայրներից ծածուկ գընացել էր, որ Յովսէփին փոսից հանէ և հօրն ուղարկէ: Բայց երբ փոսի մօտ եկաւ ու Յովսէփին այնտեղ չգտաւ, պատառեց շորերը, եկաւ եղբայրների մօտ և ասաց. «Պատանին փոսի մէջ չէ»:

Եաոյ եղբայրները մի ուլ մորթեցին, Յովսէփի շորերը արիւնի մէջ թաթախեցին ու հօրն ուղարկեցին ասելով. «Մ՛յս միայն գտանք, տես, սո՞ւն է քո որդու պատմուճանը՝ թէ ոչ»:

Յակովբը պատառեց իւր շորերը ու երկար ժամանակ սուգ էր անում: Որդիները մխիթարում էին հօրը, բայց նա ասում էր. «Այս գաւոիկ էլ պէտք է գերեզման իջնեմ իմ որդու մօտ»:

22. ՅՈՎՍԷՓԸ ՊԷՏԱՓՐԷՍԻ ՏԱՆԸ

Վաճառականները Յովսէփին Եգիպտոս տարան և վաճառեցին Փարաւոնի դահճապետ Պոտափրէսի վրայ: Աստուած Յովսէփին սիրում էր —ինչ որ անում էր, յաջողում էր նրան, այնպէս որ շուտով Պետափրէսի սիրելին դարձաւ: Նա իւր տան ամբողջ կառավարութիւնը նրան յանձնեց: Աստուած օրհնեց Եգիպտացու տունը Յովսէփի պատճառով:

Մի քանի ժամանակից եաոյ Յովսէփի և Պետափրէսի կնոջ մէջ անհամաձայնութիւն պատահեց. կինը զանգատուեց մարդուն և նա էլ հրամայեց նրան բանտ նստեցնել՝ առանց քննելու:

23. ՅՈՎՍԷՓԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Ա. Աստուած Յովսէփին պաշտպանում էր —բանտապետին այնպիսի միաք տուաւ, որ նրան սիրում էր: Սա բոլոր յանցաւորներին և բանտը Յովսէփին էր յանձնել:

Մի քանի ժամանակից եաոյ թագաւորի տապահապետը և մատակարարը յանցանք գործեցին իրանց տիրոջ դէմ: Թագաւորը երկուսի վրայ էս բարկացաւ և բանտն ուղարկեց: Մի գիշեր երկուսն էլ երազ տեսան: Առաւօտը Յովսէփը նրանց մօտ եկաւ, շատ տխուր տեսաւ ու հարց-

րեց. «Ի՞նչ է ձեր ախորժեան պատճառը»: Նըբանք պատասխանեցին. «Երազ ենք տեսել, ոչ ոք չկայ, որ մեկնէ»: Յովսէփն ասաց. «Դա Աստծու գործն է, բայց և այնպէս ինձ էլ պատմեցէք»:

Տակառապետը առաջինն սկսաւ պատմել երազը. «Ես տեսայ երազումս մի որթ. նրա վրայ երեք հասած ողկոյզ կար. Փարաւոնի բաժակը ձեռիս էր. ողկոյզի հատիկները ճմլում էի բաժակիս մէջ և թագաւորին էի տալիս»: Յովսէփը պատասխանեց. «Քո երազի մեկնութիւնն այս է —երեք ողկոյզները երեք օր է նշանակում, որից եաոյ թագաւորը պաշտօնդ քեզ կդարձնէ: Երբ քո գործը յաջող անցնի, չմոռանաս ինձ— խնդրիր թագաւորին, որ ինձ ազատեն, ես յանցանք չունիմ, իզուր տեղը բանտ են ձգել ինձ»:

Մատակարարը, երբ տեսաւ, որ Յովսէփն իւր ընկերոջ երազին լաւ մեկնութիւն տուաւ, սիրտ առաւ, սկսաւ ինքն էլ պատմել. «Ես էլ տեսայ երազումս երեք խան գլխիս դրած. վերին խանի մէջ հացագործի պատրաստած՝ թագաւորի սիրած կերակուրներն էին. այս վերջին խանի կերակուրներից գալիս և ուտում էին թռչունները»: Քո երազի մեկնութիւնն էլ այս է—երեք խանը երեք օր է նշանակում. երեք օրից եաոյ Փարաւոնը գլուխդ կտրել կտայ. մարմինդ փայտից կըկախէ. թռչունները կգան և կուտեն քեզ»:

Իսկ երեք օր այդ բանից եաոյ՝ թագաւորի

ծննդեան տօնն էր: Թագաւորն ուրախութեան մէջ յիշեց տակառապետին և մատակարարին և —առաջինին իւր պաշտօնը տուաւ, իսկ երկրորդին՝ փայտից կախել տուաւ: Բայց տակառապետը ուրախութիւնից մոռացաւ Յովսէփին:

Ը. Երկու տարուց եաոյ Փարաւոնը մի երազ տեսաւ, որպէս թէ ինքը կանգնած է Նեղոս գետի ափին, որտեղից դուրս եկան եօթը գեղեցիկ ու զեր երինջ ու սկսեցին դաշտի վրայ արածել: Սրանից եաոյ եօթը տգեղ ու լրար երինջ դուրս եկան և կուլ տուին այն եօթը գեղեցիկ ու զեր երինջներին: Փարաւոնը զարթեց ու նորից քնեց:

Երկրորդ անգամ երազ տեսաւ, որպէս թէ մի ինջից եօթը գեղեցիկ ու ընտիր հասկ դուրս եկան: Եաոյ տեսաւ եօթը ժանգոտած ու լրար հասկ դուրս եկան և նախկին եօթը գեղեցիկ, ընտիր հասկերին կուլ տուին: Փարաւոնը զարթեց, կանչել տուաւ Եգիպտոսի երազահաններին և պատմեց նրանց, բայց ոչ ոք չկարողացաւ մեկնել:

Այն ժամանակ տակառապետն ասաց. «Այսօր յիշեցի իմ յանցանքը—երբ թագաւորն ինձ և մատակարարին բանտարկել տուաւ, գիշերը երկուսս էլ երազ տեսանք: Մեզ մօտ մի երբայեցի տղայ եկաւ. մեր երազները մեկնեց և ինչպէս մեկնեց, այնպէս էլ կատարուեց— ես իմ

պաշտօնն ստացայ, իսկ մատակարարը փայտից կախուեց»։

Թագաւորը կանչել տուաւ Յովսէփին։ Բանտից դուրս բերին և իրան ներկայացրին։ Թագաւորն ասաց. «Ես երազ եմ տեսել, ոչ ոք չէ

կարողանում մեկնել. ինձ պատմեցին՝ եթէ դու երազս լսես, կարող ես մեկնել»։ Յովսէփը պատասխանեց. «Տէր արքայ, ինքս ոչինչ չեմ կարող անել, այդ Աստծու գործն է»։

Փարաւոնը պատմեց Յովսէփին իւր երազները։ Յովսէփը պատասխանեց. «Երկու երազն էլ միևնոյն նշանակութիւնն ունին։ Եօթը տարի Եգիպտոսում առատութիւն կլինի, իսկ եօթը տարի՝ սով։ Առատութեան տարիները կանցնեն, սովի տարիներում մարդիկ կկերակրուեն առատութեան տարիների բերքերով։ Ուրեմն, թագաւոր, պէտք է մի խելօք մարդ գտնես և Եգիպտոսի կառավարիչ նշանակես, որպէսզի առատութեան եօթը տարիներում կերակրի պաշար հաւաքէ եօթը սովի տարիների համար»։

Փարաւոնն ասաց Յովսէփին. «Էլ ով պէտք է լինի քեզնից խելօքը և իմաստունը—ամբողջ Եգիպտոսը քեզ եմ յանձնում՝ միայն ես քեզնից մեծ կլիշուեմ»։

Սրանից յետոյ Փարաւոնը պատուիրեց Յովսէփին իւր կառքի մէջ նստացնել և քաղաքի մէջ շրջեցնել—ամենքն էլ նրա առաջ ծունկ էին չոքում։ Թուրմերի աղջիկներից մէկի հետ էլ ամուսնացրեց։ Յովսէփը երկու որդի ունեցաւ, մինի անունը Էփրեմ, իսկ միւսինը՝ Մանասէ դրաւ։

Յովսէփը երեսուն տարեկան էր։ Լիութեան եօթը տարիներում ժողովել տուաւ ցորենը Փա-

բաւոնի շտեմարանների մէջ։ Ժողոված ցորենը նման էր ծովի աւազին։

Անցան լիուբեան և եկան սովի տարինները։ Ժողովուրդն աղաղակում էր և հաց խնդրում Փարաւոնից։ Փարաւոնը պատասխանում էր եգիպտացիներին. «Գնացէք Յովսէփի մօտ և ինչ որ ձեզ կասէ, այնպէս էլ արէք»։ Յովսէփը բաց անել տուաւ շտեմարանների բերաններն ամեն տեղ և ցորեն էր ծախում եգիպտացիներին։ Հեռաւոր երկրներից ևս եգիպտոս էին գալիս ցորեն գնելու։

24. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԳԱԼԻՍ ԵՆ ԵԳԻՊՏՈՍ

Ա. Քանանացւոց երկրում ևս սով էր ընկել։ Յակովբը կանչեց իւր որդիներին և ասաց. «Գնացէք Եգիպտոս ցորեն գնելու, որ սովից չմեռնենք»։ Յովսէփի տասն եղբայրները Եգիպտոս եկան։ Յակովբը Բենիամինին չուղարկեց միւսների հետ, որովհետև վախենում էր, թէ մի գուցէ փորձանք պատահի նրան։

Յովսէփի եղբայրները Եգիպտոս եկան։ Նրանք Յովսէփին չճանաչեցին. երկրպագութիւն տուին և գլուխները քաշ՝ նրա առաջ կանգնեցին։ Յովսէփն իսկոյն ճանաչեց և յիշեց իւր երազները։ Նա իբրև օտարական ներկայացաւ, խիստ լեզուով խօսեց նրանց հետ և հարցրեց. «Որ-

տեղից էք գալիս»։ Նրանք պատասխանեցին. «Քանանացւոց երկրից, որ ցորեն գնենք»։ Յովսէփն ասաց. «Դուք լրտեսներ էք, եկել էք իմանալու, թէ մեր երկիրն ինչ վիճակի մէջ է»։ Նրանք ասացին. «Ոչ, տէր, քո ծառաները եկել են ցորեն գնելու. լրտեսներ չենք. մենք տասներկու եղբայր ենք՝ մի հօր որդի. կրտսեր եղբայրներս տանն է՝ հօր մօտ, իսկ միւսը՝ այլ ևս չկայ»։ Յովսէփը կրկնեց. «Դուք լրտեսներ էք» և երեք օր բանտարկեց նրանց։

Երրորդ օրը Յովսէփն ասաց նրանց. «Ձեզնից մէկը բանտում կապուած կմնայ, իսկ միւսները տուն կգնաք։ Վերադարձին ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ կբերէք, այն ժամանակ միայն ես կհաւատամ ձեզ»։ Եղբայրներն սկսեցին միմեանց նայել և ասել. «Այս բոլոր անբաղտութիւնը Յովսէփի պատճառովն է»։

Նրանք այնպէս էին կարծում, թէ Յովսէփն իրանց լեզուն չէ հասկանում, որովհետև թարգմանի բերանով էր խօսում։ Յովսէփն երեսը շուռ տուաւ և սկսեց լալ։ Յետոյ նրանց աչքի առաջ Շմաւոնին կապել տուաւ, հրամայեց տոպրակները ցորենով լցնել և իւրաքանչիւրի ցորենի գինն էլ պարկի մէջ դնել։

Բ. Եղբայրները ցորենը բեռնեցին էշերին և սկսեցին հեռանալ Եգիպտոսից։ Ճանապարհին նրանցից մէկը իշին կերակուր տալիս պարկի

Թուլացած բերանն ամրացնելիս՝ նկատեց, որ ցորենի գինը պարկի մէջն է դրած։ Իսկոյն լմաց տուաւ եղբայրներին։ Երկիւղից ամենքը զարհուրեցան և ասում էին իրար. «Այս ինչ փորձանք է, որ Աստուած մեր գլխին բերում է»։

Երբ տուն հասան՝ պատմեցին այն ամենն իրանց հօրը։

Պարկերի ցորենները թափելիս՝ իւրաքանչիւրը ցորենի գինը իւր տոպրակի մէջ գտաւ — ամենքն էլ զարհուրանքի մէջ էին։ Հայրն ասաց. «Դուք ինձ անորդի արիք. Յովսէփը և Շմաւոնը չկան, հիմայ էլ Բենիամինին էք ուզում տանել։ Ջէ, նրան չեմ թոյլ տայ, նա միայն է մնացել

Հռաքէլից, եթէ ճանապարհին մի վտանգ պատահի, ես այլ ևս կենդանի չեմ մնայ»։

Գ. Սովը սաստկանում էր Քանանացւոց երկրում։ Բերած ցորենը վերջացաւ։ Յակովբն ասաց որդիներին. «Էլի գնացէք Եգիպտոս ու կերակուր գնեցէք»։ Յուդան պատասխանեց. «Այն երկրի իշխանը մեզ ասաց—եթէ ձեր կրտսեր եղբօրը հետներդ չբերէք, երեսս չտեսնէք։ Թոյլ տուր, հայրիկ, Բենիամինին, որ նա էլ մեզ հետ գայ։ Եթէ նրան մի բան պատահի, ինձանից պահանջիր»։

Յակովբը պատասխանեց. «Ուրեմն այնպէս արէք, ինչպէս ուզում էք—միայն վեր առէք հետներդ մեր երկրի ընտիր բերքերից և իշխանին ընծայ տարէք։ Ձմռանաք ձեր պարկերում գտնուած փողը ևս ետ տանել. ուրիշ փող էլ առէք հետներդ»։ Եղբայրները ճանապարհ ընկան դէպի Եգիպտոս։

Դ. Երբ Յովսէփը եղբայրներին և Բենիամինին տեսաւ, ասաց հազարապետին. «Տուն տար այս մարդկանց և հացի պատրաստութիւն տես, որանք ինձ հետ պէտք է ճաշեն»։

Երբ Յովսէփը տուն եկաւ, եղբայրներն ընծաները ձեռներին երեսների վրայ ընկած՝ երկրպագութիւն տուին։ Նա սիրով ողջունեց և ասաց. «Ի՞նչպէս է ձեր ծերունի հայրը»։ Նրանք

պատասխանեցին. «Մեր հայրը՝ քո ծառան ողջ և առողջ է» ու գլուխ տուին: Յովսէփը նայեց, ճանաչեց Բենիամինին և ասաց. «Կարծեմ սա՞ պէտք է լինի ձեր կրտսեր եղբայրը»: Յովսէփը հեռացաւ իւր սենեակը ու սկսաւ լաց լինել: Ետոյ երեսը լուաց. դուրս եկաւ և պատուիրեց, որ հաց բերեն: Ամեն մէկի համար առանձին-առանձին ճաշ բերին:

Յովսէփի եղբայրներին իրանց տարիքի համաձայն նստացրին առաջ մեծերին, ետոյ՝ կարգով փոքրերին և սկսեցին կերակուր բաժանել: Բենիամինի բաժինը հինգ անգամ աւելի էր լցրած: Այս բանի վրայ եղբայրները շատ զարմացան:

25. ՅՈՎՍԷՓԸ ՅԱՅՏՆԻՈՒՄ Է ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Ա. Յովսէփը ծածուկ հրամայեց հազարապետին և ասաց. «Դրանց պարկերը ցորենով լցնել տուր և իւրաքանչիւրի փողն էլ իրա պարկի մէջ դիր, իսկ իմ սկիհը՝ կրտսեր եղբօր պարկում»: Հազարապետը կատարեց Յովսէփի հրամանը: Հետևեալ օրը եղբայրները ճանապարհ ընկան դէպի տուն: Դեռ քաղաքից նոր էին դուրս եկել, որ Յովսէփը հազարապետին կանչեց ու ասաց. «Հասիր այն մարդկանցն ու ասա – ինչո՞ւ իմ տիրոջ սկիհը գողացաք»:

Հազարապետը հասաւ նրանց և այնպէս էլ

ասաց: Եղբայրները պատասխանեցին. «Աստուած մի՛ արասցէ, որ մենք այդպիսի բան արած լինենք: Ուր մօտ սկիհը գտնէք, թող նա մեռնի, իսկ միւսները քո տիրոջ ծառաները լինեն»: Նա պատասխանեց. «Ո՛չ, ուր մօտ սկիհը գտնուի, թող նա լինի իմ տիրոջ ծառան, իսկ միւսներդ ազատ էք»:

Շտապով վեր բերին պարկերը: Հազարապետը նայեց՝ մեծից մինչև փոքրն ու վերջը Բենիամինի պարկի մէջ գտաւ սկիհը: Եղբայրները սկսեցին իրանց շորերը պատառել—ամեն մէկը իւր էշը բեռնեց ու նորից վերադարձան Եգիպտոս:

Բ. Յուդան իւր եղբայրների հետ դարձաւ Յովսէփի մօտ: Յովսէփն ասաց. «Այդ ինչ արիք»: Յուդան պատասխանեց. «Ինչ պատասխանենք կամ ինչպէս արդարանանք. ահա այստեղ ենք ամենքս և նա, որի մօտ սկիհը գտնուեց – մենք բոլորս էլ քո ծառաներն ենք»:

Յովսէփը պատասխանեց. «Այդպիսի բան ես չեմ անի, որի մօտ սկիհը գտնուել է, նա միայն կլինի իմ ծառան, իսկ միւսներդ ազատ էք»:

Այն ժամանակ Յուդան մօտեցաւ նրան և ասաց. «Տէր, թո՛յլ տուր ծառայիդ քո առաջ մի խօսք ասելու: Մենք առաջ քեզ ասացինք, որ տանը ծերունի հայր և կրտսեր եղբայր ունինք և թէ մեր հայրը նրան շատ է սիրում: Դու մեզ

պատասխանեցիր, եթէ ձեր կրտսեր եղբօրն ինձ չբերէք, երեսս չտեսնէք։ Մենք մեր հօրը հարցրինք և կամենում էինք մեր կրտսեր եղբօրը ևս բերել։ Բայց նա ասաց մեզ—գիտէք որ Հռաքելից երկու որդի ունիմ—մինից զրկուեցի, հիմա էլ սրան էք ուզում տանել։ Եթէ ճանապարհին մի անբաղտութիւն պատահի, ես էլ չեմ ապրի։ Ես՝ քո ծառան երաշխաւոր եղայ հօրս։ Դրա համար էլ ինձ ընդունիր մանկան փոխարէն, որպէս ծառայ, իսկ նա թող եղբայրների հետ հօր մօտ դառնայ—ինչպէս տեսնեմ ես այն սրտնեղութիւնը, երբ ծերունի հայրս Բենիամինին մեզ հետ չտեսնէ»։

Յովսէփն էլ չկարողացաւ իրան պահել, հրամայեց բոլոր եգիպտացիներին դուրս գնալ. սկսաւ բարձր ձայնով լաց լինել և ասել եղբայրներին. «Ես Յովսէփն եմ»։ Եղբայրները վախից չգիտէին, թէ ինչ պատասխանեն նրան, իսկ Յովսէփը շարունակեց. «Մօտ եկէք. ես Յովսէփն եմ՝ ձեր եղբայրը. մի վախէք. տուն դարձէք և ասացէք հօրս, որ Աստուած ինձ ամբողջ Եգիպտոսի տէր է դարձրել—թող շուտով ինձ մօտ գայ։ Նա Գեսեմ երկրում կբնակի։ Պատմեցէք հօրս՝ ինչ որ տեսաք»։

Նա ընկաւ Բենիամինի վզովն ու լաց եղաւ։ Յովսէփը համբուրեց բոլոր եղբայրներին և շարունակ լաց էր լինում։

Գ. Երբ Փարաւոնն իմացաւ, որ Յովսէփի եղբայրներն եկել են, շատ ուրախացաւ։ Նա Յովսէփի բերանով յայտնեց եղբայրներին, որ շտապեն Քանան և հօրը եգիպտոս բերեն—նա խոստացաւ նրանց շատ բարութիւններ անել։

Յովսէփը կառքեր տուաւ, նմանապէս ճանապարհի պաշար։ Բացի դրանից հօր համար տասն էշ ուղարկեց՝ բարձած եգիպտոսի բարիքներով, նոյնպէս տասը ջորի ցորենով։

Նրանք հեռացան Եգիպտոսից. եկան Քանան և պատմեցին հօրն իրանց գլխովն անցածը։ Յակովբը չէր հաւատում, բայց երբ կորած որդու ուղարկած կառքերը տեսաւ, սթափուեցաւ և ա-

ասաց. «Մի՛թէ իմ Յովսէփը կենդանի է, շտապեմ նրան տեսնել՝ քանի որ չեմ մեռել»։

26. ՅԱԿՈՎԲԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Ա. Յակովբը տեղափոխուեց Եգիպտոս 66 հոգւով։ Երբ Եգիպտոսի և Քանանի սահմանի մօտ գտնուող Բերսաբէ քաղաքը հասաւ, Աստուած ասաց նրան տեսիլքում. «Ես քո հօր ամենակարող Աստուածն եմ. մի՛ վախեցիր. գնա՛ Եգիպտոս. այնտեղ քեզ մեծ ազգ կդարձնեմ—ես քեզ հետ եմ գալիս»։

Այս խօսքերից եաոյ Յակովբը հեռացաւ Բերսաբէից։ Նա Յուդային առաջուց Յովսէփի մօտ ուղարկեց, որ իր գալուստը յայտնէ։ Յովսէփն ալս լուրն առնելուն պէս՝ իսկոյն լծել տուաւ կառքը և եկաւ հօրն ընդունելու։ Երբ Յովսէփը հօրը տեսաւ, վզովն ընկաւ ու երկար ժամանակ լաց էր լինում։ Յակովբն ասաց. «Հիմա հանգիստ կմեռնեմ՝ քեզ տեսնելուց եաոյ»։ Սրանից եաոյ Յովսէփն ասաց. «Ես շտապում եմ Փարաւոնին իմաց տալու ձեր գալուստը»։

Բ. Յովսէփն եկաւ Փարաւոնի մօտ և ասաց. «Իմ հայրը և իմ եղբայրները եկել են Քանանացւոց երկրից ու Գեսեմումն են, թոյլ տուր գնամ նրանց ընդունեմ»։

Փարաւոնն ասաց Յովսէփին. «Քո հօր և եղբայրների համար իմ երկրի մէջ ամենալաւ տեղն ընտրիր—բնակեցրու նրանց Գեսեմում։ Եթէ նրանց մէջ քաջ մարդիկ կան, նշանակիր խաշներիս վրայ վերակացու»։

Յովսէփն ընդունեց հօրը և ներկայացրեց Փարաւոնին։ Փարաւոնը հարցրեց Յակովբին. «Քանի՞ տարեկան ես»։ Յակովբը պատասխանեց. «Թէև ես 130 տարեկան եմ, բայց կեանքումս մի լաւ օր չեմ տեսել»։ Յակովբն օրհնեց Փարաւոնին և հեռացաւ։

Յովսէփը հօրն ու եղբայրներին բնակեցրեց Գեսեմում։

Գ. Յակովբը իւր ընտանիքի հետ 17 տարի բնակուեց Գեսեմ երկրում։ Երբ մահուան օրերը մօտեցան, կանչեց Յովսէփին և ասաց. «Իմ մարմինը կտանես Քանան և կթաղես պապերիս մօտ՝ Կրկին-Այրում»։ Յովսէփը պատասխանեց. «Այնպէս կանեմ, ինչպէս դո՛ւ կամքն է»։

Սրանից եաոյ նորից իմաց տուին Յովսէփին, որ հայրը հիւանդ է։ Յովսէփն իսկոյն վեր առաւ իւր որդիներին՝ Եփրեմին և Մանասէին ու գնաց հօր մօտ։ Յակովբը ոյժ ստացաւ. տեղից վեր կացաւ. նստեց անկողնի մէջ և ասաց Յովսէփին. «Քո երկու որդիներն էլ՝ Եփրեմն ու Մանասէն իմն են, ինչպէս Ռուբէնն ու Շմաւոնը»։ Նա որդոցից թոռներին. ձեռները գլխներին դրաւ՝ օրհնեց և ասաց. «Իմ հայրերի Աստուածը թող

օրհնէ այս մանուկներին, որպէսզի սրանք աճեն և բազմանան երկրիս վրայ»։

Եւոյ Յովսէփի հետ խօսեց՝ մարգարէացաւ ու ասաց. «Ահա ես մեռնում եմ, բայց Աստուած

մի օր նորից ձեր հայրերի երկիրը կդարձնէ ձեզ»։

Սրանից եւոյ Յակովբը կանչեց մեւս որդիներին, օրհնեց իւրաքանչիւրին առանձին-առանձին և ասաց. «Ինձ կթաղէք Քանանացւոց երկրում, Կրկին-Այրի մէջ»։ Երբ իւր պատուէրը վերջացրեց, խփեց աչքերը և բաժանուեց ամենից։ Յովսէփն ընկաւ հօր վրայ և լաց էր լինում։ Եգիպտացիները նոյնպէս սգում էին Յակովբի մահը եօթանասուն օր շարունակ։

Երբ սգոյ օրերն անցան, Յովսէփն ասաց Փարաւոնին. «Հայրս ինձ խնդրել է, որ նրան Քանանացւոց երկրում թաղեմ. ես գնում եմ. թաղելուց եւոյ՝ կվերադառնամ»։ Փարաւոնն ասաց. «Գնա և թաղիր քո հօրը»։

Յովսէփը մեծ բազմութիւնով ճանապարհ ընկաւ»։ Դիակը տարան Քանանացւոց երկիրը և թաղեցին Կրկին-Այրի մէջ։ Սրանից եւոյ ամենքն էլ եգիպտոս վերադարձան։

27. ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ

Ա. Յակովբի մահուանից եւոյ Յովսէփի եղբայրները վախենում էին—նրանք ասում էին. «Յովսէփը մեր դէմ ոխ կունենայ»։ Սրա համար եկան նրա մօտ և ասացին։ «Ներիր մեր յանցանքները»։ Այս բանի վրայ Յովսէփն սկսեց լաց լինել և ասել. «Մի վախենաք, դուք իմ մասին

չար ժառածեցիք, իսկ Աստուած՝ բարի։ Մի վախենաք, ես ձեզ էլ և ձեր որդիներին էլ կկերակրեմ»։

Ք. Երբ Յովսէփը 110 տարեկան դարձաւ, ասաց եղբայրներին. «Ահա ես մեռնում եմ, Աստուած ձեզ մի օր պէտք է հանէ այս երկրից ու տանէ Քանանացւոց աշխարհը։ Երբ դուք տեղափոխուէք, չմոռանաք իմ ոսկորներն էլ ձեզ հետ տանելու»։

Այսպէս մեռաւ Յովսէփը։ Նրան զմռսեցին և թաղեցին Եգիպտոսում։

Գ. ԻՍՐԱՅԷԼԱՑԻՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա. ՄՈՎՍԷՍ

28. ԻՍՐԱՅԷԼԻ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Յովսէփը մեռել էր։ Մեռել էին նրա բոլոր եղբայրները. անցել էր 430 տարի, բայց նրանց ժառանգներն այնքան էին բազմացել, որ երկիրը լցուել էր։ Այդ ժամանակ Եգիպտոսումնոր փարաւոն էր իշխում, որը Յովսէփին մոռացել էր։

Նա ասաց եգիպտացիներին. «Իսրայէլացիները չափից դուրս բազմացել են, եթէ մի պատերազմ պատահի, կարող են մեր թշնամու հետ միանալ



ու մեր դէմ պատերազմել, ուստի պէտք է նրանց ոչնչացնել»։

Սրա համար թագաւորը վերակացուներ նշանակեց, որ չարչարեն նրանց։ Եւ նրանք անգութ կերպով ստիպում էին իսրայէլացիներին աշխա-

տելու թէ աղիւսի գործարաններում և թէ պաշտում—փարաւոնի համար ձրի՝ ամուր քաղաքներ և շէնժարանները էին շինում։ Բայց որքան եգիպտացիները չարչարում էին իսրայէլացիներին, այնքան սրանք աճում և բազմանում էին։ Փարաւոնը տեսաւ, որ այս միջոցով իւր նպատակին չէ հասնում, հրամայեց եբրայեցիների նորածին արու զաւակներին ջուրը ձգեն, իսկ աղջիկներին՝ խնայեն։

29. ՄՈՎՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Ղևիի ցեղից մէկը՝ Ղևւի անունով մի մարդու աղջկայ հետ ամուսնացաւ և նրանից մի գեղեցիկ արու զաւակ ունեցաւ։ Մայրը երեք ամիս ծածուկ էր պահում։ Երբ այլևս անկարող եղաւ թաք կացնել, եղեգնից մի զամբիւղ հիւսեց. կպրաձիւթով ծեփեց. տղային նրա մէջը դրաւ և Նեղոսի եղեգնուտ ափը թողեց։ Մանկան քոյրը հեռուից դիտում էր՝ տեսնելու թէ եղբօրն ինչ կպատահէ։

Փարաւոնի աղջիկը Նեղոսի ափն իջաւ լողանալու։ Նաժիշտները գետի ափում շրջում էին։ Թագաւորի աղջիկը հեռուից նկատեց զամբիւղը, նաժիշտներից մէկին ուղարկեց, որ բռնէ։ Հրամանը կատարուեց, զամբիւղն իրան բերին, բայց արեց ու տեսաւ, որ մէջը մի մանուկ լայց էր լինում։ Թագաւորի դուստրը գթաշարժուեց և ա-

սաց. «Սա եբրայեցիների մանուկներից պիտի լինի»։ Մանուկի քոյրը մօտեցաւ և ասաց փարաւոնի աղջկան. «Արդեօք չես կամենայ մի եբ-

րայեցի ծծմայր կանչեմ, որ մանկանը կերակրէ»։ Փարաւոնի աղջիկն ասաց. «Գնա և կանչիր»։

Աղջիկն շտապեց հարազատ մօրը կանչելու։ Մայրն եկաւ։ Փարաւոնի աղջիկն ասաց. «Ա՛ռ

այս մանուկը, մեծացրու, ես քո վարձը կվճարեմ»։ Մայրն առաւ մանկանը և պահում էր նրան։ Երբ մեծացաւ, մայրը թագաւորի աղջկայ մօտ բերաւ։ Իշխանուհին որդեգրեց նրան և անուանեց Մովսէս, որ նշանակում է ջրից հանած։ Մովսէսն ուսաւ Եգիպտոսում այն բոլոր գիտութիւնները, որոնք յայտնի էին այն ժամանակ և դարձաւ մի իմաստուն մարդ։

30. ՄՈՎՍԷՍԻ ՓԱԽՈՒՍՏԸ

Երբ Մովսէսը չափահաս դարձաւ, գնաց իսրայէլացիների մօտ նրանց չարչարանքները տեսնելու։ Մի անգամ նա տեսաւ, որ վերակացուն իսրայէլացիներից մէկին ծեծում էր։ Նայեց իւր շուրջը և երբ ոչ ոքի չտեսաւ, սպանեց եգիպտացուն և թաղեց աւազի մէջ։

Միւս անգամ ևս դուրս գնաց և տեսաւ, որ երկու իսրայէլացիներ են միմեանց հետ կռուում, Մովսէսը դարձաւ յանցաւորին ու ասաց. «Ինչու ես քո ընկերին ծեծում»։ Նա պատասխանեց. «Քեզ ո՞վ նշանակեց մեզ վրայ դատաւոր, չլինի՛ թէ դու էլ երեկուայ եգիպտացու նման ուզում ես սպանել»։ Մովսէսը զարհուրեց, երբ իմացաւ, որ իւր սպանութիւնը յայտնուել է։ Այս բանը փարաւոնի ականջին հասաւ։ Նա կամենում էր Մովսէսին սպանել, բայց նա փախաւ Մադիամացւոց երկիրը։

Մադիամի քուրմը եօթն աղջիկ ունէր։ Նրանք եկան ջրհորի մօտ՝ խաշները ջրելու համար։ Ուրիշ հովիւներ ևս եկան և աղջիկներից խլեցին ջրի հերթը։ Մովսէսը տեղից վեր կացաւ, օգնեց աղջիկներին և խաշներին խմացրեց։

Երբ աղջիկները տուն դարձան, հայրը հարցրեց. «Ինչու այսօր վաղ եկաք»։ Նրանք պատասխանեցին. «Մի եգիպտացի օգնեց մեզ, ջուր հանեց և մեր ոչխարներին խմացրեց»։ Յոթորն ասաց. «Ո՞րտեղ է այն մարդը, ինչու նրան հացի չկանչեցիք»։ Մովսէսին տուն հրաւիրեցին։ Յոթորը յանձնեց նրան իւր ոչխարները, որ արածացնէ և վերջը իւր Սեպովրա աղջկայ հետ էլ ամուսնացրեց։

31. ԱՍՏՈՒԾ ԿԱՆՉՈՒՄ Է ՄՈՎՍԷՍԻՆ

Մովսէսն անապատում արածացնում էր Յոթորի խաշները։ Մի անգամ մօտեցաւ Քորէբ լերանը և տեսաւ, որ մի մորենի վառւում էր, բայց չէր այրւում։ Մովսէսը մօտեցաւ իմանալու, թէ սա ինչ բան է։ Իսկոյն թփի մէջից ձայն եկաւ. «Մովսէս, Մովսէս»։ Նա պատասխանեց. «Ինչ է, Տէր»։ Ձայնը կրկնեց. «Հան կօշիկներդ, այդ տեղը սուրբ է. ես եմ Աբրահամի, Իսահակի և Յակովբի Աստուածը։ Ես տեսայ իմ ժողովրդի նեղութիւնները Եգիպտոսում. ես կամենում եմ նրանց Քանան տանել, ուր մեղր և կաթն

է բղխում. ես քեզ Եգիպտոս եմ ուղարկում Փարաւոնի մօտ, որ իմ ժողովրդին ազատես»։ Մովսէսն ասաց Աստծուն. «Եթէ ես իսրայէլացիներին մօտ գնամ և ասեմ, թէ ձեր հայրերի Աստուած Տէրն ինձ ուղարկեց, չեն հաւատայ»։ Աստուած ասաց. «Ձեռիդ գաւազանը գետին ձգիր»։ Նա էլ ձգեց և գաւազանն օձ դարձաւ։ Մովսէսը վախեց և փախաւ։ Աստուած ասաց. «Բռնիր օձին»։ Նա բռնեց և օձն իսկոյն գաւազան դարձաւ։ Աստուած շարունակեց. «Ձեռդ ծոցդ դիր»։ Դրաւ, բայց դուրս հանելիս՝ տեսաւ, որ բորոտուել է – սպիտակ՝ ինչպէս ձիւն։ Աստուած ասաց նրան. «Ձեռդ նորից ծոցդ դիր»։ Նա էլ կատարեց և տեսաւ, որ միւս ձեռի նման առողջ է։ Աստուած ասաց. «Եթէ այս երկու հրաշքներին չեն հաւատայ, Նեղոսից ջուր կառնես, կսրսկես գետնի վրայ—գետի ջուրն իսկոյն արիւն կդառնայ»։

Մովսէսն ասաց Աստծուն. «Տէր, ես ծանրաբեռու եմ»։ Աստուած ասաց. «Քո ճարտարախօս եղբայր Ահարոնը քեզ հետ կգայ, քո փոխարէն ժողովրդի հետ նա կխօսէ»։

Այս բանից յետոյ Մովսէսը Յոթորի մօտ գնաց և ասաց. «Ուզում եմ Եգիպտոս դառնալ և տեսնել, թէ իմ եղբայր իսրայէլացիները կենդանի են թէ ոչ»։ Յոթորն էլ ասաց Մովսէսին. «Գնա խաղաղութեամբ» Մովսէսն անապատում հանդիպեց Ահարոնին և յայտնեց նրան Աստծու

կամքը։ Մովսէսը տեղեկացաւ, որ հին փարաւոնն արդէն մեռել է։ Երկու եղբայրները գնացին և



Իսրայէլի ժողովրդի ծերերին մի տեղ հաւաքեցին։ Ահարոնը յայտնեց նրանց Աստծու կամքը, իսկ Մովսէսը ցոյց տուաւ այդ հրաշքները

ժողովրդի առաջ։ Երբ ծերերն իմացան, որ Աստուած ուզում է իրանց ազատել, սկսեցին աղօթել և շնորհակալութիւն անել։

32. ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Մովսէսն ու Ահարոնը գնացին փարաւոնի մօտ և ասացին. «Իսրայէլի Աստուածն ասում է—արձակիր իմ ժողովրդին»։ Փարաւոնը բարկացաւ և ասաց. «Այդ Աստծուն ես չեմ ճանաչում»։

Փարաւոնն իսկոյն հրամայեց վերակացուներին, որ ժողովրդին աւելի չարչարեն։ Վերակացուներն էլ թագաւորի կամքը կատարեցին։

Իսրայէլացիները գանգատուեցին Մովսէսին, Ահարոնին և ասացին. «Աստուած ձեր դատաստանն անէ. դուք թագաւորին բարկացրիք մեզ վրայ»։ Մովսէսն սկսեց խնդրել Աստծուն և ասել. «Տէր, ինչու ես քո ժողովրդին չարչարում. այն օրից, երբ ես փարաւոնի մօտ գնացի, նրանց աւելի են չարչարում»։ Աստուած ասաց Մովսէսին. «Այժմ դու կտեսնես, թէ ես փարաւոնին ինչ կանեմ»։

Սրանից եաոյ Աստուած մինը միւսի եաեւից պատիժներ ուղարկեց եգիպտացիների համար—գորտ, մուկ, կարկուտ, մորեխ... միայն Գեսեմ երկիրն ազատ մնաց։ Այն ժամանակ եգիպտացիները ասացին. «Աստուած սրանց հետ

է»։ Հէնց որ մի պատիժ գալիս էր, փարաւոնը ասում էր Մովսէսին և Ահարոնին. «Ժողովրդին կարձակեմ», իսկ երբ պատիժն անցնում էր, խօսքը փոխում էր։

Աստուած ասաց Մովսէսին. «Մի պատիժ էլ կուղարկեմ և փարաւոնը կարձակէ ձեզ»։ Կէս գիշերին Եգիպտոսի բոլոր անդրանիկները կմեռնեն, իսկ իսրայէլացիներից ոչ ոք չի վնասուի»։

Աստուած շարունակեց խօսել Մովսէսի հետ. «Ձեզանից ժողովրդին, որ այս ամիսը նրանց համար առաջին ամիսը (նիսան) պիտի լինի. այս ամսի տասն ու չորսին ամեն տան տէր երեկոյեան պէտք է մի գառը մորթէ. ամբողջապէս

խորովէ և իւր ընտանիքի հետ գիշերն ուտէ։ Դրա հետ պէտն է ուտեն քաղաղջ հաց։ Ընթրիքն այսպէս կանեն—գօտին կապած, կօշիկները հագած, գաւազանը ձեռին»։ Այդպէս էլ արին։

Այդ միևնոյն գիշերն Աստուած սպանեց Եգիպտոսի բոլոր անդրանիկներին։ Փարաւոնը կանչեց Մովսէսին, Ահարոնին և ասաց. «Շուտ պեցէք, հեռացէք իմ երկրից»։ Այսպէս իսրայէլացիները Եգիպտոսից դուրս եկան՝ թուով վեց հարիւր հազար՝ չհաշուելով կանանց և երեխաներին։ Այսպէս իսրայէլացիները չորս հարիւր երեսուն տարի Եգիպտոսում ծառայութ եղոյ՝ հեռացան։ Մովսէսը տարաւ իւր հետ Յովսէփի ոսկորները ևս։ Աստուած նրանց մի ամպէ սիւն տուաւ՝ ցերեկը, իսկ մի կրակէ սիւն էլ՝ գիշերն առաջնորդելու համար։



33. ԿԱՐՄԻՐ ԾՈՎԸ ԱՆՑՆԵԼԸ

Իսրայէլացիների դուրս գալուց եռոյ՝ թագաւորի սիրտը նորից փոխուեց—նա ասաց. «Ինչու արձակեցի ձրի մշակներին»։ Ուստի վեր առաւ զօրք, վեց հարիւր պատերազմական կառք, հեծելազօր և հասաւ նրանց կարմիր ծովի մօտ։

Երբ իսրայէլացիները տեսան եգիպտացիներին, խիստ վախեցան, սկսեցին գանգատուել

Աստծուն և ասել Մովսէսին. «Մի՞թէ Եգիպտոսում գերեզմաններ չկային, որ մեզ բերիր այս տեղ թաղելու»։ Մովսէսը պատասխանեց. «Մի վախենաք, դուք շուտով կտեսնէք, թէ Աստուած ինչպէս է ազատելու ձեզ»։

Աստուած ասաց Մովսէսին. «Ա՛ռ գաւազանդ և խփիր ծովի ջրին»։ Երբ Մովսէսը խփեց, ջուրը իակոյն երկու կողմից պատի նման կանգ-

նեց, քամի փչեց, յատակը չորացրեց և իսրայէլացիները միւս ափն անցան։ Եգիպտացիները կառքերով և երիվարներով հետևեցին նրանց։

Աստուած ասաց Մովսէսին. «Գաւազանդ խփիր ծովին, որ ջուրը միանայ»։ Մովսէսն այնպէս էլ արաւ և ծովը միացաւ։ Եգիպտացիրերն սկսեցին փախչել, իսկ ջուրը ծածկեց փարաւոնի զօրքին—ոչ մէկն էլ կենդանի չմնաց։

Մովսէսի քոյր Մարիամը շատ իսրայէլացի կանանց հետ սկսեցին երգել և ասել. «Օրհնեցէք Աստծուն, նա փառաւոր գործ կատարեց—փարաւոնին պատժեց—Աստուած մեր օգնականն է։

34. ԻՍՐԱՑԷԼԱՑԻՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ԱՆԱՊԱՏՈՎ

Մովսէսը շարունակեց ճանապարհը կարմիր ծովից դէպի անապատ՝ երեք օր շարունակ։ Վերջապէս հասան Մռռա, որտեղի ջուրը դառն էր։ Ժողովուրդը գանգատուեց Մովսէսին և ասաց. «Ինչ պէտք է խմենք»։ Մովսէսն աղօթեց Աստծուն։ Աստուած Մովսէսին մի փայտ ցոյց տուաւ, որը ջուրը ձգեց և խմոյն քաղցրացաւ։

Այդ տեղից իսրայէլացիները եկան Սին անապատը։ Իսրայէլացիները նորից գանգատուեցին Մովսէսին և Ահարոնին. «Ներանի մենք Եգիպտոսում մեռնէինք. այնտեղ կաթսաներով միս ունէինք և առատ հաց. դուք բերիք մեզ այս անապատ տեղը սովամահ անելու»։ Աստուած ասաց Մովսէսին. «Ես երկնքից հաց կթափեմ ձեզանց համար. ժողովուրդը թող ամեն օր մի օրուայ պաշար ժողովէ, իսկ վեցերորդ օրը թող երկու անգամ աւելի հաւաքէ»։ Մովսէսն ու Ա-

հարոնը յայտնեցին այս բանն իսրայէլացիներին և ասացին. «Երեկոյեան միս կուտենաք, իսկ առաւօտեան՝ հաց»։ Երեկոյեան դէմ եկան լորա-

մարգինները և ծածկեցին ամբողջ բանակը, իսկ առաւօտը գետինը պատած էր ցօղով։ Երբ ցօղը հեռանում էր, գետնի վրայ ճնում էր կլոր և սպիտակ՝ եղեամի նման մի բան։ Իսրայէլացիները, երբ այս բանը տեսան, հարցնում էին իրար. «Այս ի՞նչ բան է»։ Մովսէսն ասաց. «Սա Աստծու ուղարկած հացն է»։ Իսրայէլացիներն այս հացի անունը մանանայ դրին և առաւօտներն էին հաւաքում։ Այսպէս նրանք միշտ մանանայ էին ուտում, քանի որ անապատումն էին։



Մանանայի ծառ *)

*) Արաբական թերակղզու վրայ, որտեղով Մովսէսը իսրայէլացիներին Քանան պիտի տանէր, մի տեսակ թուփ կայ՝ տամարիսկ անունով։ Սրա բնի և ճիւղերի վրայ կլոր, բրթոտ հատիկներ են գոյանում (ա.), (բ. նոյնը մեծացրած), (գ. հատիկի ներքին մասը)։ Այդ հատիկները՝ արևի ջերմութիւնից հալւում և վայր են ծորում (դ.)։ Այս կլոր, սպիտակ և բրթոտ հատիկները կոչւում են մանանայ։

35. ՍԻՆԱՅԻ ՕՐԷՆՍՏՒՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսից դուրս գալու երկրորդ ամսում իսրայէլացիները հասան Սինա լեառը։ Մովսէսը լեառը բարձրացաւ։ Աստուած ասաց նրան. «Իսրայէլացիներին այսպէս կասես—դուք տեսաք, թէ ես եգիպտացիներին ինչ արի. ինչպէս ձեզ ազատեցի. եթէ ինձ լսէք, ընտրեալ ժողովուրդս կլինէք բոլոր ազգերի մէջ։ Դուք քահանաների նման ուսուցիչ պիտի լինէք և բոլոր ազգերին քարոզէք իմ կամքը»։ Մովսէսն իջաւ լեռնից և Աստծու կամքը յայտնեց նրանց։ Բոլոր ժողովուրդն ի միասին պատասխանեց. «Աստծու բոլոր պահանջները կկատարենք»։ Մովսէսը յայտնեց այս բանն Աստծուն։ Աստուած ասաց նրան։ «Եթէ այդպէս է, գնա ժողովրդի մօտ և պատուիրիր, որ լուացուեն, մաքրուեն և երրորդ օրը մաքուր շորերով ինձ մօտ բեր»։ Մովսէսն այդպէս էլ արաւ։

Վերջապէս հասաւ երրորդ օրը։ Առաւօտը վաղ՝ լեառն սկսաւ որոտալ և կայծակել. մութ ամպերը ծածկեցին սարի գլուխը և փողի ձայն էր լսւում։ Մովսէսը ժողովրդին բանակից դուրս հանեց ու տարաւ լերան մօտ։ Սինա լեառն ամբողջապէս ծխի մէջ կորած էր. կրակի բոցեր էին բարձրանում և շարժւում էր—փողի ձայնը հետզհետէ սաստկանում էր։

Հէնց այդ ժամանակ Աստուած սկսաւ խօսել ժողովրդի հետ և ասել.

ա. 1. «Ես եմ քո Տէրը Աստուածը—բացի ինձնից ուրիշ Աստուած չունենաս»։

բ. 2. Կուռք չշինես ու երկրպագութիւն չտաս նրան։

գ. 3. Քո Աստծու անունով սուտ մի՛ երդուիր։

դ. 4. Շաբաթը օրը սուրբ պահի՛ր։

ե. 5. Պատուի՛ր քո հօրն ու մօրը, որ երկար կեանք ունենաս։

զ. 6. Մի՛ սպանիր։

է. 7. Մի՛ շնար։

ը. Մի՛ գողանար։

թ. 9. Քո ընկերոջ մասին սուտ վկայութիւն մի՛ տար։

ժ. 10. Մի՛ ցանկանար քո ընկերոջ աղախնին, ծառային, տանը, արտին, եզանը, էշին եւ ինչ որ նրանն է»։

Ժողովուրդը հեռացաւ, իսկ Մովսէսը նորից լեռը բարձրացաւ։ Աստուած խօսում էր Մովսէսի հետ։ Մովսէսը լեռնից վայր էջաւ և յայտնեց ժողովրդին Աստծու բոլոր պատուէրները։

Մովսէսը դարձեալ բարձրացաւ լեռը և քառասուն օր այնտեղ մնաց։ Երբ Աստուած իւր խօսակցութիւնը վերջացրեց Մովսէսի հետ Սինա լեռան վրայ, երկու քարէ տախտակներ տուաւ նրան, որի վրայ գրաւած էին պատուիրանները, որպէսզի չմոռանան։

36. ՈՍԿԷ ՀՈՐԹԸ

Երբ ժողովուրդը տեսաւ, որ Մովսէսն ուշացաւ, մի քանի խրոխտաբար մարդիկ եկան Ահարոնի մօտ և ասացին. «Չինե՛ր մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն, Մովսէսը չգիտենք ինչ եղաւ»։ Ահարոնը պատասխանեց. «Բերէ՛ք ինձ ձեր կանանց և աղջիկների ոսկէ գնդերը»։ Նրանք էլ բերին։ Ահարոնն այդ գնդերից մի ոսկէ հոլով ձուլեց։ Նոր Աստուած ցան-

կացողները, երբ տեսան, որ իրանց գործը յաջողեց, ժողովրդին ասացին. «Ահա ձեր Աստուա-



ծը»։ Ահարոնն էլ սեղան շինեց և ասաց. «Վաղը Աստծու տօնն է»։ Առաւօտը վաղ՝ ժողովուրդը ողջակէզ արաւ և սկսեց ուտել, խմել և պարել ոսկէ հորթի չորս կողմը։

Հէնց այդ ժամանակ Մովսէսն իջաւ լեռնից՝

ձեռին բռնած երկու քարէ տախտակները։ Երբ բանակին մօտեցաւ, տեսաւ ոսկէ հորթը և պարաւորներին, բարկացաւ, տախտակները ձեռից վայր ձգեց և կոտրատեց։ Եւոյ նրանց շինած ոսկէ հորթն այրեց. փոշի դարձրեց. ջրի մէջ ածեց և իրանց խմացրեց։ Ապա Ահարոնին դար-

ձաւ և ասաց. «Այս ժողովուրդը քեզ ինչ արեց, որ այսպիսի յանցանքի մէջ ձգեցիր»։ Եւոյ դարձաւ ժողովրդին և ասաց. «Ճշմարիտ Աստծուն պաշտողները թող ինձ մօտ գան»։ Ղևիի բոլոր ցեղը նրա մօտ հաւաքուեց։ Մովսէսն ասաց. «Հանէք ձեր սրերը. անցէք բանակի մի ծայրից մինսը և սպանեցէք կուռք պաշտողներին»։ Ղևիե

որդիները կատարեցին Մովսէսի հրամանը։ Այդ օրը երեք հազար մարդ սպանուեց։

Առաւօտը Մովսէսն ասաց ժողովրդին. «Դուք մեծ յանցանք էք գործել. ես լեառը կբարձրանամ. Աստծուն կխնդրեմ, որ ձեր յանցանքը ներէ»։ Մովսէսն ասաց Աստծուն. «Ժողովուրդը մեծ յանցանք է գործել. ներիր, իսկ եթէ չես ներիր, այն ժամանակ իմ անունն էլ քո ցուցակից ջնջիր»։ Աստուած ասաց Մովսէսին. «Յանցաւորների անունները կջնջեմ, իսկ դու գնա և առաջնորդիր նրանց»։ Աստուած ասաց Մովսէսին. «Երկու քարէ տախտակներ բեր, որ առաջին տախտակների պատգամները գրեմ»։ Մովսէսը կատարեց Աստծու պատուէրը։ Աստուած նորից գրեց տախտակների վրայ պատգամները։


3.

Այդ տախտակները կոչւում են տասնաբանեայ պատգամները, որոնց պահում էին մի ոսկեզօծ արկղի մէջ, որ կոչւում էր ուխտի տապանակ։

37. ԼՐՏԵՍՆԵՐ

Իսրայէլացիները մի ամբողջ տարի ճնացին Սինա լերան մօտ։ Դրանից յետոյ գնացին դէպի Փառան անապատը։ Այնտեղ Աստուած խօսեց

Մովսէսի հետ և ասաց. «Իւրաքանչիւր ցեղից մի մարդ ուղարկիր Քանանացւոց աշխարհը, որ լրտեսեն»։ Մովսէսը տասներկու մարդ ընտրեց ու Քանան ուղարկեց։ Դրանց մէջն էր և Յեսու անունով մէկը։ Մովսէսը պատուիրեց նրանց և ասաց. «Գնացէք և տեսէք, թէ ինչպիսի երկիր է Քանանը. ոմքեր են նրա բնակիչները. զօրեղ թէ թոյլ մարդիկ են. մազմամարդ է երկիրը, թէ սակաւամարդ. հաստատուն և ամուր քաղաքներում են ապրում, թէ վրանների տակ. երկիրը պտղաբե՞ր է՝ թէ ոչ։ Վերադառնալիս երկրի պտուղներից հետները բերէք»։

Սրանք գնացին և լրտեսեցին ամբողջ երկիրը։ Եւ դարձան Բերբրոն, ուր մի հատ որթ կտրեցին մի հատ ողկուզով և երկու մարդիկ լծակով հետները բերին։ Բառասուն օրից յետոյ վերադարձան Փառան և ցոյց տուին հետները բերած պտուղները։ Լրտեսողներն ասում էին. «Մենք գնացինք այն երկիրը, ուր մեղր ու կաթն է զոհւում. բնակիչները զօրեղ մարդիկ են. քաղաքներն ամուր են և մեծ»։ Յեսուն և Քաղեբը ասում էին. «Մենք կարող ենք Քանանը նուաճել», իսկ միւսները հակառակում էին և ասում. «Մենք չենք կարող նրանց հետ կռուել, նրանք մեզնից շատ զօրեղ են. Քանանում այնպիսի հսկայ մարդիկ տեսանք, որ մենք մորեխ էինք երևում նրանց առաջ»։

Ամբողջ ժողովուրդը ոտի կանգնեց, սկսաւ

աղաղակել և լաց լինել։ Կրկին տրտնջացին Ահարոնից, Մովսէսից և ասացին. «Երանի՛ Եգիպտոսում մեռած լինէինք։ Ընտրենք առաջնորդներ և վերադառնանք Եգիպտոս»։ Ժողովուրդը քիչ մնաց որ քարկոծէր երկուսին էլ։

Այս բանիցետոյ Աստուած ասաց Մովսէսին. «Մինչև ե՞րբ պէտք է այս ժողովուրդն ինձ քարկացնէ և իմ հրաշքներին չհաւատայ. ես կը պատժեմ դրանց. նրանցից ոչ մինը չպիտի տեսնէ Խոստացեալ երկիրը. նրանց ոսկորները պիտի փտեն անապատում. քսան տարեկանից մեծը չի մտնի Քանան, իսկ դուք քառասուն տարի անապատում հովիւներ կլինէք։ Առաւօտը վերադարձէք կարմիր ծովի անապատը»։ Մովսէսն այս բոլորը յայտնեց իսրայէլացիներին։ Ժողովուրդը լաց էր լինում։ Նրանք վերստին դարձան անապատ։

Այստեղ իսրայէլացիները 40 տարի մնացին և մեծ նեղութիւն էին կրում—անապատում թունաւոր օձեր կային, խայթում էին և մահացնում։ Ժողովուրդը գանգատուեց Մովսէսին և խնդրեց, որ ազատէ օձերից։ Մովսէսն էլ Աստծու հրամանով մի պղնձէ օձ շինել տուաւ, բարձրացրեց խաչաձև ձողի վրայ և ասաց. «Ումի օձը խայթէ, թող նայէ այս պղնձէ օձին և կը-բժշկուէ»։ Խայթուողներն էլ այդպէս էին անում և բժշկւում։

Պղնձէ օձն օրինակ է Յիսուս Քրիստոսին —

ով խաչի վրայ բարձրացած Յիսուսին կհաւատայ, նա կբժշկուի—երջանիկ կլինի։



38. ՄՈՎՍԷՍԻ ՄԱՀԸ

Երբ քառասուն տարին անցաւ, իսրայէլացիները նորից գնացին դէպի Խոստացեալ երկրի

սահմանները։ Այնտեղ Աստուած խօսեց Մովսէսի հետ և ասաց. «Բարձրացիր Նաբաւ լեառը և մեռիր Քանանացւոց երկիրը, իսկ տեսնելուցետոյ պիտի մեռնես»։ Մովսէսը պատասխանեց. «Տէր, ժողովրդի վրայ մի առաջնորդ նշանակիր»։ Աստուած պատասխանեց. «Վեր առ Նաւեայի որդի Յեսուին. տար ժողովրդի մօտ և կանգնացրու Եղիազար քահանայի առաջ. դիր քո ձեռը նրա գլխին և տուր նրան իշխանութիւնդ և զօրութիւնդ»։

Մովսէսը կանչեց ժողովրդին և Աստծու պատուէրը յայտնեց նրանց։ Նա ասաց. «Ես արդէն հարիւր քսան տարեկան ծերունի եմ. ձեզ այլևս առաջնորդել չեմ կարող. Աստուած ասաց ինձ, որ ես Քանան չպիտի մտնեմ։ Բայց մի վախեցէք. Աստուած ինքը կառաջնորդէ. նա ձեզ չի մոռանայ. Յեսու Նաւեան կանցնէ ձեզ հետ Յորդանանը»։

Մովսէս դարձաւ Յեսուին և ժողովրդեան ներկայութեամբ ասաց. «Քաջացիր և զօրացիր, դու պէտք է տանես ժողովրդին Աստծու խոստացած երկիրը, դու պէտք է բաժանես երկիրը նրանց մէջ»։

Սրանիցետոյ Մովսէսը Նաբաւ լեառը բարձրացաւ։ Աստուած ցոյց տուաւ նրան Քանանը։ Եւ Աստծու ծառայ Մովսէսը մեռաւ Մովաբացւոց երկրում։ Նրա դերեզմանի տեղը ոչ ոք

չգիտէ մինչև այժմ էլ։ Իսրայէլացիները Մովսէսի վրայ երեսուն օր սուգ արին։

Բ. ՅԵՍՈՒ

39. ՅԵՍՈՒՆ ՆՈՒԱՃՈՒՄ Է ՔԱՆԱՆԸ

Ա. Մովսէսի մահուանից եւոյ Աստուած ասաց Յեսուին. «Իմ ծառայ Մովսէսը մեռաւ, վեր

կաց, անցիր Յորդանանը։ Ինչպէս որ Մովսէսի հետն եմ եղել, այնպէս էլ քեզ հետ կլինեմ։ Զօրացիր և քաջացիր. իմ պատուրաններըը չմոռանաս. գիշեր ու ցերեկ նրանց վրայ մտածիր և կատարիր»։

Յեսուն էլ պատուիրեց իսրայէլի գլխաւորներին ու ասաց. «Ժողովրդին ասացէք, որ պաշար պատրաստեն, երեք օրից ետոյ պէտք է անցնենք Յորդանանը»։ Յեսուն ծածուկ երկու մարդ ուղարկեց Երիքովը լրտեսելու։ Նրանք վերադարձան և պատմեցին, որ Աստուած ամբողջ երկիրը և Երիքովը մեզ կտայ»։

Քահանայ

Սրանից ետոյ Յեսուն ասաց քահանաներին. «Առէք տապանակ ուխտին և անցէք ժողովրդի առաջով»։ Քահանաները առաջ անցան, իսկ ժողովուրդը

հետևում էր նրանց Յորդանանի միջով։ Այսպէս եկան մինչև Երիքով։

ՔԱ. Երիքովի դռները կողպած էին։ Աստուած ասաց Յեսուին. «Ահա քաղաքը քեզ եմ յանձնում, պատուիրիր զինուորներին, որ վեց օր շրջունակ՝ օրը մի անգամ քաղաքի շուրջը պտտեն։ Եօթներորդ օրը հրաժայիր քահանաներին փողերը փչելով տապանակի առջևից գնան։ Այդ օրը եօթն անգամ պտտեցէք քաղաքի շուրջը։ Եօթներորդ անգամին փողերը փչեցէք, իսկ դուք փողի ձայնը լսելուն պէս՝ աղաղակ բարձրացրէք — այս աղաղակի ժամանակ քաղաքի պարիսպները կկործանուեն»։

Յեսուն այնպէս էլ արաւ։ Քաղաքի պարիսպները կործանուեցան. ժողովուրդը ներս մտաւ. աւերեց և կոտորեց բոլորին՝ թէ մարդ և թէ կենդանի, իսկ ճնշացածը կրակ տուին, այրեցին։

ՔԳ. Յեսուն երեսուն և մէկ թագաւորի հաղթեց, նրանց երկիրները նուաճեց ու բաժանեց իսրայէլի 12 ցեղի մէջ՝ իւրաքանչիւրին իւր բաժինը տալով։ Տապանակ ուխտին բերին Սիլոմ քաղաքը և դրին վկայութեան խորանի մէջ։

Այն երկիրը, որ Աստուած խոստացել էր նրանց, ստացան։ Այսպէս իսրայէլացիները բնակուեցին Քանանում։

Յեսուն մեռաւ հարիւր տասն տարեկան հասակում։ Յովսէփի ոսկորները թաղեցին Սիւքէմ քաղաքում։



Վկայարանի տարածք

I, Գաւիթ. II, Սրբութիւն. III, Սրբութիւն Սրբոց;
1, Ջրհոր սեղան. 2, Ա.ազան;



1. Ա.ազան 2. Ձոհի սեղան



4. Խնկոց



5. Աշտանակ 6. Առաջաւորաց սեղան

Գ. ԴԱՏԱՒՈՐՆԵՐ

40. ԳԵԴԵՈՆԸ ՈՐՊԷՍ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԱՏԱՒՈՐ

ա. Յեսուն մեռաւ։ Մեռել էին և նրա ժամանակակից մարդիկը։ Իսրայէլացիները սկսեցին ամուսնանալ հեթանոս աղջիկների հետ և իրանց աղջիկներն էլ նրանց կնութեան տալ։ Կրկին մոռացան ճշմարիտ Աստծուն և սկսեցին կուռքեր պաշտել։ Աստուած պատժեց նրանց՝ մատնելով հօթը տարի մադիամացիների ձեռը։ Ինչ որ իսրայէլացիները ցանում էին, մադիամացիները գալիս էին հնձի ժամանակ, յափշտակում էին և ոչնչացնում։ Իսրայէլացիները, երբ յաղողութեան մէջ էին, մոռանում էին Աստծուն, իսկ երբ անյաղողութիւն էր պատահում, յիշում էին նրան, այս պատճառով յիշեցին Աստծուն և օգնութիւն խնդրեցին նրանից։

Աստուած էլ երևաց Գնդէոնին, որ Մանասէի ցեղից էր ու ասաց. «Գնա, ազատիր իսրայէլացիներին»։ Գեդէոնը պատասխանեց. «Ինչպէս ազատեմ նրանց. ես Մանասէի ցեղի մէջ շատ քիչ բարեկամներ ունեմ, բացի դրանից՝ մեր տանը ես ամենից փոքրն եմ»։ Աստուած ասաց նրան. «Ես քեզ կօգնեմ—կործանիր Բահաղի սեղանը, կոտորիր նրա շուրջը գտնուող անտառը և Աստծու համար սեղան շինիր»։

Գեդէոնը հետն առաւ իւր ծառաներից տասը հոգի և գիշերով կատարեց Աստծու հրամանը։ Առաւօտը, երբ քաղաքի բնակիչները զարթեցին, տեսան, որ Բահաղի սեղանը կործանուել է, իսկ անտառը կտրտուած ու մի ողջակէզ դրած Յեովայի սեղանի առաջ։ Սկսեցին միմեանց նայել և ասել. «Անշուշտ Յովասի որդի Գեդէոնն արած կլինի այս»։

Քաղաքացիները Յովասի մօտ եկան և ասացին. «Դուրս բեր քո որդուն. նա պէտք է մեռնի, որովհետև Բահաղի սեղանը կործանել է»։ Իսկ Յովասն ասաց. «Դուք կամենում էք Բահաղի փոխարէն դատաւոր լինել. եթէ նա աստուած է, թող ինքն իրան պաշտպանէ և վրէժխնդիր լինի իւր սեղանը կործանողից»։

բ. Սրանից յետոյ Գեդէոնը հրամայեց իսրայէլի միւս ցեղերին, որ իւր մօտ ժողովուեն։ Անթիւ զէնք կրող մարդիկ հաւաքուեցան Գեդէոնի մօտ և նա առաջնորդեց նրանց դէպի մադիամացիները։ Աստուած ասաց Գեդէոնին. «Քո հետ եղած ժողովուրդը շատ շատ է. թերևս իսրայէլացիները պարծենան և ասեն՝ մենք ազատեցինք մեզ—երկչոտներին հեռացրու»։ Իսկապէս երկու հազար հոգի ետ դարձան, մնաց տասն հազար հոգի միայն։ Աստուած կրկին անգամ ասաց Գեդէոնին. «Դարձեալ շատ է ժողովուրդ, երեք հարիւր մարդ բաւական է»։ Գեդէոնը կատարեց Աստծու հրամանը։ Մադիամացիների բանակը

հովտի մէջն էր, իսկ իսրայէլացիներինը բարձրաւանդն էր։

Կէս գիշերին Գեդէոնը երեք հարիւր հոգին երեք մասի բաժանեց, իւրաքանչիւրին մի հատ եղջիւրէ փող և մի հատ վառած սափոր տուաւ ու ասաց. «Ինձ նայեցէք, ինչ որ ես կանեմ, նոյնն էլ դուք արէք»։

Գեդէոնը գիշերով մադիամացիների բանակը մտաւ, հրաժայեց փողերը փչել ու սափորները կոտրատել։ Այդպէս էլ արին ու սկսեցին աղաղակել. «Ահա Աստծու և Գեդէոնի սուրը»։ Մադիամացիների զօրքը զարհուրեց—կարծեցին թէ իսրայէլացիները բազմաթիւ են, ուստի սկսեցին փախչել։ Իսրայէլացիները հետևեցին նրանց և կոտորեցին։

Այս յաղթութիւնից յետոյ իսրայէլացիներից ոմանք ասացին Գեդէոնին. «Մեզ վրայ իշխան եղիր՝ դու, քո որդին և քո որդու որդին»։ Գեդէոնը մերժեց և ասաց. «Ոչ ես և ոչ իմ որդին, այլ Աստուած է ձեր իշխանը»։ Գեդէոնը դարձաւ դատաւոր և քառասուն տարի շարունակ երկիրը նրա կենդանութեան ժամանակ խաղաղ էր։

41. ՍԱՄՓՍՈՆ

Ա. Իսրայէլացիները նորից հեռացան Աստծուց և սկսեցին բահաղին պաշտել։ Այս պատճառով էլ Աստուած նորից պատժեց նրանց և

մատնեց փղշտացիների ձեռքը։ Աստուած Սամփսոն անունով մէկին դատաւոր ընտրեց։ Սա փղշտացիների երկիրը գնաց՝ այնտեղի աղջիկներից իրեն համար մի կին ընտրելու։ Երբ նրանց

այգիներին հասաւ, մի երիտասարդ առիւծ նրա առաջը դուրս եկաւ։ Սամփսոնն այս գազանի վրայ յարձակուեց և բերանը ճեղքեց։ Մի ուրիշ անգամ, երբ նոյն ճանապարհով անցնում էր,

կամեցաւ առիւծի գէշը տեսնել և գտաւ նրա բերանի մէջ մի գունդ մեղու և մեղր։

Սամփսոնը փղշտացիներից մի աղջիկ ընտրեց ու հարսանիք արաւ։ Երեսուն փղշտացի երիտասարդ հիւր էին հարսանիքին։ Սամփսոնն ասաց. «Ես ձեզ մի հանելուկ կասեմ, եթէ մինչև հարսանեաց եօթներորդ օրը լուծէք, երեսուն ձեռք զգեստ կստանաք, իսկ եթէ չկարողանաք, դուք տուէք ինձ նոյնքան զգեստ»։ Համաձայնեցան և նա պատմեց։ Հանելուկն այս էր—«Ուտողից ուտելիք դուրս ևկաւ, իսկ հզօրից՝ քաղցր»։ Նրանք չկարողացան գտնել այս հանելուկը, գնացին Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «Խաբիր քո մարդուն և այս հանելուկի միտքն իմացիր, իսկ եթէ չես անի, մենք քեզ էլ, քո հօր տունն էլ կայրենք»։ Կինն այնքան խնդրեց և լաց եղաւ մինչև որ մարդը յայտնեց գաղտնիքը և նա էլ իւր հայրենակից երիտասարդներին պատմեց։ Եօթներորդ օրը փղշտացիները ասացին Սամփսոնին. «Ի՞նչ կայ մեղրից քաղցր և առիւծից հզօր»։ Սամփսոնը պատասխանեց. «եթէ դուք իմ կնոջը չսոխպէիք, չէիք կարող իմանալ»։

Սամփսոնը գնաց փղշտացիների մի ուրիշ քաղաք. երեսուն մարդ սպանեց, զգեստները բերեց և տուաւ հանելուկը լուծողներին, իսկ ինքը վերադարձաւ Յուդայի երկիրը։ Այդ ժամանակ Սամփսոնի անները նրա կնոջն ամուսնացրեց մի ուրիշի հետ։ Երբ Սամփսոնը իւր կնոջ մօտ վերադարձաւ և այս բանն իմացաւ, բարկացաւ և կամեցաւ պատժել բոլոր փղշտացիներին—երեք հարիւր աղուէս բռնեց, զոյգ զոյգ ագիներից կապեց. ագիների մէջ վառած չոր դրաւ. արձակեց փղշտացիների ցորենի արտերի մէջ և այրեց նրանց այգիները, ձիթենու ծառերն ու արտերը։ Դրա համար փղշտացիները եկան և Սամփսոնի աներոջն ու կոջը միասին այրեցին։

Սամփսոնին բռնելու համար փղշտացիները յարձակուեցան Յուդայի երկրի վրայ և սոսկացրին իսրայէլացիներին՝ Սամփսոնին կապած իրանց յանձնել։ Բայց Սամփսոնը իւր կամքով թոյլ տուաւ հայրենակիցներին, որ կապեն իրան և թշնամու ձեռը մատնեն։ Երբ փղշտացիները տեսան նրան, սկսեցին ուրախանալ։ Սամփսոնը կոթատեց կապանքը՝ բարակ թելի նման, գտաւ մի սատկած իշի ծնօտ և նրանով հազար մարդ սպանեց։

Ը. Փղշտացի իշխանները եկան Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «եթէ քո մարդուն մեր ձեռը մատնես, ամեն մէկս կտանք քեզ հազար և հարիւր արծաթ»։ Երբ Սամփսոնը քնեց, կինը փղշտացիներին իւր մօտ կանչեց։ Նրանք բռնեցին Սամփսոնին. երկաթէ շղթաներով կապեցին. աչքերը բրեցին. Գազա քաղաքը տարան և բանտ դրին, որտեղ նա աղում էր։

Նրանից յետոյ փղշտացիները հաւաքուեցան Դահոն կուռքին զոհ մատուցանելու, որ Թշնամուն իրանց ձեռն է մատնել։ Սամփսոնին էլ

քանտից դուրս բերին, որ իրանց առաջը խաղայ և կանգնեցրին տան երկու սիւների մէջ տեղում։ Տունը լիքն էր բազմութիւնով, իսկ տանիքի վրայ մօտ երեք հազար հոգի էին կանգնած։ Սամփսոնը բռնեց երկու սիւներից և յանկարծ աղաղակեց. «Թող ես էլ այս այլազգիների հետ մեռնեմ»։ Այս ասաց և ինչքան ոյժ ունէր, շարժեց երկու սիւները—տունը քանդուեց ուրախացողների գլխին։

Սամփսոնը 20 տարի դատաւոր եղաւ։

42. ՀՌՈՒԹ

Դատաւորների կառավարութեան ժամանակ իսրայէլացիների երկրում սով ընկաւ։ Մի մարդ՝ Եղիմելէք անունով՝ իւր Նոյոմին կնոջ և երկու որդիների հետ Յուդայի Բէթղեհէմ քաղաքից գնաց Մովաբացիների երկիրը։ Եղիմելէքն այնտեղ մեռաւ, իսկ նրա որդիները ամուսնացան հեթանոս մովաբացի աղջիկների հետ, որոնցից մինի անունը Որփա էր, իսկ միւսինը՝ Հռութ։

Տասը տարուց յետոյ Նոյոմինի երկու որդիներն էլ մեռան։ Սովն արդէն անցել էր։ Նոյոմինը կամեցաւ հարսների հետ Յուդայի երկիրը վերադառնալ։ Ճանապարհին սկեսուրն ասաց հարսներին. «Դարձէք ձեր ծնողների մօտ. Աստուած օրհնէ ձեզ. դուք լաւ կնութիւն արիք իմ որդիների համար և բարի հարսներ եղաք ինձ»։

Որփան փաթաթուեց սկեսրոջը, համբուրեց և հրաժարական ողջոյն տուաւ, իսկ Հռութը չկամեցաւ դառնալ։ Այն ժամանակ Նոյոմինն ասաց. «Տեսնում ես՝ Որփան ետ դարձաւ իւր ծնողների մօտ, դու ևս հետևիր նրան»։ Հռութը պատասխանեց. «Աստուած չանի, որ ես քեզ միայ-

նակ թողնեմ և հեռանամ ուր դու կերթաս, ես էլ հետդ կգամ. ուր դու կլինես, այնտեղ էլ ես. քո ազգը իմ ազգը կլինի և քո Աստուածն՝ իմ Աստուածը. ուր դու կմեռնես, այնտեղ էլ ես—մահը միայն ինձ կբաժանէ քեզնից»։ Երբ Նոյոմինը տեսաւ, որ Հռութը վճռել է իւր հետ գալու, էլ ոչ մի խօսք չասաց։ Այսպէս նրանք գնա-

ցին մինչև Բեթղեհէմ։ Երբ տեղ հասան, Նոյոմին ասաց իւր ազգականներին. «Հարուստ հեռացայ ձեզնից, աղքատ դառնում եմ ձեզ մօտ»։ Սկեսուրն ու հարսը բնակւում էին Բեթղեհէմում։

Հունձի ժամանակ էր։ Հռութը դաշտ էր գնում և հասկ էր հաւաքում, որովհետև աղքատ էին։ Մի օր Հռութը գնաց Բոոսի արտը։ Այդ ժամանակ Բոոսն էլ եկաւ հնձուորների մօտ, ողջունեց նրանց և ասաց. «Աստուած ձեզ հետ լինի»։ Հնձուորները պատասխանեցին. «Աստուած օրհնէ քեզ»։ Բոոսը հարցրեց Հռութին. «Ո՛ւմ աղջիկն ես»։ Վերակացուն պատասխանեց. «Սա այն մոաբացի աղջիկն է, որ Նոյոմինի հետն է եկել»։ Բոոսն ասաց Հռութին. «Աղջիկս, մի գնա ուրիշի արտը հասկ ժողովելու, ամեն օր մեր արտն արի, կաց իմ աղջիկների մօտ, որտեղ նրանք կհնձեն, դու էլ նրանց ետևից հասկերը կհաւաքես. եթէ ծարաւես, այն ամաններից խմիր, որտեղից իմ ծառաներն են խմում»։ Հռութը պատասխանեց. «Ես մի օտարական կին եմ, իմ ո՛ր արժանաւորութեան համար եմ արժանանում այդպիսի մեծ ողորմութեան»։ Բոոսը պատասխանեց. «Ինձ ամեն բան պատմել են, թէ դու ինչպէս ես վարուել սկեսրօջդ հետ՝ քո մարդու մահուանից ետև—դու թողել ես քո հօրն ու մօրը, հայրենիքդ և սկեսրօջդ համար եկել ես քեզ անծանօթ երկիրը»։ Ճաշի ժամանակ Բոոսը Հռութին հաց էլ տուաւ։ Նա կերաւ, բայց մի կտոր էլ պահեց սկեսրօջ համար։ Երբ Հռութը սկսաւ դարձեալ հասկ ժողովել, Բոոսը պատուիրեց ծա-



ռաներին ու ասաց. «Թողէք այդ կնոջը խուրձերի միջից ևս հաւաքէ և մի փոքր էլ աւելորդ թափեցէք, որ նա ժողովէ»։ Այսպէս Հռութը մինչև երեկոյ հասկ հաւաքեց։ Երբ մութն ընկաւ, շալակեց հաւաքածը և տուն դարձաւ։

Նոյոմին հարսի հաւաքած հասկերը և հետը բերած հացի կտորը որ տեսաւ, հարցրեց. «Այսօր ո՞րտեղ էիր հասկ հաւաքում»։ Հռութը պատասխանեց. «Բոոսի արտում»։ Նոյոմին ասաց. «Աստուած օրհնէ նրան, նա մեր ազգականն է»։ Այսպէս Հռութն ամեն օր գնում էր Բոոսի արտը և հասկ էր ժողովում մինչև հնձի վերջանալը։

Բոոսը Հռութին հաւանեց և նրա հետ ամուսնացաւ։ Աստուած նրանց մի որդի պարգևեց, որին անուանեցին Ովբէթ։ Նոյոմին էլ երեխայի դայեակը դարձաւ։ Ովբէթը Յէսսէյի հայրն էր, իսկ Յեսսէն էլ՝ Դաւիթ թագաւորի։

43. ՀԵՂԻ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

Ա. Հեղիի քահանայապետութեան ժամանակ մի մարդ էր ապրում Եղկանա անունով՝ իւր կին Աննայի հետ։ Նրանք անզաւակ էին։ Սրանք սովորութիւն ունէին ամեն տարի Սնլով քաղաքը ուխտ գնալու և Աստծուն զոհ մատուցանելու։ Աննան մի անգամ Սելով գնալիս՝ խիստ տրտմեց. լաց եղաւ. աղօթեց Աստծուն և ասաց. «Տէ՛ր Սաբաւովթ, քեզ յայտնի է իմ նեղութիւնը. եթէ դու ինձ մի որդի պարգևես, քեզ կնուիրեմ, որ մինչև իւր մահը ծառայէ»։ Հեղի քահանայապետը նստած էր վկայութեան խորանի դրանը և ուշադրութեամբ նայում էր Աննային։

Եւ որովհետև երկար տևեց նրա աղօթքը, Հեղին ասաց. «Աննա, քանի՞ աղօթես»։ Աննան պատասխանեց. «Ես մի վշտացած կին եմ, սիրտս Աստծու առաջ բաց եմ անում»։ Հեղին ասաց. «Իսրայէլի Աստուածը քո խնդիրը կկատարէ»։

Կինը վերադարձաւ տուն. նրա սիրտն այլևս այնպէս տխուր չէր։

Աստուած լսեց Աննայի աղօթքը և նրան մի որդի պարգևեց, որին անուանեցին Սամուէլ, որ նշանակում է «Աստուածանից խնդրած — Աստուա-

Ծառուբ»։ Երբ մանուկը մի քանի տարեկան դարձաւ, մայրը Սելով բերաւ՝ Հեղի քահանայապետի մօտ և ասաց. «Տէր, ես այն կինն եմ, որ քեզ մօտ կանգնած աղօթում էի այս մանկան համար. Աստուած լսեց իմ աղօթքը, դրա համար էլ ես նրան եմ ընծայում իւր տուածը»։ Աննան շնորհակալութիւն արաւ Աստծուն և տուն դարձաւ, իսկ մանուկ Սամուէլը մնաց Հեղիի մօտ և Տիրոջ սպասաւոր դարձաւ։

Ը. Հեղիի որդիկները շատ վատ մարդիկ էին, խլում էին իսրայէլացի ուխտաւորներից գոհի մեծ մասը—փոխանակ էրին և մորթին տանալու, որ օրէնքով Մովսէսն իրանց էր տուել, պղնձի մի կտից էլ ջոկում էին եփած գոհի լաւ կտորները և տանում էին։ Ծերունի Հեղին գիտէր այս բոլորը—նա յաճախ խրատում էր, բայց չէին լսում։ Մանուկ Սամուէլը աճում էր և զօրանում։ Նրան սիրում էին և՛ Աստուած և՛ մարդիկ։

Մի անգամ, երբ Սամուէլը վկայութեան խորանի առաջ քնած էր, ձայն լսուեց, որ ասում էր. «Սամուէլ, Սամուէլ»։ Սամուէլը վազեց Հեղիի մօտ և ասաց. «Այստեղ եմ, ինչո՞ւ կանչեցիր»։ Հեղին պատասխանեց. «Ես քեզ չեմ կանչել, դարձիր և քնիր»։ Աստուած Սամուէլին երկրորդ, երրորդ անգամ կանչեց։ Սամուէլը կրկին անգամ գնաց Հեղիի մօտ։ Հեղին հասկացաւ, որ Աստուած է նրան կանչողը, ասաց. «Դարձիր և

քնիր, եթէ մի անգամ էլ ձայն լսես, ասա, Տէր, քո ծառան լսում է քեզ»։ Սամուէլը դարձաւ իւր տեղը։ Աստուած կրկին անգամ ձայն տուաւ. «Սամուէլ, Սամուէլ»։ Սամուէլը պատասխանեց. «Ասա, Տէր, քո ծառան լսում է քեզ»։ Աստուած ասաց. «Ես կամենում եմ Հեղիին և իւր որդիներին պատժել»։ Սամուէլը վախենում էր այս բանը Հեղիին յայտնելու։

Այն ժամանակ Հեղին կանչեց նրան և ասաց. «Աստուած ինչ ասաց քեզ, մի ծածկիր ինձնից». Սամուէլը պատմեց նրան իւր լսածը։ Հեղին ասաց. «Ինչ որ բարի է, թող այն կատարէ Աստուած»։

Գ. Իսրայէլացիները պատերազմ ունեցան փղշտացիների հետ և յաղթուեցան։ Իսրայէլի ծերերն ասացին. «Ուխտի տապանակը բանակ բերենք Սելովից, որ մեզ ազատէ սրանց ձեռից» և բերել տուին։ Տապանակի հետ եկան և Հեղիի

երկու որդիները։ Երբ տապանակը բանակ բերին, իսրայէլացիներն ուրախութիւնից սկսեցին աղաղակել, իսկ փղշտացիներն ասում էին միմեանց. «Իսրայէլի Աստուածը բանակ է եկել, ով փղշտացիներ, քաջ պատերազմեցէք, որ ծառայ չլինենք նրանց»։ Պատերազմի մէջ իսրայէլացիները յաղթուեցան։ Հեղիի երկու որդիները սպանուեցան, ուխտի տապանակն էլ գերի ընկաւ։

Մինը պատերազմի դաշտից՝ հանդերձները պատռելով և գլխին հող ցանելով՝ եկաւ Սելով։ Հեղին վկայութեան խորանի դրանը աթոռի վրայ նստած էր։ Նա հարցրեց եկող մարդուն բանակի մասին։ Դեսպանը պատասխանեց. «Իսրայէլը յաղթուեց, քո երկու որդիներն էլ սպանուեցան և ուխտի տապանակը գերի ընկաւ»։ Այս դուժը լսելուն պէս՝ Հեղին աթոռից վայր ընկաւ, մէջքը կոտրուեց և մեռաւ։

Դ. Սամուէլն սկսաւ քարոզել և խրատել իսրայէլացիներին։ Ժողովուրդը խոստովանեց, որ նա Աստծու ճշմարիտ մարգարէն է, ուստի և նրան դատաւոր ընտրեց։ Սամուէլը հաւաքեց բոլոր իսրայէլացիներին և ասաց. «Եթէ դուք սրտանց դառնաք դէպի ճշմարիտ Աստուածը, թողնէք օտար աստուածներին, այն ժամանակ ձեզ կազատէ փղշտացիների ձեռից»։ Իսրայէլացիները հեռացան կուռքերից։

Երբ փղշտացիները Սամուէլի դատաւոր

ընտրուելն իմացան, նորից եկան պատերազմելու։ Թշնամին յաղթուեց։ Փղշտացիները փախան և Սամուէլի կենդանութեան ժամանակ այլ ևս չհամարձակուեցան իսրայէլացիների դէմ զէնք բարձրացնել։

Դ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

Ա. ՍԱՒՈՒԼ

Ա. Երբ Սամուէլը ծերացաւ, իւր որդիներին իսրայէլի վրայ դատաւոր նշանակեց։ Սրանք հօր ճանապարհով չէին գնում, կաշառքներ էին վերցնում և օրէնքից դուրս գործեր կատարում։ Սրա համար ծերերը հաւաքուեցան Սամուէլի մօտ Արիմաթեմ քաղաքում և ասացին. «Դու ծերացել ես. որդիներդ քո ճանապարհով չեն գնում. մեզ մի թագաւոր տուր, ինչպիսին այլազգիներն ունին, որ մեզ դատէ և պատերազմում առաջնորդէ»։ Նրանք կարծում էին՝ թշնամին նրա համար է յաղթում, որ թագաւոր ունէ։ Այս բանը թէև դուր չեկաւ Սամուէլին, բայց և այնպէս խնդրեց Աստծուն այդ մասին։ Աստուած ասաց նրան. «Հնազանդուիր ժողովրդի պահանջին և նրան մի թագաւոր տուր»։

Բ. Բենիամինի ցեղից մի մարդ՝ Կիս անունով մի որդի ունէր՝ անունը Սաուղ։ Սա մի գեղեցիկ մարդ էր։ Մի անգամ Կիսի էշերը կորան։

Սաուղը փնտռելու գնաց և հասաւ մինչև Արիմաթեմ։ Հէնց որ Սամուէլը Սաուղին տեսաւ, Աստուած ասաց նրան. «Ահա սա է իմ ժողովրդին կառավարողը»։



Այն ժամանակ Սամուէլն առաւ իւղի սրուակը, ածեց նրա գլխին՝ օծեց, համբուրեց և ասաց. «Աստուած քեզ իւր ժողովրդի վրայ կառա-

վարիչ է նշանակում»։ Սրանից եւոյ Աստուած Սաւուղին մի ուրիշ սիրտ, ուրիշ հոգի տուաւ։

Սամուէլը հաւաքեց իսրայէլացիներին և յայտնեց, որ Աստուած Սաւուղին թագաւոր է ընտրել։ Սաւուղը համեստութիւնից սկզբում կարասի տակ թաք կացաւ, բայց վերջը ժողովրդին ներկայացաւ։ Նա ամենից բարձրն էր—մէնակի հասակը հազիւ էր նրա ուսերին հասնում։ Ժողովուրդը շատ ուրախացաւ և աղաղակեց. «Կեցցէ թագաւորը»։ Բայց մի քանի մարդիկ ծաղրում էին և ասում. «Մի՞թէ սա պիտի փրկէ մեզ»։ Սաւուղն այնպէս էր ցոյց տալիս՝ որպէս թէ չէ լսում։

9. *Ամովնացիների թագաւորը պաշարեց իսրայէլացիների Յաբիս քաղաքը և ասաց քաղաքացիներին. «Ես ձեր ամենի ալ աչքը պէտք է հանեմ»։ Յաբիսացիները մարդ ուղարկեցին իրանց եղբայր իսրայէլացիների մօտ և օգնութիւն խնդրեցին։ Սաւուղին էլ պատմեցին այս բանը։ Նա խիստ բարկացաւ, երկու եզն առաւ. կտոր-կտոր արաւ. իսրայէլի քաղաքներն ուղարկեց՝ ասելով. «Ով Սաւուղին և Սամուէլին չի հետևի, նրա եզներն էլ այսպէս պատառ-պատառ կլինեն»։ Ժողովուրդը նոր թագաւորի շուրջը հաւաքուեց։ Սաւուղը մարդ ուղարկեց Յաբիսի բնակիչների մօտ, որ նրանց ասեն. «Վաղը արևը տաքանալուն պէս ձեզ օգնութեան կգամ»։ Յաբիսացիները շատ ուրախացան։ Սաւուղը զօր-*

քը երեք գնդի բաժանեց, յարձակուեց ամոնացիների վրայ և ջարդեց նրանց մինչև արևի տաքանալը։

Այն ժամանակ Սաւուղի մարդիկն ասացին. «Մօտ բերէք թագաւորի ծաղրողներին, որ նրանց պատժենք»։ Սաւուղը պատասխանեց. «Այսօր՝ երբ Աստուած մեզ յաղթութիւն է տուել, ոչ մի իսրայէլացի չպիտի մեռնի»։ Սամուէլը գաղգաղա հաւաքեց բոլոր իսրայէլացիներին և Սաւուղին թագաւոր օծեց ժողովրդի ներկայութեամբ։ Նոր-ընտիր թագաւորը ժողովրդի հետ միասին ուրախանում էր։

44. ՍԱՒՈՒՂԻ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Նոր պատերազմ ծագեց փղշտացիների և իսրայէլացիների մէջ։ Սամուէլը զօրք հաւաքեց և եկաւ Գաղգաղա թագաւորի հետ։ Սամուէլն ասաց թագաւորին. «Սպասիր ինձ այստեղ, չպատերազմես մինչև ես գամ և զոհ մատուցանեմ, որ Աստուած մեզ յաղթութիւն տայ»։ Սաւուղը եօթն օր անհամբեր սպասում էր։ Սամուէլն ուշացաւ։ Ժողովուրդն սկսեց ցրուել։ Թագաւորը, այս որ տեսաւ, ասաց. «Բերէք ողջակէզը, որ ես զոհեմ»։ Բայց զեռ զոհը չվերջացրած՝ մարգարէն եկաւ։

Սամուէլը նեղացած ասաց. «Այդ ի՞նչ ես արել. մի՞թէ դու մարգարէ ես—դու զոհելու ի-

բաւունք չունիս, դու իմ իրաւունքը խլել ես»։ Սաւուղը սկսաւ իրան արդարացնել և ասել. «Ես տեսայ, որ ժողովուրդն սկսեց հեռանալ. դու էլ ուշացար. փղշտացիները ուզում էին յարձակուել, ուստի և ողջակէզ արի»։

Սամուէլն ասաց Սաւուղին. «Դու անմիտ ես վարուել. դու Աստծու պատուիրանից անցել ես, զոհելու իրաւունքն Աստուած ինձ է տուել. մի՞թէ կարծում ես, որ Աստուած զոհը հնազանդութիւնից աւելի կսիրէ։ Եւ որովհետև դու Աստծու պատուիրանը չպահեցիր, այլ ևս թագաւոր չես լինի իսրայէլի վրայ»։

Սամուէլը հեռացաւ և մինչև իւր մահը նրա երեսը չտեսաւ։ Թէև նա հեռացած էր, բայց և այնպէս միշտ ցաւում էր Սաւուղի վրայ։

Բ. ՍԱԻՈՒԼ ԵՒ ԴԱԻԻԹ

45. ԴԱԻԹԻ ԹԱԳԱՒՈՐ ԸՆՏՐՈՒԻԼԸ

Աստուած ասաց Սամուէլին. «Մինչև ե՞րբ տխրես Սաւուղի համար. ես նրան այլ ևս չեմ սիրում։ Լցրու եղջիւրդ իւղով և գնա Բեթղեհէմ՝ Յեսսէի որդիներից մինին թագաւոր եմ ընտրել»։ Սամուէլը գնաց Բեթղեհէմ, հրաւիրեց Յեսսէին և իւր որդիներին զոհ մատուցանելու։

Որդիները տուն եկան։ Սամուէլը նայեց մեծին, կարծում էր թէ նա պիտի լինի նոր թագաւորը։ Բայց Աստուած ասաց. «Դու նրա հասակին մի նայիր. ես մեծ հասակ ունեցողներին էլ չեմ սիրում։ Բանը հասակի մէջ չէ, այլ սրտի»։

Եաւոյ Յեսսէն իւր եօթը որդիներին Սամուէլի առաջով անցկացրեց։ Մարգարէն պատասխանեց. «Աստուած սրանցից ոչ մինին էլ չէ ընտրել, ուրիշ որդի չունե՞ս»։

Յեսսէն պատասխանեց. «Մի փոքրը ևս ունեմ Դաւիթ անունով, նա խաշներ է արածացնում»։ Սամուէլն ասաց. «Մարդ ուղարկիր և կանչել տուր»։

Դաւիթն եկաւ—նա կարմրաերես էր. գեղեցիկ աչքեր ունէր և սիրուն հասակ։ Աստուած ասաց. «Վեր կաց և օծիր սրան, ահա սա է իմ ընտրածը»։ Սամուէլն առաւ եղջիւրը և օծեց նրան թագաւոր իւր եղբայրների մէջ։

Հէնց այդ օրից Աստծու հոգին Դաւթի վրայ իջաւ։

46. ԴԱԻԹԸ ԳԱԼԻՍ Է ՍԱՒՈՒՂԻ ԱՐՔՈՒՆԻՔԸ

Աստծու հոգին Սաւուղից հեռացել էր—չար ոգին տանջում էր նրան։ Ծառաները ասացին թագաւորին. «Ինարի վրայ ածող մի մարդ գտնենք, երբ չար ոգին գալու լինի, նուագէ և հանգստացնէ քեզ»։

Սաւուղը պատասխանեց. «Եթէ ճանաչում-

էք այդպիսի մի մարդ, կանչեցէք»։ Ծառաներից մինը պատասխանեց. «Ես ճանաչում եմ Բեթղեհէմցի Յեսսէի փոքր որդուն. նա մի իմաստուն և քաջ երիտասարդ է. գիտէ քնարի վրայ ածել և Աստուած էլ նրան շատ է սիրում»։ Սաւուղը մարդ ուղարկեց Յեսսէի մօտ և Դաւթին իւր մօտ կանչեց։



Այսպէս Դաւիթը Սաւուղի մօտ եկաւ և ծառայում էր նրան։ Սաւուղը շատ սիրեց նրան և իւր կապարճակիրը դարձրեց։ Հէնց որ չար ոգին Սաւուղի վրայ էր գալիս, Դաւիթն առնում էր քնարը և երգում։ Սաւուղն իսկոյն հանգստանում էր, երբ Դաւիթն սկսում էր երգել և քնար ածել։

47. ԴԱՒԹ ԵՒ ԳՈՂԻԱԹ

Փղշտացիները երբ լսեցին իսրայէլի թագաւորի հիւանդութիւնը, զօրք առան և եկան Յուդայի երկիրը։ Սաւուղը նոյնպէս զօրք հաւաքեց և բանակ ձգեց փղշտացիների հանդէպ։ Փղշտացիների բանակից դուրս եկաւ մի հսկայ՝ Գողիաթ անունով, որի հասակի երկայնութիւնը վեց կանգուն մի թիզ էր և ձայն տուաւ իսրայէլացիներին. «Ընտրեցէք ձեզնից մէկին ինձ հետ մենամարտելու»։ Սաւուղը և իսրայէլացիները խիստ վախեցան։

Դաւթի երեք մեծ եղբայրները Սաւուղի հետ բանակումն էին, իսկ ինքն այդ ժամանակ տունն էր գնացել հօր ոչխարներն արածացնելու։ Մի անգամ Յեսսէն ասաց Դաւթին. «Ա՛ռ այս տասը նկանները, տար եղբայրներիդ և տես, ինչպէս է նրանց առողջութիւնը»։ Երբ Դաւիթը եղբայրների մօտ եկաւ, Գողիաթը դուրս եկաւ բանակից և սկսաւ նախատել իսրայէլացիներին։ Ոչ ոք չէր վստահանում նրա դէմ դուրս գալ—ձայնը լսելուն պէս ամենքն էլ փախչում էին։ Դաւիթը, երբ այս բանը տեսաւ, ասաց. «Մի՞թէ մի մարդ չկայ, որ նրան սպանէ և իսրայէլին այս անպատուութիւնից ազատէ». Ժողովուրդն ասաց. «Ով նրան սպանի, թագաւորին փեսա կդառնայ»։ Դաւթի այս խօսքերը Սաւուղին յայտնեցին։

Թագաւորն անմիջապէս Դաւթին իւր մօտ կանչել տուաւ։

Դաւիթն ասաց Սաւուղին. «Մի՛ վախենար, Թագաւո՛ր, ես կմենամարտեմ նրա հետ»։ Սաւուղը պատասխանեց. «Դու մանուկ ես, փղշտացու հետ չես կարող պատերազմել»։ Դաւիթը պատասխանեց. «Հօրս խաշներն արածացնելիս՝ երբ առիւծ կամ արջ էր գալիս և յափշտակում ոչխարներս, ընկնում էի նրանց ետևից. ոչխարը խլում էի գազանների բերնից և իրանց էլ սպանում։ Այն Աստուածը, որ ինձ առիւծից և արջից ազատեց, կազատէ և այս փղշտացուց»։

Սաւուղն ասաց Դաւթին. «Գնա՛, Թո՛ղ Աստուած քեզ հետ լինի»։ Դաւիթը հովուական գաւազանը ձեռն առաւ, հինգ ողորկ քար դրաւ մագլախի մէջ. պարսը վերցրեց և դիմեց դէպի փղշտացին։

Երբ այլազգին Դաւթին տեսաւ, ասաց. «Մի՞թէ ես շուն եմ, որ դու գաւազանով և քարով ես գալիս ինձ վրայ։ Դաւիթը պատասխանեց. «Դու գալիս ես ինձ վրայ սրով, նիզակով և վահանով, իսկ ես՝ իսրայէլի Աստծու անունով։ Աստուած քեզ այսօր իմ ձեռը կյանձնէ»։ Դաւիթը մագլախից մի քար հանեց. դրաւ պարսի մէջ և ձգեց դէպի այլազգին։ Քարը ճակատին դիպաւ և հսկան գետին փռուեց։ Բայց որովհետև Դաւիթը սուր չունէր, վազեց դէպի փղշտացին. հա-

նեց նրա սուրը և գլուխը կտրեց։ Երբ փղշտացիները տեսան Գողիաթի մահը, փախան։

48. ՍԱՒՈՒՂՆ ԱՏՈՒՄ, ԻՍԿ ՅՈՎՆԱԹԱՆԸ ՍԻՐՈՒՄ Է ԴԱՒԹԻՆ

ԺԱ. Երբ Դաւիթը Գողիաթի գլուխը կտրեց, Թագաւորի որդի Յովնաթանը Դաւթին շատ սի-

ըեց և ընկերական դաշը կապեց։ Սաւուղը չթողեց Դաւթին, որ տուն դառնայ, այլ՝ իրա մօտ պահեց և զօրքի վրայ հրամանատար նշանակեց։ Ժողովուրդը սիրում էր Դաւթին։ Գողիաթին սպանելուց ետոյ՝ երբ Դաւիթը տուն էր վերադառնում փղշտացիների պատերազմից, կանայք դուրս էին գալիս Դաւթի առաջ թմբուկներով, ծնծղաներով. պարում, երգում և ասում էին. «Սաւուղը հազարին սպանեց, իսկ Դաւիթը՝ բիւրին»։ Այս խօսքերը դուր չեկան թագաւորին, նախանձեց և ասաց. «Էլ ինչ է պակաս նրան՝ բացի իմ թագաւորութիւնից»։

Հետևեալ օրը Սաւուղը նախանձից հիւանդացաւ։ Դաւիթն սկսեց քնար ածել։ Սաւուղը վեր առաւ գեղարդը և ձգեց Դաւթի ետևից այն մտքով, որ նրան պատին մեխէ։ Բայց նա խոյտուաւ և գեղարդը պատի մէջ ցցուեց։ Սաւուղը վախենում էր և Դաւթին իրանից հեռացնելու համար՝ հազարապետի պաշտօն տուաւ։ Դաւիթն զգոյշ էր վարվում ամեն մի քայլափոխում։

Սաւուղի աղջիկը սիրում էր Դաւթին։ Եւ որովհետև թագաւորը խոստացել էր նրան փեսայ դարձնել, ասաց. «Դաւթին փեսայ կդարձնեմ և փղշտացիների դէմ պատերազմ կուղարկեմ, այնտեղ էլ կսպանուի»։ Սաւուղը պատուիրեց իւր ծառաներին, որ ծածուկ Դաւթի հետ այսպէս խօսեն. «Թագաւորը և նրա բոլոր մարդիկը քեզ շատ են սիրում, ևկ և նրան փեսայ

դարձիր»։ Այսպէս էլ արին ծառաները։ Դաւիթն ասաց. «Ես մի աղքատ մարդ եմ»։ Ծառաները պատասխանեցին. «Թագաւորը քեզնից ոչինչ չէ

պահանջում՝ բացի հարիւր փղշտացու գլխից»։ Նրա միտքն այն էր, որ Դաւիթը թշնամու հետ պատերազմելիս՝ սպանուի։ Դաւիթն իսկոյն վեր կացաւ, փղշտացիների դէմ գնաց և երկու հա-

ըիւր մարդ սպանեց։ Թագաւորը իւր Մեղքոյ աղջկան Դաւթին տուաւ։ Սաւուղը նկատեց, որ Աստուած Դաւթի հետն է, աւելի ևս վախեց և մինչև իւր մահը թշնամացաւ նրա հետ։

Ք. Սաւուղը, երբ տեսաւ, որ իւր նպատակին չհասաւ, նոր միջոց մտածեց — սկսաւ իւր որդուն գրգռել Դաւթի դէմ։

Յովնաթանն այս բանը յայտնեց Դաւթին և նա էլ թաք կացաւ։ Սրանիցետոյ Յովնաթանը խօսեց հօր հետ և ասաց. «Յանցանք մի գործիր, հայր, Դաւթին արդար է. նա քեզ համար իւր անձը վտանգի ենթարկեց և սպանեց փղշտացուն»։ Սաւուղը լսեց իւր որդուն, երդուեց, որ Դաւթի մահն այլ ևս չի ցանկայ։ Յովնաթանը յայտնեց Դաւթին այս բանը և նրան հօր մօտ բերաւ։ Դաւիթը դարձեալ այնպէս էր թագաւորի հետ՝ ինչպէս առաջ։

Նոր պատերազմ։ Դաւիթը դուրս եկաւ փղշտացիների դէմ և յաղթեց։ Զար ոգին դարձեալ յայտնուեց թագաւորին. վեր առաւ գեղարդը և կամենում էր Դաւթին նորից պատին մեխել։ Նա դարձեալ խոյս տուաւ և ազատուեց։ Դաւիթը միևնոյն գիշերը փախաւ պալատից։ Սաւուղը մարդիկ ուղարկեց, որ գիշերով նրա տունը շրջապատեն և առաւօտեան սպանեն։

Մեղքոյը յայտնեց Դաւթին եղելութիւնը և ասաց. «Եթէ դու այս գիշեր քո կեանքը չազատես, առաւօտը կենդանի չես մնայ»։ Կինը մարդուն պատուհանից վայր թողեց - Դաւթին անյայտացաւ։ Եւոյ Մեղքոյը պաճուճապատան շի-

նեց. դրաւ անկողնում. գլուխը այծի մորթով պատեց և ծածկեց վերմակով։ Սաւուղը դեսպաններ ուղարկեց, որ Դաւթին բռնեն։ Մեղքոյը

պատասխանեց. «Հիւանդ է»։ Սաւուղը կրկին անգամ մարդ ուղարկեց և ասաց. «Մահճով ինձ մօտ բերէք, որ սպանեմ նրան»։ Երբ դեսպաններն եկան, պաճուճապատանն անկողնում դրած էր։ Իրողութիւնը թագաւորին յայտնեցին։ Սաւուղը բարկացաւ և ասաց իւր աղջկան. «Ինչո՞ւ խաբեցիր ինձ և փախցրիր իմ թշնամուն»։ Մեղքողը պատասխանեց. «Նա ինձ ասաց, եթէ չեմ թողլ տայ, կսպանեմ»։

գ. Դաւիթը մի տեղից միւսը թափառելով վերջապէս եկաւ Յովնաթանի մօտ և այսպէս դանգատուեց. «Ի՞նչ յանցանք եմ գործել քո հօր դէմ. ինչո՞ւ է իմ եաւից ընկել»։ Յովնաթանը պատասխանեց. «Դու չես մեռնի. ես նորից կխօսեմ հօրս հետ։ Դու թաք կացիր դաշտում մի քարի տակ. երեց օրից ետոյ քեզ իմաց կտամ, թէ բանն ինչպէս է վերջացել»։

Հետևեալ օրը Սաւուղը, Յովնաթանը և զօրավար Աբեննները հացի էին նստած։ Դաւթի մասին խօսք եղաւ։ Յովնաթանը նրա օգտին խօսեց։ Սաւուղը բարկացաւ և ասաց. «Խարդախ, ես գիտեմ, որ դու Յեսսէի որդու հետ դաշնակից ես. ամօթ քեզ. քանի որ նա կենդանի է, քո թագաւորութիւնը հաստատ չէ. մարդ ուղարկիր նրա եաւից և բերել տուր—նա պէտք է մեռնի»։ Սաւուղը բարկացաւ և այս անգամ գեղարդը Յովնաթանի վրայ ձգեց՝ նրան սպանելու մտքով։ Յովնաթանը վեր կացաւ հացից. դուրս

գնաց և ամբողջ օրը ոչինչ չկերաւ ու մտածում էր միայն Դաւթի վրայ։

Առաւօտը Յովնաթանը դաշտ գնաց և ամեն բան յայտնեց Դաւթին։ Երկուսն էլ գրկեցին իրար և լաց էին լինում։ Նրանք երդուեցին հաւատարիմ լինել միմեանց։ Յովնաթանն ասաց. «Գնա, հանգիստ եղիր—ինչ որ մենք Աստծու անունով երդուեցինք, թող յաւիտեան անխախտ մնայ»։ Յովնաթանը ետ դարձաւ քաղաք, իսկ Դաւիթը գնաց անապատ։

49. ԴԱՒԹԻ ՄԵԾԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՍԱՒՈՒՂ

ա. Երբ Սաւուղն իմացաւ, որ Դաւիթը Դաղդալի անապատումն է, առաւ երեք հազար զօրք ու գնաց Դաւթին փնտռելու։ Այն անապատում մի մեծ այր կար։ Սաւուղը մտաւ հանգստանալու, իսկ Դաւիթը իւր մարդկանց հետ արդէն այրի խորքումն էր։ Դաւթի մարդիկն ասացին. «Ահա այս այն օրն է, որ Աստուած թշնամուն քո ձեռն է մատնում»։ Դաւիթը չթողեց, որ թագաւորին սպանեն, այլ ծածուկ կտրեց նրա փեշի ծայրը։

Երբ Սաւուղը զարթեց, դուրս եկաւ այրից և սկսաւ իւր ճանապարհը շարունակել։ Նրանից ետոյ դուրս եկաւ Դաւիթն ու սկսաւ Սաւուղի եաւից ձայն տալ. «Ի՛մ Տէր թագաւոր»։ Սաւուղը զարմացած ետ նայեց։ Դաւիթն ասաց. «Այսօր Աստուած քեզ իմ ձեռը մատնեց այրի մէջ,

բայց ես կեանքդ խնայեցի—տես, հայր իմ, ա-
հա փեշիդ ծայրը ձեռումս է։ Թող Աստուած դա-

տաւորը լինի իմ և քո մէջ, ես իմ ձեռը քեզ
վրայ չեմ բարձրացնի»։

Սաւուղն սկսաւ բարձր ձայնով լաց լինել և
ասել. «Դու ինձնից արդար ես. դու ինձ բարի
վարձեցար, իսկ ես քեզ՝ չար. Աստուած դրա փո-
խարէն քեզ կվարձատրէ—ես գիտեմ՝ դու մի օր
իսրայէլի թագաւորը պիտի դառնաս»։

Սաւուղը տուն դարձաւ, իսկ Դաւիթը իւր
մարդիկների հետ ամրոց անապատում։

50. ՍԱՄՈՒԷԼԻ ՄԱՀԸ

Սամուէլը մեռաւ։ Բոլոր իսրայէլացիները
սուգ արին նրա վրայ և թաղեցին Արիմաթէամում։

Փղշտացիները կրկին անգամ պատերազմ
յայտնեցին իսրայէլացիներին։ Իսրայէլացիները
փախան և Գեղբուա լերան մօտ մեծ ջարդ ստա-
ցան։ Թշնամին շրջապատեց Սաւուղին և նրա
որդիներին։ Սաւուղը ծանր կերպով վիրաւորուեց։

Այն ժամանակ թագաւորն ասաց իւր կա-
պարճակրին. «Հան քո սուրը և սպանիր ինձ, որ
փղշտացիների ձեռը չընկնեմ»։ Կապարճակիրը
հրաժարուեց։ Սաւուղն ինքն առաւ իւր սուրը և
ընկաւ նրա վրայ։ Երբ կապարճակիրը տեսաւ,
որ Սաւուղը մեռաւ, ինքն էլ իւր սրի վրայ ըն-
կաւ և ինքնասպան եղաւ։ Յովնաթանը, իւր եր-
կու եղբայրները և հետեւեալ եղած բոլոր մարդիկն
ընկան պատերազմի մէջ։

Սաւուղի մահուանից երեք օր ետոյ՝ մի ա-մաղեկացի Դաւթի մօտ եկաւ ու ասաց. «Իսրա-յէլի բանակից եմ ազատուել. ժողովուրդը փա-



խաւ. Սաւուղն ու Յովնաթանը սպանուեցին»: Դաւթին ասաց. «Ո՞րտեղից գիտես, թէ Սաւուղն ու Յովնաթանը մեռան»: Ամաղեկացին պատաս-խանեց. «Գեղբուայ լեռների վրայ էի. Սաւուղն

ընկած էր նիզակին. թշնամու հեծելազօրը դի-մում էր դէպի նա: Սաւուղն ասաց—սպանիր ինձ: Մօտ գնացի. սպանեցի նրան. վեր առայ թագն ու ապարանջանը և ահա քեզ եմ բերել»: Դաւիթը բարկացաւ և ասաց. «Դու ի՞նչպէս վրա-տահացար Տիրոջ օծեալի վրայ ձեռք բարձրաց-նել»: Այս ասաց և նշան արաւ իր մարդկանց, որ սպանեն ամաղեկացուն և սպանեցին:

Դաւիթն սկսաւ սուգ անել Սաւուղի, Յով-նաթանի և բոլոր իսրայէլացիների վրայ:

Գ. ԴԱՒԻԹ

51. ԴԱՒԻԹԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐ

Սաւուղի մահուանից ետոյ Դաւիթը իր մարդիկների հետ եկաւ Քեբրոն: Յուդայի ցեղը նրան թագաւոր օծեց միայն Յուդայի տան վրայ: Իսկ Սաւուղի զօրավար Աբեններն նրա որդի Յեբուսթէին թագաւորեցրեց միւս ցեղերի վրայ: Դաւթի և Սաւուղի տան մէջ երկար պատերազմ-ներ եղան: Դաւթի տունը քանի գնում՝ զօրա-նում էր, իսկ Սաւուղինը՝ տկարանում: Յեբուս-թէին քնած ժամանակ սպանեցին և գլուխը կտր-ելով՝ Դաւթի մօտ բերին: Դաւիթը բարկացաւ և ասաց. «Դուք արդար մարդ էք սպանել և հրա-մայեց մարդասպաններին մահու պատիժ տալ: Այնուհետև Իսրայէլի բոլոր ցեղերը Քեբրոն ե-

կան և Դաւթին թագաւորը օծեցին ամբողջ Իսրայէլի վրայ։

Թէև Յեսուն Քանանը նուաճել էր, բայց

Երուսաղէմ քաղաքը, ուր երուսացիներն էին կեանում, իւր անառիկ լինելու պատճառով, դեռ ևս անկախ էր։ Այս պատճառով թագաւորն արշաւեց Երուսաղէմ երուսացւոց դէմ. առաւ քաղաքը, Սիոն լեառն ու նրա վրայի աշտարակը, ուր և բնակուեց Աշտարակն անուանեց Դաւթի քաղաք և այնտեղ մի փառաւոր տուն շինեց։

Սրանից ետոյ Սելով գնաց, մեծ հանդէսով տապանակ ուխտին Սիոնի աշտարակը տեղափո-

Դաւիթ թագաւոր.

խեցին։ Թագաւորը ղեւտացիներից մի քանիսին պաշտօնեայ նշանակեց ուխտի տապանակին ծառայելու, որոնք երգով և քնարով օրհնում և փառաբանում էին Աստծուն։ Նմանապէս քահանաներ նշանակեց Ահարոնի ցեղից, որոնք ամեն օր

Քահանայապետ

ողջակէզ պիտի մատուցանէին։ Բացի սրանից աստուածպաշտութեան կարգ սահմանեց և ինքն էլ մի քանի սաղմոսներ յօրինեց։

Նրա թագաւորութիւնը ընդարձակուեց Միջերկրական ծովից մինչև Եփրատ և Դամասկոսից մինչև Եգիպտոս։ Դաւթի անունը հռչակուեց բոլոր երկրներում—հեթանոսները դողում էին նրա անունը լսելիս։ Նա դատաւորներ ևս նշանակեց երկրի մէջ։

Այս ամենից յետոյ Դաւիթը հարցրեց. «Արդեօք Սաւուղի տանից որ և է ժառանգ չէ մնացել։ Յովնաթանից մի կաղ որդի է մնացել», ասաց նրա ծառաներից մինը։ Իսկոյն Դաւիթը մարդ ուղարկեց նրա եանից և բերել առաւ իր մօտ։ Երբ Յովնաթանի որդի Մեմփիբոստէն Դաւթի մօտ եկաւ, երեսի վրայ ընկաւ։ Դաւիթն ասաց նրան. «Մի վախիր, ես ուզում եմ քեզ ողորմութիւն անել՝ քո հայր Յովնաթանի սիրու համար—քեզ կտամ Սաւուղի բոլոր արտերը. դու ամեն օր իմ սեղանից կճաշես»։ Այսպէս չմոռացաւ Դաւիթը իր սիրելի Յովնաթանին։

52. ԴԱՒԻԹԸ ՄԵՂԱՆՉՈՒՄ Է

Մի անգամ Դաւիթը իր Յովաբ զօրավարին ամմոնացիների դէմ ուղարկեց, որ նրանց գլխաւոր քաղաքը՝ Ռաբաթաիս պաշարէ, իսկ ինքը մնաց Երուսաղէմում։ Մի օր թագաւորը կարի վրայ ման գալիս՝ տեսաւ իր հարեան Ուրիայի կինն բնասարէին և ցանկացաւ նրան թագուհի դարձնել։ Ուրիան Յովաբի հետ պատերազմ էր գնացել։ Դաւիթը Յովաբին մի նամակ գրեց, որի մէջ ասում էր. «Ուրիային պատերազմի վտանգաւոր տեղն ուղարկիր. դու ետ դարձիր. թող նա սպանուի»։ Յովաբն էլ այդպէս արաւ։ Երբ Ուրիայի կինը ամուսնու մահուան լուրն առաւ, սկսաւ սուգ անել։ Սգի օրերն անցնելուց յետոյ՝ Դաւիթը պսակուեց նրա հետ։

Այս վարմունքն Աստծուն դուր չեկաւ, ուստի Նաթան մարգարէին նրա մօտ ուղարկեց՝ թագաւորի սխալը նկատելու։ Նաթանը թագաւորի մօտ եկաւ և հետևեալ առակը պատմեց. «Մի քաղաքում կենում էին երկու մարդ—մինը հարուստ, իսկ միւսը՝ աղքատ։ Հարուստն ունէր շատ հօտեր, իսկ աղքատը՝ միմիայն մի

գառը։ Աղքատը շատ էր սիրում գառանը, իւր հետն էր ուտեցնում, խմացնում և իրա գոգում էլ քնացնում էր։ Մի օր հարստի մօտ հիւր եկաւ։ Սա աղքատից խլեց նրա գառը և հիւրին



պատուեց»։ Դաւիթը բարկացաւ այդ բանի վրայ։ Զարմացաւ, որ իւր թագաւորութեան մէջ այդպիսի անարդարութիւն է պատահել, ուստի ասաց Նաթանին. «Այդ մարդը մահու պատժի արժանի է»։ Այն ժամանակ Նաթանն ասաց Դաւթին. «Այդ մարդը դու ես—դու խլեցիր Ուրիայի կնոջը, իրան էլ ամոնացիների սրով սպանել տուիր։ Դրա համար Աստուած այսպէս է ասում —քո տանից քո դէմ անբախտութիւն կհանեմ. դու ծածուկ չարութիւն գործեցիր, իսկ ես քեզ յայտնի կերպով կպատժեմ ամբողջ Իսրայէլի առաջ»։ Դաւիթը զղջաց իւր սխալը և ասաց Նաթանին. «Ես մեղաւոր եմ Աստծու առաջ»։ Այս ասաց ու գետնի վրայ ընկաւ և զղջում էր։ Նաթանն ասաց. «Վեր կաց. Աստուած ներեց քո յանցանքը. դու չես մեռնի»։ Մարգարէն տուն գնաց։ Բերսաբէն մի որդի ունեցաւ, որին Սողոմոն անուանեցին։ Դաւիթը Նաթանին յանձնեց Սողոմոնի կրթութիւնը։

53. ԱԲԻՍՈՂՈՄ

Ա. Իսրայէլացիների մէջ Դաւթի որդի Աբիսողոմի նման գեղեցիկ մարդ չկար։ Աբիսողոմի ամենագեղեցիկ զարդարանքը նրա գլխի գանգուր մազերն էին։ Սա առաւօտը վաղ վեր էր կենում և կանգնում էր քաղաքի դրանը։ Թագաւորի մօտ գանգատի եկողներին դուր գալու համար՝ ասում էր Աբիսողոմը. «Դու արդար ես, բայց ով կայ այնտեղ, որ քեզ պաշտպանէ։ Երանի՛ ինձ դատաւոր նշանակէին, ես գիտէի թէ ինչպէս կպաշտպանէի ամենին»։ Այս ձևով Աբի-

սողոմը գրաւեց իսրայէլացիների սիրտը։

Երբ նրա համակրողների թիւն այնքան բազմացաւ, որ նա կարող էր ապստամբուել Դաւթի դէմ, ասաց. «Թոյլ տուր ինձ, հայրիկ, որ ուխտդնամ Քեբրոն»։ Թագաւորն ասաց. «Գնա խաղաղութեամբ»։ Աբիսողոմն առաջուց մարդ էր ուղարկել Իսրայէլի բոլոր քաղաքներն ասելու. «Երբ փողի ձայնը լսէք, ասացէք Աբիսողոմը թագաւոր է դառել»։ Աբիսողոմը Քեբրոն գնաց։ Մեծ բազմութիւն հետևում էր նրան։

Երբ Դաւթին յայտնեցին որդու ապստամբութիւնը, Երուսաղէմում եղող ծառաներին ասաց. «Վեր կացէք փախչենք Աբիսողոմի երեսից»։ Թագաւորը քաղաքից ոտով փախաւ իր ծառաների հետ։ Նրան հետևում էր մեծ բազմութիւն և դառը կերպով լաց էին լինում։ Դաւթին անցաւ Կևդրոնի վտակը և լալով բարձրացաւ Ձիթենեաց լեառը։ Սաւուղի տնից մի մարդ՝ Սհմէի անունով, Դաւթին անիծում էր. քարեր էր արձակում վրան և ասում. «Դուրս, դուրս. Աստուած քո թագաւորութիւնը յանձնեց Աբիսողոմին. այժմ դու ես անբախտութեան մէջ»։ Աբեսան բարկացաւ և ասաց. «Ի՞նչպէս է համարձակւում նա իմ տէր թագաւորին այսպէս անպատուել։ Իրաւունք տուր, նրա գլուխը կտրեմ»։ Թագաւորն ասաց. «Թող, այդ Աստծու կամքն է։ Ահա հարազատ որդիս իմ եսիցն է ընկել, ինչ զարմանալու բան կայ, եթէ օտար Սեմէին այդ-

պէս է վարուում»։ Աբիսողոմը մտաւ Երուսաղէմ և առաւ այն բոլորն, ինչ որ հօրն էր պատկանում։

Ը. Սրանից ետոյ Աբիսողոմը իւր մարդիկների հետ Յորդանանն անցաւ՝ հօրը հալածելու համար։ Դաւիթն իւր մօտ եղած զօրքը կարգադրեց և ասաց. «Ես էլ ձեզ հետ կամենում եմ թշնամու դէմ պատերազմի դուրս գալ»։ Ժողովուրդը պատասխանեց. «Դու մի արի, քո կեանքը մեզ համար տասն հազար մարդու հաւասար է»։ Զօրքը գնաց, իսկ Դաւիթը Յովաբին, Աբեսային և բոլոր գլխաւորներին պատուիրեց ու ասաց. «Իմ սիրու համար խնայեցէք Աբիսողոմին»։ Եփրեմի անտառում իրար պատահեցին։ Դաւթի զօրքը յաղթեց։ Աբիսողոմը ջորու վրայ նստած փախաւ և երբ մի մեծ կաղնու խիտ ճիւղերի տակովն անցնում էր, մազերը ճիւղերի մէջ խճճուեցին, ինաց կախ ընկած, իսկ ջորին անցաւ, գնաց։ Երբ այս բանը Յովաբին յայտնեցին, վեր առաւ երեք գեղարդ և խրեց Աբիսողոմի սիրտը»։

Աւետաբեր եկաւ Դաւթի մօտ պատերազմի դաշտից և աւետեց նրան յաղթութեան լուրը։ Դաւիթը հարցրեց. «Աբիսողոմ պատանին ողջ է»։ Երբ տեղեկացաւ, լաց էր լինում և ասում. «Որդեակ իմ Աբիսողոմ, Աբիսողոմ որդեակ իմ, երանի թէ ես մեռնէի քո փոխարէն, ով որդեակ իմ Աբիսողոմ»։

Յուդայի տան մարդիկը Դաւթի մօտ դես-

պանները ուղարկեցին և ասացին. «Եա արի վե-
րըստին դու էլ, քո զօրքն էլ»։ Նրանք Դաւիթին

դիմաւորելու համար մինչև Յորդանան գնացին։
Սեմէին ևս եկաւ դրանց հետ, թագաւորի ոտ-
ներն էր ընկնում և ասում. «Մի՛ յիշիր իմ յան-

ցանքը, ների՛ր»։ Աբեսսան ասաց. «Նա պէտք է
մեռնի, Աստծու օծեալին անիծել է»։ Դաւիթը
պատասխանեց. «Այսօր ոչ ոք չպիտի մեռնի,
երբ ես իսրայէլի վրայ թագաւոր եմ»։ Դաւիթը
երդուեց Սեմէին և ասաց. «Դու չես մեռնի»։
Դաւիթը դարձաւ Երուսաղէմ։

54. ԴԱԻԹԻ ՄԱՀԸ

Երբ Դաւիթը ծերացաւ, Երուսաղէմ ժողո-
վեց երկրի իշխաններին, դատաւորներին, զի-
նուորականներին ու ասաց. «Ժողովո՛ւրդ, ինձ
լսի՛ր, ես մտադիր էի Աստծու համար տուն շի-
նել, որպէսզի ուխտի տապանակն այնտեղ դնեմ։
Բայց Աստուած իւր ծառայ Նաթանի բերանով
ասաց—ինձ համար դու չես կարող տուն շինել,
զինուոր մարդ ես, շատերի արիւնն ես թափել։
Երբ կմեռնես, այդ բանը քո որդի Սողոմոնը
կկատարէ։ Աստծու պատուիրանները պահեցէ՛ք,
որ այս գեղեցիկ երկիրը ժառանգէք։ Իսկ դու՝
իմ Սողոմոն որդի, ճանաչի՛ր քո հօր Աստծուն և
ծառայի՛ր նրան ամբողջ սրտով—Աստուած քեզ
ընտրեց իւր համար տուն կառուցանող։ Ես մեռ-
նում եմ, բայց մխիթարուի՛ր, մի՛ վախենայ, իմ
Աստուածը քեզ հետ կլինի»։

Դաւիթը ցոյց տուաւ իւր որդի Սողոմոնին
տաճարի նախագիծը և ետոյ շարունակեց ժո-
ղովրդեան հետ խօսել—«Աստծու տուն կառու-

ցանելը շատ մեծ գործ է. ես իմ կարողութեան չափ ոսկի, արծաթ, թանկագին քարեր, երկաթ, փայտ և մարմար եմ ժողովել: Իսկ ձեզնից ոմն է յօժար Աստծու տան համար կամաւոր նուէր տալու»: Ամենքն էլ իրանց կարողութեան չափ ազատ կամքով նուէրներ արին: Դաւիթը շատ ուրախացաւ: Ժողովուրդը գոհանում էր Աստծուց. երկրպագութիւն էր տալիս. աղօթում և ողջակէզ մատուցանում: Քահանայապետն էլ վեր առաւ իւղի եղջիւրը և Սողոմոնին թագաւոր օծեց: Փողերը փչում էին. ժողովուրդն աղաղակում էր. «Յաջողութիւն Սողոմոն թագաւորին»:

Շատ չանցաւ, որ հին թագաւորը մեռաւ և թաղուեց Դաւթի քաղաքում: Նա թագաւորեց Իսրայելի վրայ քառասուն տարի:

Գ. ՍՈՂՈՄՈՆ

55. ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԸ

ԱՍ. Սողոմոնը սիրում էր Աստծուն և իւր հօր ճանապարհովն էր գնում: Երբ նա մի անգամ Գաբաւոնում զոհ էր մատուցանում, Աստուած տեսիլքում երևաց և ասաց. «Խնդրիր ինձնից ինչ որ կամենում ես»: Սողոմոնը պատասխանեց. «Ի՛մ Տէր Աստուած, դու թագաւորեցրիր քո ծառային իմ հայր Դաւթի տեղը. ես մի փոքր տղայ եմ. չգիտեմ ոչ բարին և ոչ չարը. տուր

ինձ իմաստուն սիրտ՝ քո ժողովուրդը արդարութեամբ կառավարելու»: Աստուած հաւանեց Սողոմոնի աղօթքը և ասաց. «Որովհետև դու ինձնից երկար կեանք և հարստութիւն չխնդրեցիր, այլ միմիայն իմաստութիւն, այս պատճառով տալիս եմ քեզ ոչ թէ միայն քո խնդրածը, այլև հարստութիւն ու փառք: Եթէ դու իմ պատուիրանները պահես, ինչպէս քո հայր Դաւիթը, քեզ երկար կեանք էլ կտամ»:

ՔԱ. Այդ օրերում երկու կին թագաւորի մօտ դանդատի եկան: Նրանցից մինն ասաց. «Մենք երկուսով ապրում ենք մի սենեակում: Ես մի որդի ունեցայ: Երեք օրիցետոյ նա էս մի որդի ծնաւ: Այս կինը գիշերը ծիծ տալիս՝ երեխայի վրան պառկեց ու խեղդեց նրան: Կէս գիշերին ծածուկ փոխեց իմ կենդանի որդուն իւր խեղդուածի հետ: Առաւօտը զարթեցի երեխային ծիծ տալու, տեսայ որ իմ տղան չէր»: Իսկ միւս կինն ասաց. «Այդպէս չէ, կենդանին իմս է, իսկ մեռածը սրանն է»:

Աստուած Սողոմոնին իմաստութիւն տուաւ նրանց դատաստանը կատարելու — թագաւորն ասաց. «Սուր բերէք, կէս արէք կենդանի երեխային — կէսը տուէք մինին, իսկ կէսը՝ միւսին»: Կանանցից մինը աղաչում էր թագաւորին և ասում. «Մի սպանէք»: Իսկ միւսը պահանջում էր բաժանել: Թագաւորն ասաց. «Առաջին կնոջը տուէք կենդանի երեխային, որովհետև նա է հարազատ

մայրը»։ Այս դատաստանը յայտնի եղաւ բոլոր Իսրայէլի մէջ։

Բացի հարստութիւնից, Աստուած Սողոմո-

նին մեծ իմաստութիւն ևս տուաւ։ Նա 3,000 առակ և 1,005 երգ գրեց։ Մարդիկ երկրիս բոլոր ծայրերից գալիս էին նրա իմաստութիւնը լսելու։

56. ՍՈՂՈՄՈՆԻ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

ա. Սողոմոնը մարդ ուղարկեց Տիւրոսի Քիրամ թագաւորին ասելու. «Դու գիտես, որ իմ հայրը պատերազմների պատճառով չկարողացաւ Աստծու համար տուն շինել, ուստի այդ գործն ինձ յանձնեց։ Խնդրում եմ հրաման տաս իմ ծառաներին Լիբանանու անտառներից տաճարի համար եղևիններ կտրել, դրա փոխարէն ես կվճարեմ քեզ ցորեն, գինի և իւղ»։ Քիրամը կատարեց նրա ցանկութիւնը, երկու թագաւորները բարեկամացան իրար հետ։

Սողոմոնի թագաւորութեան չորրորդ տարում Մորէա լերան վրայ տաճարի հիմքը դրուեց — 80 ոտնաչափ երկարութիւն, 20 ոտնաչափ լայնութիւն և 30 ոտնաչափ բարձրութիւն ունէր տաճարը։ Տունը ներսից ամբողջապէս մաքուր ոսկէ թիթեղով պատեց։

Տաճարը բաժանուած էր երկու մասի — Սրբութիւն և Սրբութիւն-Սրբոց։ Տապանակ ուխտին դրին Սրբութիւն-Սրբոցում, իսկ Սրբութիւնում՝ խնկոցը, առաջաւորաց սեղանը և 10 հատ ոսկէ աշտանակ։ Տաճարի շուրջը Սողոմոնը երկու գաւիթ շինեց — արտաքինը ժողովրդի համար, իսկ ներքինը՝ քահանաների։ Այստեղ էր դրած զոհի սեղանը և պղնձէ աւազանը քահանաների լուացուելու համար։ Եօթը տարուց ետոյ տաճարի շինութիւնն աւարտուեց։



Սողոմոնի տաճարի լատակագիծը։

Ս. Ս. Սրբութիւն-Սրբոց։ Ս. Սրբութիւն։ Գ. Գաւիթ։ 1. Տապանակ ուխտի։ 2. Խնկոց։ 3. Առաջաւորաց սեղան։ 4. Սիներ։ 5. Աշտանակներ։ 6. Շրջապատ։ 7. Վերի հարկի մուտքը։ 8. Սենեակներ։

ք. Երբ շինութիւնը վերջացրեց Սողոմոնը, ժողովրդին Երուսաղէմ հրաւիրեց տաճարն օծելու։ Քահանաները ուխտի տապանակը և սրբազան անօթները Սիոնի վրայից նոր տաճարը տեղափոխեցին։

Սողոմոնը և ժողովուրդը հետևում էին քահանաներին։ Երբ ուխտի տապանակը սրբութիւն սրբոցում դրին, թագաւորը չոքեց Տիրոջ սեղանի առաջ և այսպէս աղօթեց. «Տէր, Իսրայէլի Աստուած, երկինքը և երկնքի երկինքը բաւական չեն քեզ պարունակելու, ուր մնաց այս փոքրիկ տունը։ Լսիր քո ծառային. լսիր քո Իսրայէլ ժողովրդին և դէպի նա ողորմած եղիր նեղութեան ժամանակ։ Եթէ այլազգի ևս գայ այստեղ աղօթելու, նրան էլ լսիր։ Եթէ ժողովուրդը քո դէմ մեղանչէ և ուղղուած սրտով քեզ դառնայ, նրա խնդրուածը մի մերժիր»։

Աղօթքը վերջացնելուց յետոյ Սողոմոնը օրհնեց ժողովրդին։ Թագաւորը ժողովրդի հետ շնորհակալութեան զոհ բերին Աստծուն։ Սողոմոնը եօթն օր տօն կատարեց։ Ամենքն օրհնում էին թագաւորին և փառաբանում Աստծուն։

57. ՍՈՂՈՄՈՆԻ ՓԱՌՔԸ, ԸՆԿՆԻԼԸ ԵՒ ՄԱՀԸ

Ա. 1. Սողոմոնը եղևնու փայտից իւր համար մի պալատ ևս շինեց։ 2. Ամուսնացաւ Փարաւոնի աղջկայ հետ, նրա համար ևս մի երկ-

բորդ պալատ շինել տուաւ։ 3. Շինել տուաւ նաև մի դատաստանատուն և 4. փղոսկրեայ գահ՝ պատած ազնիւ ոսկւով։ 5. Թագաւորի խմելու բաժակները, ամանեղէնները ոսկուց էին—արծաթը յարգի չէր։ 6. Նաւեր ևս շինել տուաւ։ Ֆիրամը նրա համար լաւ նաւաստիներ ուղարկեց, որոնք իրա ծառաների հետ հեռի երկիրներ էին նաւում՝ ոսկի, արծաթ, փղոսկր, կապիկ և սիրաժարգներ էին բերում։ Այսպէս Սողոմոնը իւր հարստութիւնով և իմաստութիւնով առաջին թագաւորը դարձաւ աշխարհիս մէջ։

ՔԼ. Հարևան՝ օտարազգի թագաւորները բազմաթիւ կիներ ունէին, ուզեց որ այդ բանում էլ առաջինը լինի, ուստի 700 օտարազգի կին առաւ։ Ծերութեան ժամանակ նրանք Սողոմոնի սիրտը դէպի կուռքերը դարձրին՝ այնպէս որ թագաւորը նրանց համար Երուսաղէմում կուռաններ ևս շինել տուաւ։ Այս բանը դուր չեկաւ Աստծուն, ուստի յայտնեց Սողոմոնին և ասաց. «Որովհետև դու իմ պատուիրանները չպահեցիր, քո թագաւորութիւնը կխլեմ քեզնից, բայց ոչ կենդանութեանդ ժամանակ, այլ՝ քո որդու և նրանից չեմ խլի ամբողջ թագաւորութիւնդ, այլ՝ մի մասը քո հայր Դաւթի սիրու համար կթողնեմ»։ Այդքան ծախսերը հոգալու համար՝ ժողովրդի վրայ ծանր հարկեր նշանակեց՝ այն աստիճան, որ այլ ևս չէր կարողանում տանել, այս

պատճառով ապստամբուեց թագաւորից Ցերոբովամի առաջնորդութեամբ։

Թագաւորը հրամայեց, որ սպանեն ապստամբին, բայց նա Եգիպտոս փախաւ։ Սողոմոնը 40 տարի թագաւորելուց ետոյ՝ մեռաւ ու թաղուեց Դաւթի քաղաքում։ Նրա որդի Ռոբովամը թագաւորեց հօր տեղը։

Է. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ՈՒ ՎԵՐՋԸ

58. ՅԵՐՈԲՈՎԱՄ ԵՒ ՌՈԲՈՎԱՄ

Ա. Ռոբովամը գնաց Սիւքէմ։ Ամբողջ իսրայէլն այնտեղ էր հաւաքուել—կամենում էին նրան թագաւոր օծել։ Ոմանք էլ մարդ էին ուղարկել Ցերոբովամին կանչելու։ Նա եկաւ և ժողովրդի հետ յայտնեցին Ռոբովամին. «Քո հայրը մեզ վրայ ծանր հարկեր դրաւ. մենք այն պայմանով քեզ կլսենք, եթէ մեր հարկերը կթեթևացնես»։ Ռոբովամը հարցրեց ծերերին և ասաց. «Ի՞նչ խորհուրդ էք տալիս»։ Նրանք պատասխանեցին. «Եթէ ժողովրդին լսես, քեզ հաւատարմութեամբ կծառայեն»։ Ռոբովամը մերժեց ծերերի խորհուրդը և իւր հասակակից ընկերների հետ ժողով կազմեց։ Նրանք այսպէս խորհուրդ տուին. «Դու ժողովրդին այսպէս պատասխանիր—իմ հայրը ձեզ խարազանով էր պատժում, իսկ ես՝ մտրակով և կարիճով պէտք է ծեծեմ»։



Ռոբովամը երիտասարդ ընկերների տուած խորհուրդը յայտնեց Յերոբովամին։ Երբ ժողովուրդը նկատեց, որ թագաւորն իրան չի ուզում լսել, ասաց. «Ինչ գործ ունենք Դաւթի տան հետ, մենք Յերոբովամին թագաւոր կօծենք»։

Այսպէս ժողովուրդը բաժանուեց Ռոբովամից։ Այլ ևս ոչ ոք չէր լսում Դաւթի տան թագաւորին՝ բացի Բենիամինի ցեղից։

Ր. Յերոբովամն ամրացրեց Սիւքէմը և իրան մայրաքաղաքը դարձրեց։ Նա ասում էր. «Եթէ իմ ժողովուրդը Երուսաղէմ գնայ զոհ մատուցանելու, նա Յուդայի տան թագաւորին կսիրէ և ինձնից կհեռանայ»։ Սրա համար թագաւորը երկու հատ ոսկէ հորթ շինել տուաւ ու ասաց ժողովրդին. «Բաւական է ինչքան Երուսաղէմ գնացիք աղօթելու, ահա ձեր աստուածները»։ Հորթերից մէկը Բեթէլում, իսկ միւսը Դանում նշանակեց։ Ժողովուրդը պաշտում էր կուռքերին։ Սրա համար Աստուած մարգարէի բերնով ասաց նրան. «Քո թագաւորութիւնն իսպառ կջնջեմ»։

Յուդայի տունը ևս մոռացաւ Աստծուն և սկսեց կուռքեր պաշտել։ Եգիպտոսի թագաւորը, երբ իմացաւ իսրայէլի թագաւորների երկպառակութիւնը, Երուսաղէմի վրայ եկաւ, Աստծու և Ռոբովամ թագաւորի տան բոլոր հարստութիւնները տարաւ։ Ռոբովամն ու Յերոբովամն իրանց ամբողջ կեանքում պարապած էին ներքին պատերազմներով։

59. ԵՂԻԱ

Ա. Իսրայէլի տանից շատ թագաւորներ եղան։ Նրանցից մէկի պատմութիւնը միայն կսո-

վորենք—դա Աքաաբն էր։ Սա ամուսնացաւ Սիդոնի քաղաքի կռապաշտ թագաւորի Եզեաբել աղջկայ հետ և նրանց հանդէպ կուռքին երկրպագութիւն էր տալիս։ Յեզաբելը խեղդել տուաւ բոլոր մարգարէներին, միայն Եղիան կենդանի մնաց։ Սա եկաւ Աքաաբի մօտ և ասաց. «Այս տարի ոչ անձրև, ոչ ցօղ կիջնի երկնքից, որովհետև քո կինը նրա մարգարէներին կոտորել տուաւ»։

Ք. Աստուած ասաց Եղիային. «Գնա և բնակուիր Քոռաթի հեղեղատի մօտ—ջուրն այնտեղից կխմես, իսկ կերակուրդ ագռաւները կբերեն»։ Նա լսեց Տիրոջ խօսքին և գնաց։ Մի քանի օրից եւոյ հեղեղատի ջուրը ցամաքեց, որովհետև անձրև չէր գալիս։ Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «Վեր կաց և գնա Սիդոնացւոց Սարեպտա քաղաքը. այնտեղ մի որբևայրի կնոջ պատուիրել եմ, որ քեզ կերակրէ»։ Եղիան, երբ քաղաքի դրանը մօտեցաւ, տեսաւ մի այրի կին փայտ էր հաւաքում ու նրանից հաց և ջուր խնդրեց։ Կինը պատասխանեց. «Աստծու անունը վկայ լինի, որ մի բուռն ալիւրից և մի քիչ իւղից աւելի ոչինչ չունեմ»։ Եղիան ասաց նրան. «Գնա, մի վախենա. պատրաստիր քեզ համար էլ, ինձ համար էլ, որովհետև քո տաշտից ալիւրը և ամանից իւղը չվերի պակասէ մինչև որ Աստուած անձրև կուղարկէ»։ Կինը գնաց և այնպէս էլ արաւ։ Տիրոջ ասածին համաձայն՝ տաշտից ալիւրը և ամանից իւղը երբէք չպակասեց։

Գ. Սովի երրորդ տարին Աստուած ասաց Եղիային. «Գնա Աքաաբի մօտ և ասա, որ անձրև պիտի թափեմ»։ Եղիան գնաց։ Երբ Աքաաբը Եղիային տեսաւ, հարցրեց. «Այդ դո՞ւ ես, Իսրա-

յելի խանգարիչ»։ Եղիան պատասխանեց. «Ես չեմ Իսրայելի խանգարիչը, այլ դու և քո տունը —դուք Աստծու պատուիրանները մոռացել եք և Բահաղին եք լսում։ Հաւաքել տուր Կարմելյան լերան վրայ ժողովրդին և Բահաղի չորս հարիւր յիսուն քուրմերին»։ Այդպէս էլ արեց Աքաաբը։ Եղիան դուրս եկաւ ժողովրդի առաջ և ասաց. «Մինչև ե՞րբ մոլորուէք, եթէ Աստուածը Եհովան է, նրան հետևեցէք, իսկ եթէ Բահաղն է՝ նրան լսեցէք»։ Եհովայի մարգարէներից միայն ես եմ կենդանի մնացել, իսկ Բահաղինը չորս հարիւր յիսուն են։ Թող մեզ երկու եզը տան. մէկը սրանք վերցնեն, կոտորեն, դնեն փայտերի վրայ՝ առանց կրակի, իսկ մեւսն էլ ես կվերցնեմ և նոյնպէս կվարուեմ։ Եւոյ՝ դուք Բահաղի անունը տուէք, իսկ ես՝ Եհովային։ Այն Աստուածը, որ կրակով պոնը կայրէ, ահա նա է ճշմարիտը։ Բոլոր ժողովուրդը պատասխանեց. «Ճշմարիտ ես ասում»։

Բահաղի քուրմերը վեր առան մի եզը, կոտորեցին ու սկսեցին աղաղակել և ասել. «Ո՛վ Բահաղ, պատասխան տուր»։ Բայց ոչ մի պատասխան չկար։ Եղիան ասաց. «Բարձր ձայնով կանչեցէք, գուցէ նա զբաղուած է, շատ կարելի է քնած է»։ Նրանք սկսեցին և՛ աւելի բարձրաձայն աղաղակել, բայց ոչ մի պատասխան չստացան։ Եղիան ասաց ժողովրդին. «Այժմ եկէք ինձ մօտ»։ Նա սեղան շինեց. շուրջը փո-

րեց. սեղանի վրայ փայտեր դասեց. եզը կըտրատեց և դասեց փայտերի վրայ։ Երեք անգամ ողջակիզի փայտի վրայ ջուր ածել տուաւ՝ այնպէս որ փոսը ծովի պէս ջրով լցուեց։ Այս ա-

ժենից եւոյ եկաւ Եղիան և ասաց. «Ո՛վ Աբրահամի, Իսահակի և Յակովբի Աստուած, ցո՛յց տուր այսօր, որ դու ես ճշմարիտ Աստուածը»

իսկ ես՝ քո ծառան»։ Իսկոյն երկնքից կրակ ընկաւ և այրեց ողջակէզը։ Բոլոր ժողովուրդը երեսի վրայ ընկաւ և ասաց. «Եհովան է ճշմարիտ Աստուածը»։ Եղիան բոլոր քուրմերին կին սուն հեղեղատի մօտ սպանել տուաւ։ Ետոյ ասաց Աքաաբին. «Լծիր կառքդ և վայր իջիր, որ անձրևը քեզ չթրջէ»։ Այդպէս էլ արաւ—Եղիան կառքի առաջով էր գնում։ Իսկոյն քամի փչեց. երկինքը ծածկուեց սև ամպերով և սաստիկ անձրև եկաւ։

ԺԹ. Աքաաբը պատմեց Յեզաբէլին այս ամենը։ Յեզաբէլը դեսպան ուղարկեց Եղիայի մօտ և պատուիրեց ասել. «Թող աստուածներն ինձ պատժեն, եթէ քեզ էլ քուրմերի նման սպանել չտամ»։ Եղիան փախաւ Յուդայի անապատը, նստեց մի ծառի տակ, դանգատուեց և մահ խնդրեց։ Նա պառկեց այնտեղ և քնեց։ Ետոյ վեր կացաւ. քառասուն օր ճանապարհ գնաց մինչև Քորէբ և այնտեղ մի այրի մէջ ապրում էր։ Աստուած ասաց նրան. «Ի՞նչ ես անում այստեղ, Եղիա»։ Նա պատասխանեց. «Իսրայէլի որդիները կործանեցին քո անունով շինած սեղանները. քո մարգարէներին սրով կոտորեցին. ես միայն ազատուեցայ. հիմայ էլ իմ կեանքի եռևիցն են ընկել»։ Աստուած հասկացրեց մարգարէին, որ մարգասպանութիւնը հաճելի չէ իրան։ Նա ասաց. «Դարձիր և Յեուին Իսրայէլի վրայ թագաւոր օծիր, իսկ Եղիսէին՝ քո փոխարէն մարգարէ։ Իսկ

քայէլի մէջ դեռ եօթը հազար հոգի ունիմ, որոնք Բահաղին չեն պաշտում, մի յուսահատուիր»։

Եղիան գնաց և Եղիսէին գտաւ վար անելիս։ Մարգարէն իւր վերարկուն նրա վրայ ձգեց։ Եղիսէն թողեց եղները. գնաց Եղիայի մօտ և ա-շակերտ դարձաւ նրան։

60. ԵՂԻԱՅԻ ՄԱՀԸ

Եղիան զգաց իւր մահուան օրը—նա ասաց Եղիսէին. «Դու այստեղ մնա, Աստուած ինձ Յորդանան է ուղարկում»։ Եղիսէն ասաց. «Վկայ

լինի կենդանի Աստուածը, որ քեզնից չեմ բաժանուի»։ Երկուսն էլ գնացին Յորդանան։ Եղիան ասաց Եղիսէին. «Մահուանիցս առաջ խընդրիր, ինչ որ կաժենուիս ես»։ Եղիսէն պատասխանեց. «Թող քո հոգին կրկնապատիկ իջնի իմ վրայ»։ Այն ժամանակ երկնքից հրեղէն կառք իջաւ՝ հրեղէն ձիեր լծած. Եղիան մէջը նստեց և մրրիկը նրան երկինք բարձրացրեց։ Եղիսէն նայում էր նրա ետևից և աղաղակում. «Հայր, հայր, Իսրայէլի կառք, ձիեր...»։

61. ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ա. Իսրայէլացիները յաճախ մոռանում էին Աստծուն և հեթանոս կեանք էին վարում։ Բոլոր քաղաքներում կռատներ էին շինել և Բահաղին երկրպագութիւն տալիս։ Աստուած մարգարէի բերնով յայտնեց նրանց. «Թողէք ձեր չարութիւնները և հետևեցէք իմ պատուիրաններին»։ Նրանք ուշք չդարձրին Աստծու խօսքերին, դրա համար էլ պատժուեցին։

Իսրայէլի վերջին թագաւորն եղաւ Ովսէն։ Սա Աստծու ճանապարհով չգնաց։ Ասորեստանի Սաղմանասար թագաւորը սրա դէմ պատերազմի դուրս եկաւ։ Ովսէն յաղթուեց և հպատակ դարձաւ։ Բայց որովհետև նա Եգիպտոսի թագաւորի հետ դաշն էր կապել և տարեկան հարկը կանոնաւոր չէր ուղարկում Ասորեստան, ուստի Սաղմանասարը Իսրայէլի թագաւորութեան վրայ եկաւ, մայրաքաղաք Սամարիան առաւ և իսրայէլացիներին գերի տարաւ Ասորեստան։ Նա իւր երկրից բազմաթիւ հեթանոսներ բերել տուաւ և Սամարիայի քաղաքներում բնակեցրեց։ Երկրի մէջ իսրայէլացիներ ևս ճնացել էին, որոնք Տիրոջը հաւատում էին։ Հեթանոսները խառնուեցան այս ճնացորդ իսրայէլացիների հետ և սրանցից յառաջացաւ Սամարացի կոչուած ժողովուրդը, որը թէև ազգում էր Տիրոջը, բայց միևնոյն ժամանակ կուռք էր պաշտում։

Բ. Երբ Սաղմանասարը Իսրայէլի թագաւորութիւնը կործանեց, Յուդայի երկրում թագաւորում էր Եզեկիան։ Սա կործանեց կռքերի սեղանները և պատուիրեց Աստծուն հաւատալ։ Դեսպաններ ուղարկեց Իսրայէլի և Յուդայի երկրները և հրաւիրում էր ամենին Երուսաղէմ՝ Պասէքը միասին կատարելու։ Մեծ բազմութիւն հաւաքուեց Երուսաղէմում։ Իսրայէլի թագաւորութիւնից ևս մարդիկ էին եկել։ Այստեղ ժողովուրդն ինքն կործանեց Բահաղի սեղանը։

Ասորեստանի նոր թագաւոր Սեններիմը Յուդայի թագաւորութեան վրայ եկաւ, վերցրեց շատ քաղաքներ և պաշարեց Երուսաղէմը։ Քաղաքացիներին ասաց. «Ասորեստանի մեծ թագաւորին լսեցէք և ոչ Եզեկիային. եթէ նրա Աստուածն էր հզօրը, երկիրն ինչու չազատեց Ասորեստա-

նի թագաւորի ձեռից»։ Երբ Եղեկիան այս բանը լսեց, պատառեց հանդերձները, գնաց Տիրոջ տունը և մարդ ուղարկեց Եսայի մարգարէի մօտ ասելու. «Հեթանոսների թագաւորը նախատում է կենդանի Աստծուն, աղօթիր մեզ համար»։ Եսային պատասխան ուղարկեց՝ ասելով. «Մի վախենաք, նա քաղաք չի մտնի, այլ կվառնայ այն ճանապարհով, որով եկել է»։ Սենեքերիմը յաղթուած ետ դարձաւ Նինուէ։

Սրանից ետոյ Յուդայի տանից շատ վատ թագաւորներ եղան։ Յովակիմը, որ Յուդայի թագաւորներից մինն էր, նմանապէս չար ճանապարհով գնաց։ Սրա ժամանակ Բաբելոնի Նաբուզոդոնոսոր թագաւորը պաշարեց Երուսաղէմը։ Թագաւորն անձնատուր եղաւ։ Նաբուզոդոնոսորը վեր առաւ տաճարի և պալատի գանձերը, բոլոր իշխաններին, հիւսներին և դարբիններին գերի տարաւ Բաբելոն։ Նմանապէս թագաւորին իւր ընտանիքով։ Սեդեկիային թագաւոր նշանակեց Յովակիմի տեղ։

Սա ևս Աստծու ճանապարհով չգնաց և ապստամբուեց Նաբուզոդոնոսորի դէմ։ Բաբելոնի թագաւորը երկրորդ անգամ եկաւ Երուսաղէմի վրայ և պաշարեց մէկ և կէս տարի։ Սովը սաստկացաւ քաղաքում։ Սեդեկիան գիշերով փախաւ քաղաքից, բայց թշնամիները բռնեցին և թագաւորի մօտ տարան, որ դատէ։ Սեդեկիայի որդիներին իւր աչքի առաջ մորթեցին. իրան էլ կու-

րացրին. շղթաներով կապեցին և գերի տարան Բաբելոն։

Միևնոյն գիշերը թշնամիները մտան Երուսաղէմ. կոտորեցին բնակիչներին. կողոպտեցին բոլորին. այրեցին Տիրոջ տաճարը. թագաւորի

պալատը և քաղաքի պարիսպները էլ կործանեցին, գետնին հաւասարեցրին։ Մնացած ժողովուրդը և գանձերը Նաբուգոդոնոսորը Բաբելոն տարաւ։ Այսպէս Յուդայի տունը կործանուեցաւ։

62. ԲԱԲԵԻՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՒՃԱՆԸ

Ա. Նաբուգոդոնոսոր թագաւորը հրամայեց իսրայէլացիներից գեղեցիկ և ընդունակ երեխաներ ընտրել, որ թագաւորին ծառայեն։ Սրանց մէջն էր Դանիէլը իւր երեք ընկերներով։ Թագաւորը հրամայեց իւր սեղանից կերակրել նրանց։ Բայց Դանիէլը իւր ընկերներով մերժեց այդ պատիւը և խնդրեց ներքինապետին՝ թոյլ տալու իրենց միայն կանաչեղէնով կերակրուել և ջուր խմել։ Ներքինապետը տասն օր ժամանակ տուաւ նրանց և նկատեց, որ աւելի են գեղեցկանում։ Աստուած Իսրայէլի մանուկներին խաստուԹիւն, իսկ Դանիէլին երազ մեկնելու շնորհ տուաւ։ Թագաւորը Դանիէլին և նրա երեք ընկերներին մեծ պաշտօններ յանձնեց։

Բ. Նաբուգոդոնոսորը մի ոսկէ արձան շինել տուաւ, կանչեց ժողովրդին ու ասաց. «Երբ փողի ձայնը լսէք, ոսկէ արձանին երկրպագուԹիւն տուէք, իսկ ով չի հնազանդի, հնոց կձգուի»։ Փողը փչելուն պէս՝ ամենքն էլ ոսկէ արձանին երկրպագուԹիւն տուին՝ բացի Դանիէլից և իւր երեք

ընկերներից։ Այս լուրը թագաւորին հասցրին։ Նաբուգոդոնոսորը բարկացաւ, կանչել տուաւ երեքին էլ ու ասաց. «ԵԹէ ոսկէ արձանին երկրպագուԹիւն չէք տայ, կրակը կձգեմ ձեզ»։ Նրանք ւերժեցին։

Նաբուգոդոնոսորը բարկացաւ. կապել տուաւ երեքին էլ և շորերով կրակը ձգեց։ Երբ թագաւորը նայեց, զարհուրեց, հարցրեց իւր խորհրդականին և ասաց. «Չէ որ մենք երեք մարդ ձգեցինք կրակը, ես չորսն եմ տեսնում—նրանք ազատ ման են գալիս և անվնաս են»։ Թագաւորը կրակին մօտեցաւ և ասաց. «Ո՛վ դուք Աստծու ծառաներ, դուրս եկէք»։ Նրանք դուրս եկան։ Կրակը նրանց մի մազն էլ չէր այրել։ Նաբուգոդոնոսորն ասաց. «Օրհնեալ է սրանց ազատող Աստուածը, ով այս մարդկանց Աստծուն անպատուէ, խիստ պատիժ կստանանայ»։ Թագաւորը երեքին էլ մեծ իշխանուԹիւն տուաւ։

Գ. Մի անգամ Նաբուգոդոնոսորը երազ տեսաւ։ Երբ զարԹեց, խիստ վախեցաւ։ Կանչել տուաւ բոլոր մոգերին, որ երազը մեկնեն։ Նրանք ասացին Թագաւորին. «Պատմիր մեզ քո երազը», իսկ Թագաւորը պատասխանեց. «Երազը մոռացել եմ, եԹէ դուք չէք գտնի և չէք մեկնի, մահու պատիժ կստանաք»։ Նրանք պատասխանեցին. «Երկրիս վրայ մարդ չկայ, որ Թագաւորի պահանջածն իմանայ»։ Թագաւորը բարկացաւ և

հրամայեց Բաբելոնի իմաստուններին սպանել։ Երբ Դանիէլն այս բանն իմացաւ, խնդրեց իրեն ժամանակ տալ. տուն գնաց և իւր ընկերներէ հետ աղօթում էր։ Գաղտնիքը տեսիլքում յայտնուեց Դանիէլին։ Նա գնաց թագաւորի մօտ և ասաց. «Այն՝ ինչ որ թագաւորը պահանջում է, միայն երկնքի Աստուածը գիտէ և նա յայտնում է, թէ ինչ պիտի լինէ։ Ո՛վ թագաւոր, դու ե-



բազում տեսել ես մի մեծ արձան, որի գլուխը ոսկուց էր, կուրծքը և բազուկները՝ արծաթից, մէջքը՝ պղնձից, սրունքները՝ երկաթից, ոտների մէկ մասը երկաթից, իսկ միւսը՝ կաւից։ Մի քար պոկուեց՝ դիպաւ արձանի ոտներին և կոտրատեց։ Այն ժամանակ փշրուեցան երկաթը, կաւը, պղինձը, արծաթը, ոսկին և անյայտացան, իսկ գլուխ

ուող քարը մեծացաւ լերան չափ և լցրեց երկիրը։ Սա երազն է, այժմ մեկնութիւնը— դու թագաւորների թագաւորն ես. դու ես այն ոսկէ գլուխը. քեզնից ետոյ ուրիշ թագաւորութիւն կգայ, միայն սակաւ կլինի. ետոյ երրորդ թագաւորութիւնը կգայ, սա էլ պղինձն է։ Չորրորդը երկաթի նման ամեն բան կջարդէ։ Այդ ժամանակներում Աստուած երկնքիցը մէկ նոր թագաւորութիւն կուղարկէ և սա կփշրէ եղած բոլոր թագաւորութիւնները—այս թագաւորութիւնը յաւիտեան կտևէ»։ Նաբուգոդոնոսորը երեսի վրայ ընկաւ և ասաց. «Ձեր Աստուածը ամենից մեծն է»։ Թագաւորը Դանիէլին շատ պարգևներ տուաւ և իշխան նշանակեց Բաբելոնի գաւառի վրայ։

ղ. Երբ Հաղդասարը Բաբելոնի վրայ իշխում էր, Պարսից Կիւրոս թագաւորը պաշարեց քաղաքը։ Այդ միջոցին Հաղդասարը խնճոյք ունէր։ Ճաշի ժամանակ հրամայեց, որ Նաբուգոդոնոսորի ձեռով Երուսաղէմից բերուած սրբազան անօթներով ուրախանան։ Բերին, խմում էին և շնորհակալութիւն անում չաստուածներին։ Նոյն ժամին երևեցան մարդու ժաներ, որոնք գրում էին դահլիճի պատի վրայ։ Երբ թագաւորը ձեռը նկատեց, գոյնը փոխուեց։ Թագաւորը մոգերին իւր մօտ կանչեց։ Սրանք եկան, բայց ոչ մէկն էլ չկարողացաւ կարդալ և մեկնել։ Այս բանից թա-

գաւառն աւելի վախեցաւ։ Թագուհին պատմեց իմաստուն Դանիէլի մասին։ Իսկոյն կանչեցին։ Դանիէլն ասաց. «Գրուածքի մէջքն այս է— *Մանէ, Թեկել, փարէս»* այսինքն, չափեցի, կշռեցի և բաժանեցի։ Քո թագաւորութեան օրերը չափած են. քեզ կշռեցին և թեթև գտան. քո թագաւորութիւնը կբաժանուի և պարսիկներին կտրուի»։

Այդ միևնոյն դիշերում Բաղդասար թագաւորն սպանուեց։ Պարսից Կիւրոսն առաւ քաղաքը և բաբելացւոց թագաւորութեանը տիրեց։

Ե. Կիւրոսը իւր թագաւորութեան առաջին տարիներում հրաման հանեց՝ ասելով. «Երկնքի Աստուած Եհովան հրամայեց, որ Երուսաղէմումն իրա համար մի տուն շինեմ։ Ով նրա ժողովուրդն է համարում իրան, թող Երուսաղէմ գնայ և Աստծու տունը նորից շինէ։ Հայրենիք դարձողների թիւը 42,000-ից աւելի էր։ Զօրաբաբէլը առաջնորդում էր նրանց։ Ցնսան և քահանայապետը Երուսաղէմ հասնելուն պէս՝ զոհ մատուցին Աստծուն։ Երկրորդ տարին սկսեցին տաճարը կառուցանել։

Երբ Սամարացիները լսացան, որ գերութիւնից դարձած հրէաները սկսել են Աստծու համար տուն շինել, եկան Զօրաբաբէլի մօտ ու ասացին. «Մենք ևս կամենում ենք Աստծու տան շինութեան մասնակից լինել»։ Իսկ նրանք պատասխանեցին. «Ո՛չ, մենք միայնակ պիտի շինենք»։ Այդ օրից սկսած՝ սամարացիները աշխատում էին խանգարել շինութիւնը։ Բայց Աստուած իսրայէլացիների հետն էր։ Նրանք աւարտեցին տաճարը և մեծ հանդէսով օծեցին։

Մի քանի տարի անց՝ երկրորդ խումբն եկաւ Եզրասի առաջնորդութեամբ։ Նա վերականգնեց աստուածպաշտութեան կարգերը՝ Մովսէսի կանոններին համաձայն և հաւաքեց այն գրուածքները, որոնք Մովսէսից սկսած յայտնի էին։ Ժողովրդից ոմանք հեթանոս կանայք ունէին։ Եզբան Աստծու անունով պատուիրեց նրանց, որ բաժանուեն իրանց կանանցից և բաժանուեցին։

Պարսից թագաւորի տակառապետ Նեէմիան լսեց, որ Երուսաղէմի պարիսպները դեռ ևս կործանուած են—գնաց թագաւորի մօտ և ասաց. «Արձակիր ծառայիդ, որ գնամ և իմ հայրենի քաղաքը շինեմ»։ Թագաւորը թոյլ տուաւ։ Նէեմիան վերադարձաւ հայրենիք և սկսեց քաղաքի պարիսպներն ու դռները շինել։ Երբ այս բանը սամարացիները լսեցին, սկսեցին պատերազմել հրէաների դէմ։ Հրէաների կէսը զէնքը ձեռին պատերազմում էր, իսկ միւս կէսը պարիսպներն էր կառուցանում։ Այս ձևով վերջացրին քաղաքի շրջապատը։ Սրանից ետոյ Նէեմիան ժողովրդին Յուդայի քաղաքներից Երուսաղէմ հաւաքեց։ Եզրասը դուրս բերաւ Մովսէսի օրինաց գիրքը, կանգնեց ժողովրդի առաջ և կար-

դում էր՝ առաւօտից մինչև երեկոյ։ Բոլոր ժո-
ղովուրդը արտասուում էր։ Եզրասն ասաց. «Եկէք

Աստծու հետ նոր դաշը կապենք»։ Նրանք խոս-
տովանեցին իրանց յանցանքը և երդուեցին, որ
Աստծու պատուիրաններից այլ ևս չեն անցնի։

Զ. ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ ԱԶԳԻ ՎԻՃԱԿԸ ՄԻՆՉԵՒ ՔՐԻՍՏՈՍ

63. ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԻՇԽԱ-ՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ

Գերութիւնից վերադարձած իսրայէլացինե-
րը մեացին պարսից իշխանութեան ներքոյ՝ մինչև
այդ տէրութեան անկումը։

Պարսիկներից եաւոյ զօրացան մակեդոնացի-
ները Աղէքսանդր Մեծի օրօք։ Սա նուաճեց ա-
սիական երկիրները և պաշարեց Տիւրոս քաղա-
քը՝ եօթն ամիս շարունակ։ Աղէքսանդր Մակե-
դոնացին հրէաներից և սամարացիներից պահան-
ջեց, որ իրան օգնեն՝ թէ զինուորով և թէ պա-
շարով։ Հրէաների Յաղդոս քահանայապետը մեր-
ժեց այդ պահանջը՝ ասելով որ Պարսից թագա-
ւորին հպատակութեան երդումն է տուել, իսկ
սամարացիները կատարեցին նրա պահանջը։ Ա-
ղէքսանդրն առաւ Տիւրոսը. մտաւ Քանան և 332
թ. Երուսաղէմ հասաւ։ Հրէաները պարսիկներից
օգնութիւն չստանալով՝ ստիպուեցան անձնատուր
լինել—Յաղդոս քահանայապետը մեծ հանդէսով
ընդունեց Աղէքսանդրին։ Ջնայելով որ հրէանե-
րը մերժել էին օգնութիւն տալու, բայց Աղէք-
սանդրը ներեց այս ըզեղ ընդունելութեան հա-
մար և սիրով վարուեց նրանց հետ—իրաւունք
տուաւ իրանց ազգային օրէնքներով կառավար-

ուել։ Այսպէս Փանանը ենթարկուեց մակեդոնական իշխանութեան։

64. ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ

Փանանը նուաճելուց ետոյ՝ Աղէքսանդրը տիրեց Եգիպտոսին և Պարսկաստանին ևս։ Բաբելոնում յանկարծ մեռաւ։ Մահուանից ետոյ նրա չորս զօրավարները թագաւորութիւնը բաժանեցին իրանց մէջ։ Ասորիքը կառավարում էր Սելեւկիոսը, իսկ Եգիպտոսը Պտղոմէոսը։ Բայց որովհետև Պաղեստինը գտանուում էր Ասորիքի և Եգիպտոսի մէջ, ուստի յաճախ վիճում էին, թէ Պաղեստինին ով պիտի տիրէ։ Այս պատճառով էլ վերջինս երբեմն մէկի, երբեմն միւսի իշխանութեանն էր ենթարկուում։ Սկզբում Պաղեստինին տիրեց Պտղոմէոս Լագոսը։

Սելեւկիոս։

Հրէաստանը մօտաւորապէս հարիւր տարի գտնուեց Եգիպտոսի իշխանութեան ներքոյ։ Պտղոմէոս Լագոսը հրէաների հետ շատ մեղմ էր վարվում հարիւր հազար հրէայ գաղթական-

Պտղոմէոս Լագոս

ներ բնակեցրեց Եգիպտոսում՝ մանաւանդ աշխարհահռչակ Աղէքսանդրիա մայրաքաղաքում և նրանց շնորհեց մեծամեծ արտօնութիւններ։ Պտղոմէոս Լագոսի յաջորդ պտղոմէոսները շատ հրէաներ գրաւեցին Եգիպտոս և բնակեցրին նրանց Միջերկրական ծովի ափերում, որտեղից նրանք տարածուեցին շատ հեռաւոր հեթանոս երկիրները։ Այս հանգամանքը շատ նպաստեց ապագայում աւետարանի տարածմանը։

Հրէաները գաղթելով օտար երկիրներ, մոռացան իրանց մայրենի լեզուն և խօսում էին յունարէն։ Մայրենի լեզուից խորթանալով՝ մոռացան նաև հայրենի սովորութիւնները։ Այս վտանգի առաջն առնելու համար Պտղոմէոս Փիլադելփիոսը եօթանասուն գիտնականների ձեռով թարգմանել տուաւ հին ուխտը, որ կոչւում է եօթանասնից թարգմանութիւն (մեր Աահակ Պարթև հայրապետը իւր աշակերտների հետ այս բնագրից հայերէն թարգմանեցին Աստուածաշունչը և այնքան հարազատ, որ կոչւում է թագուհի թարգմանութեանց), որպէսզի հրէաները կարդան և իրանց ազգութիւնը չմոռանան։ Բացի սրանից՝ Երուսաղէմում հիմնեց 70 հոգուց բաղկացած մի բարձ-

Պտղոմէոս Փիլադելփիոս

բագոյն առեան, որի նախագահն էր քահանայապետը։ Այս բարձրագոյն առեանը կոչւում էր Սիւնհոդոս կամ ծերակոյտ։

65. ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ԱՍՈՐԻՔԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՅ

Անտիոքոս Մեծ

203 թ. Քրիստոսից առաջ Ասորիքի Անտիոքոս Մեծը Պաղեստինէն խլեց պաղոմէոսներից։ Սրա օրերով իսրայէլացիները պահպանեցին իրանց ազգային իրաւունքները՝ իսկ սրա յաջորդ Անտիոքոս Եպիփանի ժամանակ սկսեցին հալածանքները։ Թէ խորամանկութիւնով և թէ բռնի միջոցներով աշխատում էին հրէաներին հեռացնել իրանց կրօնից և հայրենի սովորութիւններից։ Անտիոքոս Եպիփանին իրան չար դիտաւորութիւնների մէջ օգնական հանդիսացաւ դաւաճան Յեսու քահանայապետը, որը սիրող իշխանութեան դուր գալու համար՝ իւր հրէական անունը յունականի փոխեց—Յասոն անուանեց իրան և Երուսաղէմում զոհ մատուցեց յունական զոհաբերութեան եղանակով։ Սկսուեցին խռովութեան օրերը, որի ժամանակ Անտիոքոսը իւր

Անտիոքոս Եպիփան

ձեռները արիւնի մէջ թաթախեց։ Նա քարուքանդ արաւ Երուսաղէմը, այրեց, հրդեհեց, 80,000 հրէա կոտորել տուաւ, իսկ 40,000 գերի տարաւ։ Տաճարը անարգ կերպով սրբապղծեց և յունական չաստուած Արամազդի համար սեղան կանգնեց։ Յայտարարեց, որ հրէական կրօն չկայ այլ ևս, իսկ խոստովանողներին մահուան պատժով սպառնաց։ Չնայելով այս խստութիւններին՝ հրէից ազգը դարձեալ ամուր մնաց իւր հաւատին—ծերունի զոյգ Եղիազարի և եօթն որդւոց Շամունէի նահատակութիւնը ցոյց են տալիս, թէ հրէաները որ աստիճան հաւատարիմ էին իրանց ազգային սովորութիւններին (պատմել)։

66. ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

Այս նեղութեան օրերին իսրայէլացիների համար Մակաբայեցւոց քաջ ցեղը փրկիչ հանդիսացաւ։ 167 թ. Մատաթիա քահանայապետը իւր հինգ որդկերանց հետ իրանց շուրջը հաւաքեցին շատ հայրենասէր հրէաներ. խմբեր կազմեցին. յարձակուեցին Ասորիքի տիրապետողների վրայ և մեծամեծ վնասներ հասցրին նրանց։

Մատաթիայի մահուանից ետոյ՝ նրա որդի Յուդան, որ քաջութեան համար մականուն էր ստացել, այսինքն մուրճ մականունն էր ստացել, հօր սկսած պատերազմը շարունակեց։ Սա դուրս արաւ Թըշնամուն Երուսաղէմից և տանեց, որ զոհարե-

բութիւնը ազգային ծէսով կատարուի։ Ի յիշատակ այս յաղթութեան՝ տաճարի անունով առանձին տօն սահմանեց։ Անտիոքոսը չկարողացաւ տանել Յուդայի յաղթութիւնը, ինքն անձամբ պաղեստինի վրայ կամեցաւ յարձակուել, բայց ճանապարհին մեռաւ։ 161 թ. մի անյաջող պատերազմում Յուդա Մակաբէն սպանուեց։ Սրան յաջորդեց իւր եղբայր Յովնաթանը, որը վաղուց արդէն Ասորիքի իշխանութեան կողմից ճանաչուած էր իբրև քահանայապետ և աւատական իշխան։ 143 թ. նրա կեանքի դէմ դաւաճանութիւն եղաւ և մահ ստացաւ։

Սրան յաջորդեց իւր եղբայր Սիմօնը, որի օրօք Մակաբայեցւոց տունը իւր յաղթական բարձրութեան հասաւ—Ասորիքի իշխանութիւնը անկախ ճանաչեց Յուդայի իշխանութիւնը։ Եբրայեցւոց նախատագէտ ժողովուրդը Սիմօնի յաջորդներին ժառանգական քահանայապետ և իշխան նշանակեց։

Սրա որդի Յովհաննէս Հիւրկանոսը նուաճեց Սամարիան, Գալիլէան, Եդոմը և կործանեց Գարիզին լերան վրայ գտնուող սամարացիների տաճարը։ Սրա որդի Արիստաբուղոսը արքայական տիտղոս կրեց։ Յաւօք սրտի՝ սրանից եաոյ Մակաբայեցւոց տան մէջ ներքին խռովութիւններ յառաջացան, որը և պատճառ դարձաւ նրա կործանման։

67. ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ

Արիստաբուղոսը ունէր երկու որդի՝ Հիւրկանոս II և Արիստաբուղոս—որոնք վիճում էին, թէ ով պիտի վարէ իշխանութիւնը։ Այս վէճը որոշելու համար, իբրև դատաւոր, հրաւիրեցին հռովմայէցի քաջ զօրապետ Պոմպէոսին, որ այդ ժամանակներում գտնւում էր Ասորիքում։ Պոմպէոսը Հիւրկանոս II-ի օգտին որոշեց վէճը և առնուանեց նրան իշխան և քահանայապետ 63 թ.։ Այսպէս հրէաների երկիրն ընկաւ հռովմայեցւոց իշխանութեան տակ։

Թոյլ, ակար Հիւրկանոսը իւր իշխանութիւնը յանձնեց եդոմացի խորամանկ Անտիպատրին, որը 47 թ. Օգոստոս կայսրից կառավարիչ նշանակուեց։ Իսկ սրա որդի Հերովդէս մեծը 40 թ. հռովմայեցւոց ծերակուտից թագաւոր նշանակուեց Յուդայի երկրի վրայ։ Սա ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ հետ, որը մակաբայեցւոց տանից էր և սրանով կամեցաւ վիրաւորուած իշխանական տան սիրտն առնել ու այսպէս առ երեսս ապահովել իւր թագաւորութեան խաղաղութիւնը, բայց այս վարմունքը երկար չտևեց—Հերովդէսը կոտորել տուաւ մակաբայեցւոց տան բոլոր ժառանգներին, նոյն իսկ իւր կին Մարիամին և նրանից ծնած երկու որ-

դինեերին։ Եւ որպէսզի հրէա ժողովրդի սիրած առնի՝ 20 թ. ձեռնարկեց մի շքեղ, հոյակապ տաճար կառուցանել, որը իւր յաջորդների օրով միայն վերջացաւ։ Նա մեռաւ սարսափելի ժահով—կենդանի-կենդանի հոտեց մարմինը։

Այս Հերովդէսի ժամանակ ծնաւ Քրիստոսը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ Գրադ. Ճանապարհով ՀԱՅԿ-ԱԿԱ.ՍՍՌ Կ. Մարքսի Անվան Գրադարանի Ն.

Ց Ա Ն Կ

	Երես
1. ա. Աշխարհիս ստեղծագործութիւնը. . . .	7
1. բ. Մարդու ստեղծագործութիւնը	9
2. Դրախտ	11
3. Պատասիրանազանցութիւն	»
4. 5. Կայէն Աբէլ և Ջրհեղեղ . . .	13, 14
6. Բաբելոնի աշտարակաշինութիւնը	17
7. Աստուած կանչում է Աբրահամին . . .	19
8. Աբրահամը և Ղովտը բաժանւում են իրարից .	20
9. Աբրահամն ազատում է Ղովտին	21
10. Աստծու խոստումն Աբրահամին	22
11. Աբրահամը բարեխօսում է Աստծու առաջ . .	23
12. Իսահակի ծնունդը և զոհուիլը	25
13. Սառալի մահը	28
14. Իսահակի ամուսնութիւնը և Աբրահամի մահը .	29
15. Եսաւ և Յակովբ	33
16. Յակովբի խաբեբայութիւնը	34
17. Յակովբի փախուստը	37
18. Յակովբը Լաբանի մօտ	38
19. Յակովբի դարձը Լաբանից	40
20. Եսաւի և Յակովբի հաշտութիւնը	42
21. Յովսէփի եղբայրները և նրա վաճառումն .	43
22. Յովսէփը Պէտափրէսի տանը.	47
23. Յովսէփի բարձրանալը	»
24. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս . .	52
25. Յովսէփը լալտնւում է եղբայրներին . . .	56
26. 27. Յակովբը Եգիպտոսում և Յովսէփի մահը	60, 63
28. Իսրայէլի նեղութիւնները Եգիպտոսում . .	64
29. Մովսէսի ծնունդը և ազատութիւնը . . .	66
30. Մովսէսի փախուստը	68
31. Աստուած կանչում է Մովսէսին	69

32. Եգիպտոսից դուրս գալը 71
33. Կարմիր ծովը անցնելը 75
34. Իսրայէլացիներն անցնում են անապատով . 76
35. Սինայի օրէնստուբիւնը 79
36. 37. Ոսկէ հորթը և լրտեսներ 81, 84
38. Մովսէսի մահը 87
39. Յեսուն նուաճում է Քանանը 89
40. Գեդէոնը որպէս իսրայէլի դատաւոր . . . 94
41. 42. Սամփսոն և Հռութ 96, 100
43. Հեղի և Սամուէլ 104
44. Սաւուղի անհնազանդութիւնը 113
45. Դաւթի թագաւոր ընտրուիլը 114
46. Դաւիթը գալիս է Սաւուղի արքունիքը . . 115
47. Դաւիթ և Գողիաթ 117
48. Սաւուղն ատում, իսկ Յոնաթանը սիրում է Դաւթին 116
49. Դաւթի մեծահոգութիւնը դէպի Սաւուղ . . 125
50. Սաւուղի մահը 127
51. Դաւիթը գառնում է թագաւոր 129
52. Դաւիթը մեղանչում է 133
53. Աբիսողոմ 135
54. Դաւթի մահը 139
55. Սողոմոն թագաւորը 140
56. Սողոմոնի տաճարի շինութիւնը 143
57. Սողոմոնի վատքը, ըկնիլը և մահը . . . 145
58. Յերոբովամ և Ռոբովամ 147
59. 60. Եղիա և Եղիայի մահը 149, 155
61. Իսրաէլի և Յուդայի թագաւորութ. կործանումը 156
62. Բաբելոնի գերութիւնը և վախճանը . . . 160
63. Իսրայէլացիները Մակեդոնական իշխան. ներքոյ 167
64. Իսրայէլացիները Եգիպտական իշխանութ. ներքոյ 168
65. Իսրայէլացիները Ասորիքի իշխանութեան ներքոյ 170
66. Մակաբայեցիք 171
67. Իսրայէլացիները հռոմէական իշխանութ. ներքոյ 173

Հ
Ա-Բ Ռ.
2-843a

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՐՕՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

I. ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ

ՍՏՈՐԻՆ ՇՐՋԱՆ		ԳԻՆՆ Է Ռ.	Կ.	ՁԵՂՔ
1. Ուղեցոյց Հին-Ուխտի մասն Ա.	. .	»	80	25
2. Ուղեցոյց Հին-Ուխտի մասն Բ.	. .	»	85	25
3. Ուղեցոյց Նոր-Ուխտի մասն Ա.	. .	1	»	35
4. Ուղեցոյց Նոր-Ուխտի մասն Բ.	. .	1	5	35
ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆ				
5. Դասագիրք կրօնի հատ. Դ.	. . .	1	50	35
6. Դասագիրք կրօնի հատ. Ե.	. . .	»	50	35
7. Տասն պատուիրան	. . . . .	»	50	35

II. ԱԾԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ

8. Դասատետր կրօնի Ա. տարի.	. .	»	25	25
9. Դասատետր կրօնի Բ. »	. . .	»	25	25
10. Դասատետր կրօնի Գ. »	. . .	»	25	25
11. Դասատետր կրօնի Դ. »	. . .	»	30	25
12. Հին-Ուխտ—ռուսահայ բարբառով	.	»	50	25
13. Հին-Ուխտ—տաճկահայ բարբառով	.	»	40	25
14. Նոր-Ուխտ	. . . . .	»	45	25
15. Գործք առաքելոց	. . . . .	»	45	25

Վաճառվիսում

---

16. Բարոյախօսութիւն (էթիկա) . . . » 50 25

ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ ԿԱՐՕՂ ԵՆ ԴԻՄԵԼ—

1. Ինձ—Սահակ ա. ք՛ն. Սահակեանց. Бебутовская ул. № 20
2. «Գիր», «Գուտեմբերգ» և բոլոր հայ գրավաճառներին.

Գինն է 50 կոպ.

002 7069

ՀՀ Ազգային գրադարան
NL0027069

452

2013

454

APM
2-843a